

Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

12-րդ դասարան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՅԻ
ԲՈԼՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Ե Ր Ե Վ Ա Ն



2 0 1 6

ՀՏԳ 373.167.1:30 (075.3)
ԳՄԳ 60 ց72
Պ 505

Պետրոսյան Ս.
Պ 505 Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական ավագ դպրոցի 12-րդ դասարանի համար /Ս. Պետրոսյան, Ս. Խաչատրյան, - Եր.: Տիգրան Մեծ, 2016. - 144+8 էջ ներդիր:

ՀՏԳ 373.167.1:30 (075.3)
ԳՄԳ 60 ց72

ԱՌԱՋԱԲԱՆ

ՄԻՐԵԼԻ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Դուք արդեն 12-երորդյակներ եք: Դա հրաշալի անվանում է, որը ցույց է տալիս, որ նախորդ 11 տարիների ընթացքում դուք հասցրել եք բավական շատ բան սովորել, ձեռք եք բերել գիտելիքներ ու հմտություններ, մտորել եք մի շարք կարևոր արժեքների շուրջ: Այս ուսումնական տարում դուք պատրաստվում եք վերջին մի ակորդ դնել ձեր դպրոցական ուսումնառության համանվագում, որին կհաջորդեն նոր որոնումներ՝ արդեն այլ հաստատություններում ու այլ մակարդակներում:

Արդ, ձեր առջև «Հասարակագիտություն» համընդգրկուն դասընթացի ամփոփիչ բաղադրիչն է՝ *փիլիսոփայությունը, մեր մեծ իմաստասեր Դավիթ Անհաղթի խոսքերով ասած՝ մարդկային զբաղմունքներից ամենագեղեցիկն ու պատրվականը*: Դուք պետք է դպրոցական նստարանից ծանոթանաք փիլիսոփայության գրավիչ ու անծայրածիր աշխարհի հետ, և ձեզ տրվում է

հնարավորություն փիլիսոփայական հարցերին մոտենալ ավելի համակարգված ձևով՝ որպես ուղեկից ունենալով մարդկության մեծագույն մտածողներից ոմանց: Փիլիսոփայության ուսումնասիրումը ձեզ հնարավորություն կտա ձևավորելու ոչ թե կտրտված, տարերային, այլ համակարգված, համեմատաբար ամբողջական աշխարհայացք, որի վրա, հուսով ենք, կշարունակեք աշխատել նաև հետագայում:

Ենթադրում ենք, որ այս դասընթացի արդյունքում դուք կկարողանաք ձևավորել ստեղծագործական և քննադատական մտածողության հմտություններ, որոնց շնորհիվ ապագայում ինքնուրույն կշփվեք մարդկության իմաստասիրական գանձարանի հետ:

Դասագրքում տեղ են գտել ընթերցման համար նախատեսված տեքստեր, մտորելու և քննարկումների համար հարցեր ու նյութեր, որոշակի գործնական առաջադրանքներ, որոնք ձեզ հնարավորություն կտան զարգացնել ձեր հետագա կյանքում շատ պիտանի մի շարք հմտություններ: Դասագիրքը պարունակում է նաև գեղարվեստական գործերի նմուշներ, որոնց ընկալումը և քննարկվող խնդիրների համատեքստում վերլուծումը կզարգացնեն ձեր թե՛ գեղագիտական ճաշակը, թե՛ խորհրդածությունների խորքը:

Հուսով ենք, որ հասարակագիտության այս տարվա դասընթացը կդառնա ձեր հոգևոր աճի խթաններից մեկը: Մաղթում ենք հաջողություններ և դժվարությունները հաղթահարելու կամք:

Սիրով՝ հեղինակներ:

1. ԻՆՉ Է ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 1. ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ: ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Փիլիսոփայությունն ինչ օգնում է մտածել: Իսկ
ես կարիք ունեմ լավ մտածելու, որպեսզի կարող
անամ սովորել:*

10-ամյա աշակերտ

Յուրաքանչյուր դասընթաց սկսելիս բնական հարց ենք տալիս. ինչո՞ւ է անհրաժեշտ այս առարկան: Իրոք, ինչո՞ւ է անհրաժեշտ փիլիսոփայություն սովորել: Հին հույն փիլիսոփա Արիստոտելի կարծիքով՝ բոլոր մարդիկ մշտապես փիլիսոփայում են: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր համաձայն չեն այդ տեսակետի հետ, միայն փիլիսոփայության միջոցով կարող են հերքել այն: Մի անգամ հին հույն փիլիսոփա Սոկրատեսին հարցրել են՝ արժե՞ արդյոք փիլիսոփայությամբ զբաղվել, ինչին նա պատասխանել է. «Իսկ արժե՞ ընդհանրապես ապրել՝ առանց կյանքից հասկանալու»: Մենք մշտապես փիլիսոփայում ենք, քանի որ ընտրում ենք բարու և չարի միջև, քանի որ որոշումներ ենք կայացնում մեր կյանքի կարևոր հարցերի վերաբերյալ, քանի որ ունենք տեսակետ մեզ շրջապատող իրականության վերաբերյալ: Փիլիսոփայության մասին մենք գիտենք մեր առօրյայից: Օրինակ՝ հաճախ ասում ենք. «Ծանր մի՛ տար, հարցին փիլիսոփայորեն նայիր», «Բավական է փիլիսոփայես, գործով զբաղվիր»:

Առաջադրանք

Տեսրոնում գծե՛ք սիրոն քերված աղյուսակը և մեկնաբանե՛ք արդարահայտությունների իմաստն առօրյայում:

Արտահայտություն	Մեկնաբանություն
«Ծանր մի՛ տար, հարցին փիլիսոփայորեն նայիր»	
«Բավական է փիլիսոփայես, գործով զբաղվիր»	

Բայց շատ հաճախ մենք փիլիսոփայում ենք տարերայնորեն՝ առաջնորդվելով ողջամտությամբ կամ կենսափորձով, ինչը ոչ միշտ է արդարացված: Փիլիսոփայություն սովորելը մեզ հնարավորություն է տալիս ծանոթանալ իմաստունների տեսակետներին կյանքի, հասարակության զարգացման վերաբերյալ, ունենալ մեր դիրքորոշումն այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են ճակատագիրը, երջանկությունը, կյանքը, սերը, գիտելիքը և այլն: Փիլիսոփայությունն օգնում է մարդուն արթնանալ: Արթնանալ, քանի որ շատ մարդիկ, տարված լինելով առօրեական հոգսերով, ձանձրույթ են զգում և անտարբեր են գտնվում կյանքի շատ հարցերի հանդեպ: «**Փիլիսոփայությունն ինձ օգնեց կյանքի ձանձրույթը հաղթահարելու գործում**», – խոստովանում է ռուս փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը: Հայտնի կարծիք կա, որ փիլիսոփայությունը սկսում է զարմանքից: Քանի դեռ մենք զարմանում ենք, ուրեմն տեղ կա փիլիսոփայելու և ձանձրույթից խուսափելու համար:



Պյութագորաս

Ովքե՞ր են փիլիսոփաները և ինչո՞վ են զբաղված: Հին հույն գիտնական Պյութագորասը մարդկության պատմության մեջ առաջիններից էր, ով իր տեսակետները կյանքի մասին կոչեց փիլիսոփայություն:

Ըստ ավանդության, երբ նրան հարցնում են, թե ինչ է փիլիսոփայությունը, Պյութագորասը պատասխանում է. «*Մարդու կյանքը կարելի է համեմատել շուկայի և օլիմպիական խաղերի հետ: Շուկայում կան վաճառողներ և գնորդներ, ովքեր չգտնում են շահավետ վաճառքի ու գնումների: Օլիմպիական խաղերում էլ կան մասնակիցներ, ովքեր չգտնում են փառքի և ճանաչման: Այդպես է նաև կյանքում: Մարդկանց մեծ մասը հոգ է տանում հարստություն և փառք չեռք բերելու մասին: Եվ միայն մի փոքր խումբ մարդիկ չեն մասնակցում այդ մրցավազքին: Նրանք ուսումնասիրում են իրերի էությունը և ամենից առավել սիրում են ճշմարտության իմացությունը*»: Հենց այդ մարդկանց էլ Պյութագորասը համարում էր փիլիսոփաներ:

«**Փիլիսոփայություն**» բառը հունարենից թարգմանաբար նշանակում է **իմաստասիրություն** (հունարեն *ֆիլեոս` սիրում եմ, սոֆիա` իմաստություն*): Փիլիսոփայությունը հնագույն գիտություն է, բայց միևնույն ժամանակ շատ երիտասարդ է, քանի որ փիլիսոփայական գաղափարները երբեք չեն հնանում: Կարող է հնանալ տեղեկությունը, նույնիսկ գիտելիքը, բայց իմաստությունը երբեք չի հնանում: Իմաստությունն ապրելու արվեստ է, այն հնարավորություն է տալիս զարմանալ շրջապատով, աշխարհը տեսնել այնպիսին, ինչպիսին ոչ ոք չի տեսնում:

Ընթերցե՛ք երկխոսությունը

Արտահայտե՛ք ձեր դիրքորոշումը երկխոսության վերաբերյալ:

- Մի անգամ իմաստունին հարցնում են.
 - Ո՞վ է ավելի լավը՝ իմաստունը, թե՞ հարուստը:
 - Իմաստունը, – պատասխանում է նա:
 - Այդ դեպքում ինչո՞ւ են հարուստները հազվադեպ այցելում իմաստուններին:
 - Քանի որ իմաստունը գիտակցում է հարստության արժեքը, մինչդեռ հարուստը չի գիտակցում իմաստության արժեքը:

Փիլիսոփայության արժեքի ուշագրավ մեկնաբանություն է տվել հին հույն փիլիսոփա Պլատոնն իր «Պետություն» աշխատության մեջ: Նա մարդկանց համեմատում է քարանձավում շոթայվածների հետ, ովքեր դեմքով նայում են դեպի քարանձավի պատը և հնարավորություն չունեն շարժվելու և շրջվելու: Նրանց հետևում քարանձավի մուտքն է և կրակ է վառվում: Շոթայվածների հետևում իրական մարդիկ են ու առարկաներ, որոնց շոթայվածները տեսնում են պատի վրա արտացոլվող ստվերների միջոցով: Պլատոնի համոզմամբ՝



մարդիկ աշխարհն ընկալում են ստվերներով և կարծում են, որ հենց դա է իրականությունը: Պատկերացնենք, որ շոթայվածներից մեկն ազատ է արձակվում և դուրս է գալիս քարանձավից: Առաջին պահին արևի լույսը, իրականությունը նրան կարող են անտանելի թվալ: Բայց եթե մարդը կարողանա դիմանալ ու հարմարվել, ապա կունենա կյանքի իրական պատկերը՝ ի տարբերություն շոթայվածների, ովքեր կշարունակեն

աշխարհն ընկալել ստվերներով: Պլատոնի համոզմամբ՝ փիլիսոփայությունը հնարավորություն է տալիս մարդուն աշխարհն ընկալել իրականում, այլ ոչ թե ստվերներով:

Ի՞նչ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՏԻՐՈՒԹՅԱՄԵ Է ԶԲԱՂՎՈՒՄ ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Փիլիսոփայական հիմնահարցերն անձանոթ չեն ձեզ: Դրանց մասին դուք խոսել եք «Հասարակագիտություն» առարկայի 8-րդ (մարդ, տրամաբանություն, արժեքներ) և 10-րդ (գեղագիտություն, բարոյագիտություն) դասարանների դասընթացներում:

Ըստ գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտի՝ փիլիսոփայությունը զբաղվում է հետևյալ հիմնահարցերի ուսումնասիրությամբ:

1. Ի՞նչ կարող եմ իմանալ:
2. Ի՞նչ պետք է անեմ:
3. Ինչի՞ վրա կարող եմ հուսալ:
4. Ո՞վ է մարդը:

Հարցեր մտորելու համար

Տանը մտորե՛ք ստորև բերվող մտքերի շուրջ և հաջորդ դասին արտահայտե՛ք ձեր տեսակետը մի քանիսի շուրջ:

1. Դուք մի՞շտ եք մտածում, թե՞ երբեմն:
2. Դուք կարո՞ղ եք մտածել առանց ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մասին մտածելու:
3. Արդյո՞ք դուք մտածում եք բառերով:
4. Կարո՞ղ եք դուք ունենալ մտքեր՝ առանց մտածելու:
5. Կարո՞ղ եք մտածել՝ առանց մտքեր ունենալու:
6. Կարո՞ղ եք միաժամանակ մեկից ավելի բաների մասին մտածել:
7. Կարո՞ղ է միտքը բաժանվել այնպես, ինչպես կարկանդակը:
8. Կարո՞ղ են մտքերը լինել գեղեցիկ:
9. Կարո՞ղ են մտքերը լինել գեղեցիկ, եթե դրանք ճշմարիտ չեն:

Առաջադրանք

Խնդրե՛ք ձեր շրջապատի մարդկանց ներկայացնել, թե ինչ է փիլիսոփայությունը: Գրառե՛ք առավել հետաքրքիր տեսակետները և ներկայացրե՛ք դասարանում:

Հետաքրքրաշարժ պատմություն



Ավելի շատ լսել, քան խոսել

Հին հույն փիլիսոփա Ջենոնը չէր սիրում շատ խոսել և տանել չէր կարողանում դատարկախոսներին: Մի առիթով նա հանդիպում է մի երիտասարդի, ով անվերջ խոսում է: Ի վերջո Ջենոնը ընդհատում է նրան և ասում.

- Դուք թերևս մինչև հիմա չե՛ք նկատել, որ մեզ տրված է երկու ականջ և մեկ բերան, որպեսզի շատ լսենք և քիչ խոսենք:

ԴԱՍ 2. ԴԻՅԱԲԱՆԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ

Անկախ աշխարհում տեղի ունեցող փոփոխություններից, գոյություն ունեն հավերժական հարցեր, որոնք մշտապես հուզել են մարդուն:

- ◆ Ինչո՞ւ է աշխարհը այսպիսին, և ո՞րն է իմ դերն աշխարհում:
- ◆ Ի՞նչ է տեղի ունենում մեր շրջապատում:
- ◆ Ի՞նչ են անում մեզ շրջապատող մարդիկ:
- ◆ Ի՞նչ են մտածում, ի՞նչ են խոսում, ի՞նչ արարքներ են գործում:
- ◆ Ի՞նչ են ես ուզում կյանքից, ի՞նչ պետք է անեմ:

Այս և նմանատիպ այլ հարցերի պատասխաններն անխուսափելի են դարձնում մարդու աշխարհայացքի ձևավորումը:



Իմանուիլ Կանտ

«**Աշխարհայացք**» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է գերմանացի փիլիսոփա Իմանուիլ Կանտը: Ի՞նչ է աշխարհայացքը: Ամենապարզ սահմանմամբ՝ **աշխարհայացքը մարդու հայացքներն են աշխարհի և կյանքի իմաստի վերաբերյալ**: Մարդ-աշխարհի հարաբերությունը աշխարհայացքի հիմքն է:

Աշխարհայացքի տարրերն են *ընդհանրացված գիտելիքները, համոզմունքները, արժեքները, իդեալները*: Հակիրճ ներկայացնենք յուրաքանչյուրը:

1. Ընդհանրացված գիտելիքներ: Աշխարհայացքի տեղեկատվական հիմքը գիտելիքներն են: Որքան շատ գիտելիքներ ունի անհատը, խումբը, ազգը, այնքան ավելի ամուր հիմքեր ունի աշխարհայացքը: Կարևոր է նշել, որ աշխարհայացք են համարվում ոչ բոլոր գիտելիքները, այլ միայն նրանք, որոնք կարևոր են մարդու, խմբի համար, որոնք բացահայտում են մարդ-աշխարհի հարաբերությունները:

2. Համոզմունքներ: Համոզմունքները այն միջոցներն են, որոնց օգնությամբ մենք ընդունում կամ մերժում ենք աշխարհայացքային գիտելիքները: Համոզմունքները մեր հիմնարար դիրքորոշումներն են, վստահությունն են մեր սկզբունքների, գաղափարների, հայացքների արդարացիության և ճշմարտացիության հարցում:

3. Արժեքներ: Արժեքները մեր դրական կամ ժխտական վերաբերմունքն են շրջապատող աշխարհի երևույթների նկատմամբ: Արժեքները մարդը յուրացնում է կյանքի ընթացքում: Արժեքները տարբերվում են գիտելիքներից: Գիտելիքների հիմնական իմաստը ճշմարիտ կամ սխալ լինելն է: Արժեքներն իրենց մեջ ներառում են մարդկանց վերաբերմունքը շրջապատող աշխարհին:

4. Իդեալներ: Իդեալները շատ կարևոր են մարդու կյանքում: Առանց դրանց կյանքը նման է առանց կողմնորոշիչների ապրելու: Իդեալները ապագայի մասին մեր պատկերացումներն են, ապագայի մեր երազած պատկերը:


Գոյություն ունեն աշխարհայացքի դասակարգման մի քանի չափանիշներ: **Ընդհանրության չափանիշով** աշխարհայացքը լինում է անհատական, խմբային և համամարդկային: Ժամանակակից հասարակությունում մարդն ունի ազատ մտածելու և գործելու ավելի մեծ հնարավորություններ: Սա շատ բարենպաստ է աշխարհայացք ձևավորելու և այն արտահայտելու առումներով: Եթե նախկինում մարդը ստիպված էր լինել խմբային և համամարդկային աշխարհայացքների պասիվ կրողը, ապա այսօրվա կյանքը մարդուն հնարավորություն է տալիս ձևակերպել իր անհատական աշխարհայացքը: Եթե նախկինում մարդը հանդես էր գալիս որպես ուրիշների ստեղծած գաղափարների սպառող, ապա այսօր բոլոր հնարավորությունները կան, որպեսզի մարդը, սպառելուց զատ, ստեղծի նաև սեփական աշխարհայացքը:

Պատմական զարգացման չափանիշով աշխարհայացքը լինում է անտիկ, միջնադարյան, նոր շրջանի, ժամանակակից: **Տեսական հասունության չափանիշով**՝ առօրեական և տեսական:

Մարդու աշխարհայացքը կարող է ձևավորվել երկու եղանակով՝ հախումն և նպատակաուղղված: Յուրաքանչյուր մարդ իր սեփական կյանքի փորձի հիման վրա ձևավորում է աշխարհայացք: Այդպիսին է **առօրեական աշխարհայացքը**: Այն հաճախ կոչում ենք ողջախոհություն:

Մյուս կողմից մասնագետները (փիլիսոփաներ, աստվածաբաններ) նպատակային ձևավորում են համակարգված աշխարհայացք և փորձում այն տարածել մարդկանց շրջանում: Կարելի է առանձնացնել աշխարհայացքի երեք տեսակ՝ դիցաբանական, կրոնական և փիլիսոփայական:

Աշխարհայացքի տեսակները



Դիցաբանական աշխարհայացքը միավորում է բնականն ու գերբնականը, իրականն ու ոչ իրականը: Բոլոր ժողովուրդների մոտ պատմության վաղ շրջանում աշխարհայացքը եղել է դիցաբանական: Նախնադարյան մարդն իրեն չէր տարբերակում շրջապատող միջավայրից: Քանի որ վերացական մտածողությունը զարգացած չէր, մարդը չէր կարողանում տարբերակել բնականն ու գերբնականը: Դիցաբանական աշխարհայացքը բավարար չէ ժամանակակից մարդու

համար: Ըստ էության, այն այսօր տարրալուծվել է և հիմնականում արտահայտվում է բարոյականության միջոցով:

Կրոնական աշխարհայացքը ձևավորվել է դիցաբանական աշխարհայացքի հիման վրա: Ի տարբերություն դիցաբանական աշխարհայացքի՝ կրոնական աշխարհայացքում իրականությունը բաժանված է երկու աշխարհների՝ բնական (երկրային) և գերբնական (երկնային): Կրոնական աշխարհայացքում առկա է նաև գիտելիք և հավատ զանազանումը: Գիտելիքն առնչվում է բնական աշխարհին, հավատը՝ երկնային: Ի տարբերություն դիցաբանության՝ կրոնը համարվում է աշխարհայացքի ավելի հասուն մակարդակ: Չնայած ժամանակակից գիտության զարգացմանը, ինչը կարծես հանգեցնում է կրոնի աշխարհայացքային դերի նվազեցմանը, կրոնն այսօր էլ շարունակում է մնալ որպես ազդեցիկ ուժ:

Փիլիսոփայական աշխարհայացքը ի հայտ է գալիս, երբ մարդը փորձում է հասկանալ, թե ինչպիսին է աշխարհը, ով է ինքը, ինչպես ապրել: Փիլիսոփայական աշխարհայացքը բնության, հասարակության և մարդու մասին հայացքների ամբողջություն է:

ՀԱՄԵԱՏԱԿԱՆ



*Ռաֆայել Սանտի.
Տիրամայրը մանկան հետ*

Փիլիսոփայական և կրոնական աշխարհայացքների միջև կա ընդհանրություն: Երկուսն էլ փորձում են տալ աշխարհի պատկերը, մեկնաբանել մարդու կյանքի իմաստը:

Ի տարբերություն դիցաբանության և կրոնի՝ փիլիսոփայական աշխարհայացքը հիմնվում է գիտական գիտելիքի վրա: Փիլիսոփայությունը լուրջ ազդեցություն է ունենում գիտությունների զարգացման վրա: Մասնավորապես, գիտություններում կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, որոնք երկար ժամանակ եղել են փիլիսոփաների քննարկման թեմաներ: Այդուհանդերձ, փիլիսոփայության և գիտության միջև կան տարբերություններ: Գիտությունը մշտապես ձգտում է համընդհանուր և միանշանակ լուծումների: Փիլիսոփայությունը ուսումնասիրում է այնպիսի խնդիրներ, որոնք շատ հաճախ չունեն վերջնական ու միանշանակ

պատասխաններ: Սա փիլիսոփայության առանձնահատկություններից ու հարստություններից մեկն է: Վերջնական ու միանշանակ լուծումների բացակայությունը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն քննարկել փիլիսոփայական հիմնախնդիրները՝ ապահովելով մոտեցումների բազմազանություն:

ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԸ

Փիլիսոփայական գիտելիքը ժամանակի ընթացքում զարգանում է, ինչի արդյունքում ի հայտ են գալիս նաև աշխարհայացքային նոր թեմաներ: Վերջին հարյուրամյակի ընթացքում փիլիսոփայության մեջ կարևորվեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են մարդաբանական փիլիսոփայությունը, տեխնիկայի փիլիսոփայությունը, գլոբալիստիկան, մշակույթի փիլիսոփայությունը:

Փիլիսոփայական աշխարհայացքի դերն այսօր հատկապես կարևորվում է: Եթե նախկինում մարդիկ մեծ մասամբ որոշակի առաջնորդների, մարդկանց հետևից էին գնում, ապա այսօր առաջնային է դառնում գաղափարներ ունենալն ու դրանց հետևից գնալը: Համոզմունքներ, արժեքներ, իդեալներ և դրանց հիման վրա աշխարհայացք կառուցող մարդն այսօր հասարակական զարգացման նախապայմաններից է:

Առաջադրանք

1. Համեմատե՛ք դիցաբանական, կրոնական և փիլիսոփայական աշխարհայացքները՝ օգտագործելով Վենի գծապատկերը:

2. Կարճ շարադրության միջոցով հիմնավորե՛ք, թե ինչու է կարևոր աշխարհայացք ունենալը:

3. Փորձե՛ք շեղակերպել ձեր աշխարհայացքի փարբերը՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

- ◆ ինչպիսի՞ն է ժամանակակից աշխարհը,
- ◆ ի՞նչն է կարևոր այսօրվա մարդկանց համար,
- ◆ ի՞նչն է պետք փոխել մեզ շրջապատող միջավայրում և ինչո՞ւ:

Հետաքրքրաշարժ պատմություն

Երկու ավանակ մեկ տան մեջ

Մի մարդ հին հույն փիլիսոփա Արիստիպին խնդրում է սովորեցնել իր որդուն: Փիլիսոփան համաձայնում է և ուսման համար պահանջում 50 դրահմա վճար:

- Այդ գումարով ես կարող եմ ավանակ գնել, – ասում է տղայի հայրը:
- Գնի՛ր: Այդ դեպքում դու կունենաս երկու ավանակ, – պատասխանում է փիլիսոփան:

2. ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԻՄԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՍ 3. ԻՆՉՆ Է ԻՐԱԿԱՆ



Խմբային աշխատանք

Ձեր տրամադրության տակ ունեք հետևյալ առարկաները.

- ◆ արհեստական ծաղիկներ,
- ◆ խաղալիք ավտոմեքենա,
- ◆ հեքիաթների գիրք,
- ◆ բնական հյութի տուփ, որի մեջ ջուր է լցված,
- ◆ թխվածք, որն արջուկի տեսք ունի,
- ◆ թղթե ինքնաթիռ,
- ◆ ձեր դասարանի աշակերտների խմբային լուսանկարը,
- ◆ փոքրիկ հայելի:

Յուրաքանչյուր առարկայի համար ընտրե՛ք ստորև նշված տարբերակներից մեկը: Հիմնավորե՛ք ձեր ընտրությունը:

1. Առարկա, որը թվում է իրական, բայց իրական չէ:
2. Առարկա, որը ո՛ր թվում է իրական, ո՛ր իրական է:
3. Առարկա, որը չի թվում իրական, բայց իրական է:
4. Առարկա, որը ոչ թվում է իրական, ոչ էլ իրական է:

Ստորև նշվում են մի քանի գոյաբանական հարցեր, որոնք հետաքրքրում են փիլիսոփաներին:

- Արդյո՞ք սովերեններն իրական են:
- Արդյո՞ք ձայներն իրական են:
- Արդյո՞ք ժամանակն իրական է:
- Արդյո՞ք տարածությունն իրական է:
- Արդյո՞ք պատճառն իրական է:
- Արդյո՞ք իրադարձություններն իրական են:
- Արդյո՞ք նյութական առարկաներն իրական են:
- Արդյո՞ք թվերն իրական են:
- Արդյո՞ք մտքերն իրական են:
- Արդյո՞ք մարդիկ իրական են:
- Արդյո՞ք երկրներն իրական են:

- Արդյո՞ք մտացածին կերպարներն իրական են:
- Արդյո՞ք Աստված իրական է:
- Արդյո՞ք կան այլ մոլորակներ:
- Արդյո՞ք իրական բաներ կան:

Երբևէ մտածե՞լ եք այն հարցի շուրջ, որ որոշ առարկաներ ավելի իրական են, քան մյուսները: Ընթերցե՛ք ստորև բերվող հարցերը և պատասխանե՛ք «այո» կամ «ոչ»:

1. Արդյո՞ք թիվն ավելի իրական է, քան մարդը:
2. Արդյո՞ք մարդն ավելի իրական է, քան շունը:
3. Արդյո՞ք շունն ավելի իրական է, քան բույսը:
4. Արդյո՞ք բույսն ավելի իրական է, քան քարը:
5. Արդյո՞ք քարն ավելի իրական է, քան ձյան փաթիլը:
6. Արդյո՞ք ձյան փաթիլն ավելի իրական է, քան արտոնը:

Եթե դուք բոլոր հարցերին պատասխանել եք «ոչ», ապա դուք համաձայն եք գոյաբանական այն տեսակետին, որ բոլոր իրական առարկաներն իրական են նույն ձևով: Չկան ավելի կամ պակաս իրական առարկաներ: Կա իրականություն կամ ոչինչ:

Բայց գոյաբանության մեջ կա տեսակետ այն մասին, որ որոշ առարկաներ ավելի իրական են: Օրինակ՝ թվերն ավելի իրական են, քան մարդիկ, քանի որ թվերը հավերժ են, իսկ մարդիկ՝ անցողիկ:

Ընթերցե՛ք հեղուկայ երկխոսությունը.

Անուշ – Ես ուզում եմ իմանալ, թե ինչից են պատրաստված առարկաները:

Դավիթ – Դա շատ պարզ է: Ամեն ինչ պատրաստված է մետաղից, փայտից կամ պլաստիկից, այսինքն՝ նյութից:

Անուշ – Իսկ նյութն ինչի՞ց է պատրաստված:

Դավիթ – Ատոմի նման փոքր մասնիկներից:

Անուշ – Իսկ ատոմներն ինչի՞ց են պատրաստված:

Դավիթ – Ատոմից ավելի փոքր մասնիկներից:

Անուշ – Շատ լավ: Ընդունենք, որ դու ճիշտ ես, և ամեն ինչ պատրաստված է ատոմից փոքր մասնիկներից: Իսկ այդ փոքր մասնիկներն ինչի՞ց են պատրաստված:

Դավիթ – Նման շատ փոքր մասնիկներից:

Անուշ – Իսկ այդ փոքր մասնիկները նույն մասնիկների՞ց են պատրաստված, թե՞ տարբեր:

Դավիթ – Չգիտեմ: Բայց ինչ-որ տեղ վերջանում է: Պետք է լինի այնպիսի փոքր մասնիկ, որից փոքրը գոյություն չունենա:

 *Արդյո՞ք այս բանավեճն անվերջ շարունակվելու է: Ո՞ւմ հետք եք դուք համաձայն:*



Փիլիսոփայության կարևոր հարցերից մեկը հետևյալն է. «Ի՞նչն է իրական, ի՞նչը գոյություն ունի»: Յուրաքանչյուր մտածող մարդ ունի իր պատկերացումներն այն մասին, թե ինչն է իրական, ինչը՝ ոչ իրական: Փիլիսոփայության հիմնական խնդիրներից մեկը իրականության մասին մտածելն է: Բայց իրականության մասին մտածելը փոխկապակցված է այն հարցի հետ, թե ինչ գիտենք մենք: Փիլիսոփայության մեջ մենք ոչ թե պետք է կանխագուշակենք, թե ինչն է իրական, ինչը՝ ոչ, այլ պետք է **գիտենանք**, թե ինչն է իրական: Օրինակ՝ արդյո՞ք թասմանյան վագրերը գոյություն ունեն: Մենք ունենք բազմաթիվ ապացույցներ (լուսանկարներ, ֆիլմեր, հիշատակումներ), որ ժամանակին թասմանյան վագրերը գոյություն են ունեցել: Բայց դժվար է ասել, թե արդյո՞ք նրանք պահպանվել են:

Որքան էլ «Ի՞նչն է իրական» և «Ինչպե՞ս գիտենք» հարցերը փոխկապակցված են, այդուհանդերձ, դրանք ուսումնասիրում են փիլիսոփայության երկու տարբեր ոլորտներ: «Ի՞նչն է իրական» հարցին պատասխանում է **գոյաբանությունը** կամ **մետաֆիզիկան**, իսկ «Ինչպե՞ս գիտենք» հարցին՝ **իմացաբանությունը**: Վերջինիս մասին կխոսենք հաջորդ դասին:

«**Գոյաբանություն**» բառն առաջացել է հունարեն *ontos* և *logos* տերմիններից: *Ontos* նշանակում է կեցություն, գոյություն, իսկ *logos*՝ ուսումնասիրություն: Այսպիսով՝ գոյաբանությունը գոյության, կեցության ուսումնասիրությունն է: «**Մետաֆիզիկա**» բառը նույնպես ունի հունական ծագում: Առաջացել է *meta* և *physika* բառերից: *Meta* նշանակում է այն կողմ, անդին, իսկ *physika*՝ բնություն:

Մարդն ապրում է մի աշխարհում, որը լի է տարբեր առարկաներով ու երևույթներով: Դրանք առաջանում և ոչնչանում են: Բայց փոփոխությունների նման բազմազանության պայմաններում, այնուամենայնիվ, ինչ-որ բան մնում է և անփոփոխ է: Եթե չլինեք մնալունն ու անփոփոխը, աշխարհը քաոս կդառնար: Փիլիսոփաները մշտապես փնտրել են այն հիմքը, որը հնարավորություն է տալիս բոլոր իրերին գոյություն ունենալ և ոչնչանալ: Այդ հիմքը փիլիսոփայության մեջ կոչվում է կեցություն: Փիլիսոփաները շարունակաբար քննարկել են այն հարցը, թե ինչպիսին է այդ հիմքը՝ նյութակա՞ն, թե՞ հոգևոր, մատերիակա՞ն, թե՞ իդեալական: Կեցությունը կարող է տարբեր ձևերով արտահայտվել: Այն կարող է լինել մատերիական և իդեալական: Մատերիական կեցությունն ունի տարածաժամանակային բնութագրիչներ, իդեալական կեցությունը չունի տարածաժամանակային բնութագրիչներ, այն անփոփոխ է և հավերժ:

Օրինակ՝ եթե իմ ձեռքին գրիչ է, ապա ես այն տեսնում եմ, շոշափում եմ, հետևաբար՝ այն ունի տարածաժամանակային չափում և մատերիական կեցություն է: Եթե ես այդ գրիչը դնեմ դարակի մեջ, ապա տվյալ առարկան այլևս ինձ համար տեսանելի չի լինի, բայց դրա պատկերը կպահպանվի իմ հիշողության մեջ: Այդ դեպքում պատկերը չի ունենա տարածաժամանակային չափում: Հետևաբար՝ այն կարելի է համարել իդեալական կեցության օբյեկտ:

Սովորաբար, երբ մենք մտածում ենք կեցության մասին, մեզ ավելի շատ հետաքրքրում են ընդհանուր երևույթները, քան մասնավոր առարկաները: Օրինակ՝ մեզ կարող է հետաքրքրել այն հարցը, թե կա արդյոք Էվերեստից ավելի բարձր գագաթ: Այս հարցն ինքնին հետաքրքիր է, բայց այն փիլիսոփայական չէ, քանի որ մասնավոր է: Փիլիսոփայությունն ուսումնասիրում է իրականության մասին ավելի ընդհանրական հարցեր:

Գոյաբանական հարցերին անդրադարձել են դեռևս հին հույն փիլիսոփաները: Հույն փիլիսոփա Թալեսը կարծում էր, որ իրականության հիմքում ջուրն է: Անաքսիմենեսի կարծիքով՝ իրականության հիմքում օդն է: Իսկ Էմպեդոկլեսը համարում էր, որ աշխարհի նախասկիզբը չորս տարրերն են՝ կրակ, օդ, ջուր և հող:



Թալես

Փորձե՛ք հիմնավորել այն կարծիքը, թե ինչու վերոնշյալ չորս տարրերը կարող են դիտարկվել որպես աշխարհի նախասկիզբ:

ԱՍՏՎԱԾ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քննարկենք այն հարցերը, որոնք բարձրացնում է կրոնը իրականության վերաբերյալ: Մի շարք փիլիսոփաներ այն տեսակետն են առաջադրել, որ Աստված և իրականությունը մեկն են: Նրանք ասում են, որ Աստված իրական է, և իրականությունն էլ Աստված է: Պատմության մեջ այս տեսությունը հայտնի է **պանթեիզմ** անունով: Պան հունարենից թարգմանաբար նշանակում է բոլոր, ամեն, թեոս՝ Աստված: Այսպիսով՝ պանթեիզմը նույնականացնում է Աստծուն և իրականությունը:

Մեծ մասամբ կրոնները սահմանազատում են Աստծուն և իրականությունը: Առավել տարածված է այն տեսակետը, որ Աստված ստեղծել է երկիրը: Այս մոտեցումը կոչվում է **մոնոթեիզմ**: Այն ենթադրում է, որ կա երկու կարգի իրականություն. Աստված որպես իրականություն և Աստծո կողմից արարված իրականություն և հարաբերություն այս երկու իրականության միջև: Այս մոտեցումը բնորոշ է մի քանի կրոնների՝ քրիստոնեություն, հուդաիզմ, իսլամ և այլն:

Մոնոթեիզմի վերաբերյալ կարող է լինել երեք դիրքորոշում: Մենք կարող ենք համաձայնել, կարող ենք չհամաձայնել, կարող ենք նաև ասել, որ մենք չզիտենք՝ համաձայն ենք, թե ոչ: Նրանք, ովքեր համաձայն են, որ կա մեկ Աստված, համարվում են թեիստներ, նրանք, ովքեր համաձայն չեն, որ Աստված կա, կոչվում են աթեիստներ: Նրանք, ովքեր չզիտեն՝ համաձայն են, թե ոչ, համարվում են ագնոստիկներ: Ագնոստիկ լինել նշանակում է ընդունել, որ չզիտենք՝ ճիշտ է մոնոթեիզմը, թե՞ սխալ:

Պատ 4-5. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՃԱՆԱԶՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ

Ինչ է գիտելիքը

Ի՞նչ գիտենք մենք: Իհարկե, շատ բան: Բայց արդյո՞ք մտածել ենք այն հարցի շուրջ, թե ինչպես ենք գիտելիք ձեռք բերում: Կամ մտածե՞լ ենք այն մասին՝ արդյոք մեր գիտելիքը համապատասխանում է իրականությանը:

Հաճախ մենք ասում ենք. «Ես գիտեմ, որ ճիշտ եմ»: Ինչի՞ հիման վրա ենք անում այդ պնդումը: Քանի որ մեզ այդպե՞ս է թվում, թե՞ կա այլ պատճառ: Այս հարցը հազարամյակներ շարունակ հետաքրքրել է փիլիսոփաներին:

Ընթերցե՛ք ստորև բերվող հարցը և ընկրե՛ք պատասխաններից մեկը:

1. **Պուք գիտեք, որ 2+2=4: Որտեղի՞ց գիտեք, որ դա ճիշտ է:**

ա. Երբ ես նայում եմ, ինձ թվում է, որ դա ճիշտ է:

բ. Մաթեմատիկայից եմ սովորել:

գ. Ես պարզել եմ, որ դա կարելի է ապացուցել՝ օգտագործելով համընդհանուր մաթեմատիկական սկզբունքները:

2. **Քո ձեռքին կարմիր խնձոր կա: Որտեղի՞ց գիտես, որ այն կարմիր է:**

ա. Որովհետև ես տեսնում եմ դրա կարմրությունը:

բ. Որովհետև բոլոր մարդիկ այդ գույնը կոչում են կարմիր:

գ. Որովհետև ես տեսնում եմ, որ այն կարմիր է, և այն իրոք կարմիր է:

Եթե դուք երկու հարցերին պատասխանելիս ընտրել եք Գ- տարբերակը, ապա դուք մտածում եք այնպես, ինչպես գերմանացի փիլիսոփա Կանտը: Գիտելիքը Կանտի համար սուբյեկտիվի և օբյեկտիվի համադրությունն է: Առաջին օրինակում սուբյեկտիվը «ես պարզել եմ», իսկ օբյեկտիվը՝ «դա կարելի է ապացուցել՝ օգտագործելով համընդհանուր մաթեմատիկական սկզբունքները» հատվածներն են: Երկրորդ օրինակում սուբյեկտիվը «ես տեսնում եմ, որ այն կարմիր է», իսկ օբյեկտիվը՝ «այն իրոք կարմիր է» հատվածներն են:

Փիլիսոփաներն առանձնացնում են գիտելիքի երեք աղբյուր: Երբ մենք ասում ենք՝ «Ամռանը կհաջորդի աշունը» կամ «Ես գիտեմ բազմապատկման աղյուսակը», ապա տվյալ դեպքերում մեր գիտելիքը հիմնված է **փորձի** վրա (միշտ այդպես է եղել), երկրորդ՝ մեր գիտելիքն **ապացուցված** է ($2+2=4$), երրորդ՝ մեր գիտելիքը **համընդհանուր** է (այդ մասին գիտեն բոլորը):

Կարևոր է հասկանալ, թե ինչով է տարբերվում գիտելիքը կարծիքից և համոզմունքից: **Կարծիքը** այն տեսակետն է, որի ճշմարտության հարցում մենք վստահ չենք: **Համոզմունքը** այն տեսակետն է, որի ճշմարտության հարցում մենք սուբյեկտիվորեն համոզված ենք, բայց չկան բավարար օբյեկտիվ նախադրյալներ այն գիտելիք դարձնելու համար:

ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Փիլիսոփայության այն ճյուղը, որն ուսումնասիրում է գիտելիքի էությունը, կոչվում է *իմացաբանություն* (էպիստեմոլոգիա՝ հունարենից քարզմանաբար՝ գիտելիքի ուսումնասիրություն) կամ ճանաչողության փեսություն:

Իմացաբանության ոլորտում մենք քննարկում ենք «Ի՞նչ գիտենք» և «Ինչպե՞ս գիտենք» հարցերը: Որոշ փիլիսոփաներ պնդում են, որ մենք ոչինչ չգիտենք, մյուսների կարծիքով՝ մեր գիտելիքները սահմանափակ են: Կան նաև փիլիսոփաներ, ովքեր կարծում են, որ մեր իմացությունը սահմաններ չունի:

Սուկրատեսն ասում էր. «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ»:

Մեկնաբանե՞ք այս միտքը: Արդյո՞ք այն նշանակում է, որ Սուկրատեսը ոչինչ չգիտի:

Ընթերցե՛ք ստորև բերվող իրավիճակը:

Պատկերացրե՛ք՝ սենյակի կենտրոնում դրված է աթոռ: Ներս է մտնում մարդը և հոգնած լինելով՝ որոշում է նստել աթոռի վրա: Որոշ ժամանակ անց մարդը դուրս է գալիս: Ներս է մտնում շունը և սենյակում առկա արևից պատսպարվելու համար նստում է աթոռի տակ:

Նույն օրը երեկոյան այլմոլորակայինները մի շարք առարկաների հետ տանում են նաև այդ աթոռը: Պատկերացրե՛ք, որ ի տարբերություն մարդկանց, այլմոլորակայիններն ունեն մեծ քառակուսի գլուխներ և այդ առարկան դնելով իրենց գլխին ու այն շատ հարմար տեսնելով՝ եզրակացրին, որ այն գլխարկ է:

Այսպիսով՝ մարդու համար տվյալ առարկան նստելու համար էր, շան համար՝ արևից պատսպարվելու, իսկ այլմոլորակայինների համար՝ գլխին դնելու:

Արդյո՞ք տվյալ իրավիճակում մենք գործ ունենք նույն առարկայի հետ, թե՞ տարբեր առարկաների՝ աթոռի, արևից պատսպարվելու միջոցի և գլխարկի:

ԱԳՆՈՍՏԻՑԻՉՄ


Կան տեսություններ, որոնք կասկածի տակ են դնում աշխարհի հավաստի ճանաչողության հնարավորությունը: Նման մոտեցումը փիլիսոփայության մեջ կոչվում է **ազնոստիցիզմ** (հունարեն *a* – «ոչ», *gnosis* – «գիտելիք» բառերից): Ընդգծենք, որ **ազնոստիկները ոչ թե ժխտում են աշխարհի ճանաչողությունը, այլ**

սահմանափակում են դրա հնարավորությունը: Գիտարկենք կոնկրետ օրինակներով: Հին աշխարհում ազնուստիցիզմի ներկայացուցիչներ էին համարվում սկեպտիկները:

Սկեպտիցիզմի ներկայացուցիչ, հույն փիլիսոփա Սեկստ Էմպիրիկը առաջադրել էր հետևյալ հարցը. «*Արդյո՞ք մենք աշխարհը ճանաչում ենք այնպիսին, ինչպիսին կա, թե՞ այնպիսին, ինչպիսին մեզ թույլ են փալիս մեր զգայարանները*»: Նա առաջարկում էր նկարագրել խնձորը: Խնձորը դեղին է, հարթ է, ունի հաճելի հոտ, քաղցր է, խրթխրթան: Այսպիսով՝ մենք նշեցինք խնձորի հինգ հատկանիշ՝ ըստ մարդու 5 զգայությունների՝ տեսանելիք, շոշափելիք, հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք: Ըստ Էմպիրիկի, եթե նույնիսկ խնձորն օբյեկտիվորեն ունենա տասը կամ երկու հատկանիշ, մենք մինչև նրան է կրճակվենք հինգը: Այսպիսով՝ սկեպտիցիզմը չի ընդունում օբյեկտիվ գիտելիքի հնարավորությունը՝ համարելով, որ գիտելիքը սուբյեկտիվ է և սահմանափակվում է մեր զգայություններով:

Ազնուստիցիզմի ներկայացուցիչ է համարվում նաև Կանտը: Բայց, ի տարբերություն սկեպտիկների և այլ ազնուստիկների, Կանտը համարում էր, որ օբյեկտիվ աշխարհ գոյություն ունի, պարզապես դրա մասին գիտելիքը մեզ հասանելի չէ:

ԷՄՊԻՐԻԶՄ ԿԱՄ ՍԵՆՏՈՒԱԼԻԶՄ



Չոն Լոկ

Մեր գիտելիքների զգալի մասը մենք ձեռք ենք բերում փորձի միջոցով: Չկա որևէ փիլիսոփա, որը ժխտի փորձի միջոցով գիտելիքի ձեռքբերման հնարավորությունը: Բայց որոշ փիլիսոփաներ համոզված են, որ մեր ամբողջ գիտելիքի հիմքը փորձն է: Այդ տեսությունը փիլիսոփայության մեջ կոչվում է **էմպիրիզմ** (*empirical* – փորձնական) կամ **սենսուալիզմ** (*sense* – զգայություն): Այս ուղղության հայտնի ներկայացուցիչներից են 17-րդ դարի անգլիացի փիլիսոփաներ Ֆրենսիս Բեկոնը, Թոմաս Հոբսը, Չոն Լոկը:

Անգլիացի փիլիսոփա Չոն Լոկի համոզմամբ՝ գիտելիքի աղբյուրը փորձն է: Ըստ Լոկի՝ փորձը կարող է լինել արտաքին և ներքին: **Արտաքին փորձ** ասելով նա հասկանում էր արտաքին աշխարհի ազդեցությունը

մեր զգայարանների վրա: **Ներքին փորձը** մեր մտածողությունն է: Արտաքին փորձի ազդեցությամբ ձևավորվում են մեր պատկերացումները, իսկ ներքին փորձի հիման վրա՝ խորհրդածությունները: Պատկերացումների և խորհրդածությունների հիման վրա ձևավորվում են պարզ գաղափարները: Պարզ գաղափարների շուրջ խորհրդածելու արդյունքում ձևավորվում են ընդհանուր, վերա-

ցական գաղափարները: Օրինակ՝ երբ մենք տեսնում ենք իրար հետևից ընթացող մեքենաների շարք, մեր մտքում առաջ է գալիս հաջորդականության պարզ գաղափարը, որի շուրջ խորհրդածելու արդյունքը կլինի «Ժամանակ» ընդհանուր գաղափարը: Արտաքին փորձի հիման վրա մենք ստանում ենք **առաջնային հատկանիշների գաղափարներ** (դրանք առաջանում են մեր զգայարանների վրա արտաքին աշխարհի ազդեցության արդյունքում. գանգված, շարժում, տարածություն, ժամանակ) և **երկրորդային հատկանիշների** գաղափարներ (որոնք մեր զգայությունների հիման վրա են. տեսանելիք, շոշափելիք և այլն): Օրինակ՝ խնձորը ոչ թե օբյեկտիվորեն կարմիր է, այլ մեր աչքն է այդ գույնը տարբերակում մյուսներից:

Էմպիրիզմի ներկայացուցիչ Ֆրենսիս Բեկոնի կարծիքով՝ կան չորս կուռքեր կամ մոլորություններ, որոնք մարդուն խանգարում են ձեռք բերել ճշմարիտ գիտելիք: Ըստ անգլիացի փիլիսոփայի՝ երբեմն իրականության փոխարեն մենք առնչվում ենք պատրանքների հետ: Հետևաբար՝ անհրաժեշտ է ձերբազատվել այդ մոլորություններից, որպեսզի մեր զգայություններն ավելի ճշմարիտ արտացոլեն իրականությունը:

Անդրադառնանք չորս կուռքերին:

Սեռի կուռքեր: Այս կուռքը բնորոշ է բոլոր մարդկանց: Այդ պատճառով կոչվում է սեռի (մարդկային տեսակի) կուռք: Մարդկային բանականությունն անհարթ հայելի է, որն իրերն արտացոլելիս դրանք հարմարեցնում է մարդու զգայություններին: Այսինքն՝ հաճախ մենք ոչ թե իրականությունն ենք ճանաչում, այլ իրականության նկատմամբ մեր զգացածը:

Քարանձավի կուռքեր: Ի տարբերություն սեռի կուռքերի, որոնք բնորոշ են մարդկային տեսակին որպես ընդհանրություն, քարանձավի կուռքը բնորոշ է անհատներին: Քարանձավի կուռքը մարդու բնավորության, հակումների, դաստիարակության հետևանք է: Ինչպես նշել է հին հույն փիլիսոփա Հերակլիտը, մարդիկ ավելի հաճախ գիտելիքը փնտրում են փոքրիկ աշխարհներում, քան թե մեծ, ընդհանուր աշխարհում:


Հրապարակի կուռքեր: Հաճախ խոսքերը մարդկանց մոլորեցնում են: Առօրյայում հաճախ ենք լսում. «Եկեք իրերը կոչենք իրենց անուններով»: Սա նշանակում է, որ հաճախ մեր խոսքերը չեն համապատասխանում իրականությանը, ինչի պատճառով առաջանում են վեճեր ու տարակարծություններ:

Թատրոնի կուռքեր: Հասարակական կյանքում այնքան են շատացել տեսությունները, որ մարդու անմիջական առնչությունն իրականության հետ նվազել է: Հաճախ այդ տեսություններով փորձում են մարդկանց առաջնորդել՝ նրանց հնարավորություն չտալով հասկանալ իրականությունը:

Առաջին երկուսը Բեկոնը համարում էր բնածին կուռքեր, մյուս երկուսը՝ հասարակական կյանքի արդյունք:

Բերե՛ք օրինակներ, որոնցում դրսևորվում են վերոնշյալ կուռքերը:

Երբեմն մեր զգայարանները մեզ մոլորեցնում են: Օրինակ՝ Ա նկարում թվում է, թե ձախ պատկերի կենտրոնի շրջանն ավելի մեծ է, քան աջ պատկերի կենտրոնի շրջանը: Սակայն իրականում դրանք հավասար են:



Ինչպե՞ս են մեզ մոլորեցնում մեր զգայարանները Բ և Գ նկարներում:

ՌԱՑԻՈՆԱԼԻՉՄ



Բենեդիկտ Սպինոզա

Իմացաբանության մեջ մեծ տարածում գտած մյուս ուղղությունը ռացիոնալիզմն է (*ratio* – բանականություն), որի հայտնի ներկայացուցիչներից են 17-րդ դարի փիլիսոփաներ Ռենե Դեկարտը, Բենեդիկտ Սպինոզան, Գոտֆրիդ Լեյբնիցը և ուրիշներ: Ռացիոնալիստները պնդում են, որ մեր զգայությունները շատ թույլ են և ոչ հավաստի: Օրինակ՝ եթե նայեք ջրամանի մեջ դրված փայտի կտորին, այն թեք է երևում: Պատճառն այն է, որ մեր զգայությունները մեզ խաբում են: Ռացիոնալիստների կարգախոսն է. որպեսզի տեսնենք, պետք է իմանանք: Եթե իմ աչքը հագեցած չէ մտքով, գիտելիքով, ապա ես չեմ տեսնի այն, ինչը պետք է: Օրինակ՝ եթե մենք քանդենք հեռուստացույցը, ապա, բացի լարերի ու սխեմաների հավաքածուից, ոչինչ չենք տեսնի, եթե չենք ուսումնասիրել էլեկտրոնիկա և էլեկտրատեխնիկա:

Ռացիոնալ ճանաչողության հիմնական ձևերը ձեռք հայտնի են «Հասարակագիտություն» դասընթացից: Դրանք են՝ հասկացություններ, դատողություններ, մտահանգումներ:

ԻՆՏՈՒՏԻՎԻՉՄ

Առօրյա կյանքում երբեմն մարդկանց հարցնում ենք՝ ինչպե՞ս իմացար և ստանում «Իմ ինտուիցիան հուշեց» պատասխանը: Ինտուիցիան փիլիսոփայության մեջ ճանաչողության ձև է: Շատ դժվար է ասել, թե ինչ է ինտուիցիան, քանի որ այն արդոտ ներքին զգացողություն է: Շատ ավելի հեշտ է ասել, թե ինչ չէ ինտուիցիան: Ինտուիցիան չի հիմնվում բանականության վրա: Ինտուիտիվ գիտելիքի ճշմարտությունը մեզ համար ակնհայտ է դառնում անմիջապես, հանկարծակի, առանց լրացուցիչ ապացույցների և փաստերի օգնության: Օրինակ՝ $1+2=3$ գոր-

ծողությունը ճշմարիտ է բոլոր այն մարդկանց համար, ովքեր գիտեն 1,2,3,+ = նշանների իմաստը: Կամ «Միտումնավոր մարդասպանությունն ընդունելի չէ» դրույթը նույնպես ինտուիտիվ ձևով ճշմարիտ է: Այս երկու օրինակները վկայում են, որ կարող է լինել ինտուիտիվ ճշմարիտ գիտելիք:

Այսպիսով՝ ինտուիցիայի հիմնական հատկանիշներն են հանկարծակիությունը և չգիտակցվածությունը: Ինտուիցիայի դրսևորման նախապայմաններ են համարվում մարդու *փորձը փվյալ ասպարեզում, փաստական գիտելիքների զգալի պաշարը, սրեղծագործական նրաժողության բարձր մակարդակը, փառասնդը:*

Փիլիսոփայության մեջ **ինտուիտիվիզմի** հիմնադիրը 19-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Անրի Բերգսոնն է:

Թեև փիլիսոփայության մեջ ձևավորվել են ճանաչողության տարբեր տեսություններ, բայց ակնհայտ է, որ դրանք փոխկապակցված և փոխլրացնող են: Ակնհայտ է, որ միայն զգայություններով չի կարող սահմանափակվել աշխարհի ճանաչողությունը:



Անրի Բերգսոն

ԻՍԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՓԻԼՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԵՉ

Ինչպես եվրոպական փիլիսոփայության մեջ, այնպես էլ հայ փիլիսոփայության մեջ իմացաբանական հարցերի նկատմամբ հետաքրքրությունը նկատելի դարձավ 17-րդ դարից սկսած: Հատկապես հետաքրքիր են 17-րդ դարի հայ փիլիսոփաներ Սիմեոն Ջուղայեցու և Ստեփանոս Լեհացու տեսակետները: Սիմեոն Ջուղայեցին առաջարկում է մի գաղափար, որն արդիական է նաև այսօր: Նրա կարծիքով, գիտությունների բաժանումը պայմանական է, քանի որ միևնույն խնդիրը կարող է դառնալ տարբեր գիտությունների ուսումնասիրության առարկա: Իսկ Ստեփանոս Լեհացին առաջադրում է այն միտքը, որ գիտությունների բաժանման հիմքում պետք է ընկած լինեն իմացության եղանակը, մեթոդը, նպատակը կամ ստացված գիտելիքի հավաստիության աստիճանը:

19-րդ դարի հայ փիլիսոփա Անտոն Գարազաշյանը կարևորում է գիտությունների և փիլիսոփայության միասնության գաղափարը: Նրա կարծիքով, գիտությունն առանց փիլիսոփայական ընդհանրացումների ոչ թե գիտություն է, այլ փաստերի և տեղեկությունների հանրագումար: Փիլիսոփայությունն օգնում է կոնկրետ գիտություններին՝ ճշմարտության բացահայտման գործում: 19-րդ դարի երկրորդ կեսի հայ փիլիսոփայության նշանավոր դեմքերից էր Գալուստ Կոստանյանը: Նա մարդկային քաղաքակրթության և մտածողության զարգացման մեջ տարբերակում էր չորս փուլ՝ բնագոյային, հավատական, տրամաբանական և

գիտական: Այս չորս փուլերը համապատասխանում են մարդու հոգևոր զարգացման փուլերին: Մարդը նախ զգում է, հետո հավատում, այնուհետև տրամաբանում և իմանում:

20-րդ դարի սկզբներին հայ փիլիսոփայության հայտնի ներկայացուցիչներից էր Երվանդ Ֆրանգյանը: Ֆրանգյանը քննադատում է այն մտածողներին, ովքեր կասկածի են ենթարկում փիլիսոփայության գոյությունը: Նրա կարծիքով, փիլիսոփայությունը չի կարող վերանալ հենց միայն այն պատճառով, որ մարդն իր էությանը փիլիսոփայող է, որ փիլիսոփայելը մարդկային մտքի էական հատկությունն է: Նրա կարծիքով, ամեն մի գիտություն ունի իր մասնագիտական փիլիսոփայությունը (օրինակ, պատմության փիլիսոփայություն, բնության փիլիսոփայություն, իրավունքի փիլիսոփայություն և այլն): Իմացաբանության մեջ Ֆրանգյանը համադրական մոտեցման կողմնակից էր: Համադրական մոտեցումն ընդունում է հոգու երեք հիմնական տարրերի՝ մտածողության, կամքի և զգացումի միասնությունը: Մարդու իմացական բոլոր կարողությունները գործում են միասնական և միաժամանակ, թեև տարբեր պահերին դրանցից մեկը կարող է գերակշռություն ունենալ մյուսների նկատմամբ:

Առաջադրանք

1. Բերե՛ք կարծիքի, համոզմունքի և գիտելիքի օրինակներ:
2. Վերընթերցե՛ք Բեկոնի չորս կուռքերը և բերե՛ք օրինակներ ձեր շրջապահից:
3. Արտահայտե՛ք ձեր տեսակետը էմպիրիզմի, ռացիոնալիզմի և ինստրուկտիվիզմի վերաբերյալ:

ԴԱՍ 6. ՃՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒ



Աշխատանք գույգերով

Քննարկե՛ք, թե ինչու է ճշմարտության հարցը կարևոր: Ինչո՞ւ են մարդիկ փորձում իմանալ ճշմարտությունը: Կարծիքները ներկայացրե՛ք դասարանին:

Ընթերցե՛ք տեքստը

Ճանաչողության գործընթացում գիտելիքը ոչ միայն ձեռք է բերվում, այլև գնահատվում է: Գիտելիքը կարելի է գնահատել տարբեր տեսակետներից՝ օգտակարության, կարևորության, կիրառելիության: Գիտելիքի գնահատման գործընթացում կարևորագույն տեղ ունի դրա ճշմարիտ կամ սխալ լինելը: Իմացաբանության մեջ

ճշմարտությունն ունի նույն արժեքը, ինչ բարությունը՝ բարոյագիտության մեջ, գեղեցկությունը՝ գեղագիտության մեջ: Փիլիսոփայության մեջ ճշմարտության հարցի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ:

Ճշմարտության մասին փիլիսոփայության մեջ կան երեք հիմնական տեսություններ. համապատասխանության, կոհերենտության և պրագմատիկ: **Համապատասխանության տեսության** համաձայն՝ ճշմարիտ են համարվում այն դատողությունները, որոնք համապատասխանում են իրականությանը: Հին հույն փիլիսոփա Պլատոնը ճշմարտության մասին ասել է հետևյալը. «Նա, ով իրերի մասին խոսում է այնպես, ինչպիսին իրերը կան, ասում է ճշմարտություն, իսկ նա, ով այլ կերպ է ասում, ստում է»: «Ձյունը սպիտակ է» դատողությունը ճշմարիտ է, եթե ձյունն իրականում սպիտակ է:

Կոհերենտության տեսությունը (անգլերենից թարգմանաբար նշանակում է համաձայնեցված) ճշմարտության չափանիշ է համարում դատողությունների հետևողականությունը և անհակասականությունը: Այս մոտեցումը ոչ թե հակադիր է համապատասխանության տեսությանը, այլ լրացնում է այն:

Նույնը կարելի է ասել նաև ճշմարտության **պրագմատիկ տեսության** (հունարենից թարգմանաբար նշանակում է գործողություն) վերաբերյալ: Այս պարագայում ճշմարտության հիմք է համարվում պրակտիկան: Այս մոտեցումը շատ կիրառելի է առօրյա կյանքում: Հաճախ մենք ասում ենք, որ պրակտիկան ցույց կտա այս կամ այն գաղափարի ճշմարտացիությունը:

Ճշմարտության չափանիշ չի կարող լինել սոսկ այն հանգամանքը, որ մարդկանց մեծ մասը հավատում է տվյալ տեսակետին: Մասնավորապես՝ վերջերս մի հարցում է անցկացվել ոգիների գոյության մասին: Հարցվածների կեսից ավելին նշել է, որ իրենք հավատում են ոգիների գոյությանը: Բայց փիլիսոփայական տեսանկյունից դա բավարար հիմք չէ տվյալ միտքը ճշմարիտ դիտարկելու համար: Փիլիսոփայության մեջ մեծամասնության կարծիքը ճշմարիտ համարելը տրամաբանական սխալ է, որը կոչվում է *Ad Populum*: Եթե որևէ կարծիք վայելում է մեծամասնության հավանությունը, ապա այն չի կարելի համարել ճշմարիտ կամ սխալ:

Բերեք օրինակներ այն մասին, որ մեծամասնության կարծիքը դեռևս բավարար չէ այն ճշմարիտ կամ սխալ համարելու համար:

ԱՐԳՅՈՒՔ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՄՏԱԾՈՒՄ ԵՆ



Աշխատանք գույգերով

Չույգերով քննարկե՛ք այն հարցը, թե արդյոք համակարգիչները մտածում են: Ձեր հիմնավորումները ներկայացրե՛ք դասարանին:

Ընթերցե՛ք տեքստը

Փիլիսոփայության մեջ վերջին տասնամյակում քննարկվում է այն հարցը, թե արդյոք համակարգիչները մտածում են: Այս խնդիրը ստացել է «արհեստական ինտելեկտ» անվանումը: Մի կողմից թվում է, թե համակարգիչները կարող են մտածել: Ի վերջո, հայտնի է, որ համակարգիչը կարողացավ հաղթել շախմատի աշխարհի չեմպիոն Գարի Կասպարովին և բազմաթիվ այլ ուժեղագույն շախմատիստներին: Համակարգիչը կարողանում է թարգմանել տեքստեր, որոնել նյութեր: Որոնման Google համակարգը կարողանում է գտնել ոչ միայն ձեր փնտրած նյութերը, այլև տրամաբանորեն դասակարգել նյութը: Հասկանալի է, որ նման գործառնություններ իրականացնելը պահանջում է մտածողության առկայություն: Մյուս կողմից ակնհայտ է, որ համակարգիչներն այս ամենն անում են մարդուց տարբեր ձևերով: Օրինակ՝ մարդու մտածողության վրա էական ազդեցություն են ունենում էմոցիաները, տրամադրությունը:

Փիլիսոփայության պատմության մեջ ձևավորվել է երկու մոտեցում այս հարցի շուրջ: Փիլիսոփաների մի մասը կարծում է, որ համակարգիչները կարող են մտածել: Նրանք ենթադրում են, որ եթե բնությունը կարող է ստեղծել մարդու նման գիտակից, մտածող էակներ, ապա ինչու այդ էակները չեն կարող ստեղծել մտածող մեքենաներ: 20-րդ դարի հայտնի փիլիսոփա Ալան Թյուրինգը, ով համարվում է այս մոտեցման հիմնադիրը, առաջարկել է հետևյալ հանրահայտ խաղի ձևափոխված տարբերակը: Խաղին մասնակցում են մեկ կին, մեկ տղամարդ և մեկ հարցազրուցավար: Տղամարդը և կինը ֆիզիկապես տարբեր վայրերում են: Հարցազրույց վարողը տեքստային հարցադրությունների միջոցով անձնական հարցեր է ուղղում նրանց: Ըստ կանոնների՝ կինը անկեղծ պատասխանում է հարցերին, իսկ տղամարդը փորձում է ձևանալ կին և պատասխանել կնոջ տրամաբանությամբ: Հարցազրույցի վերջում վարողը պետք է ասի, թե մասնակիցներից որն էր իրական կինը: Վիճակազրույթումը բազմաթիվ անգամներ ցույց է տվել, որ վարողը սխալվել է: Ձևափոխված տարբերակում Թյուրինգն առաջարկում է տղամարդու փոխարեն խաղին մասնակից դարձնել համակարգիչը: Արդյունքում համակարգիչը կարողացել է նույնչափ խաբել վարողին, որչափ տղամարդ խաղացողը:

Այսպիսով՝ Թյուրինգն ասում է, որ մտածողությունը մեխանիկա-

կան գործողությունների համակարգ է, որը կարող է ունենալ նաև համակարգիչը: Հայտնի է նաև, որ այսօր համակարգչային ծրագրերի միջոցով կարելի է պատմվածքներ, պոեմներ և նույնիսկ երաժշտություն ստեղծել:

20-րդ դարի մեկ այլ հայտնի փիլիսոփա Ջոն Սյոռլը կարծում է, որ երբեք չի գա այն օրը, երբ համակարգիչները կմտածեն: Նա կարծում է, որ չնայած համակարգիչները կարող են առանձին մտածողական գործառույթներ կատարել, սակայն երբեք չեն կարող մտածել: Սյոռլի կարծիքով՝ համակարգիչը երբեք չի կարող ճնշվածություն կամ ուրախություն զգալ: Այսպիսով՝ փիլիսոփայի կարծիքով, զգացողությունները համարվում են մտածողության մաս: Սյոռլն առաջարկում է հետևյալ թեստը:

Պատկերացրե՛ք, որ դուք դիմում եք չինական ռեստորանում աշխատանքի անցնելու խնդրանքով: Հարցազրույցի ժամանակ տնօրենը տեղեկացնում է, որ ուզում է ձեզ աշխատանքի վերցնել թարգմանչի թափուր պաշտոնի համար: Դուք նրան պատասխանում եք, որ չինարեն չգիտեք: Սակայն տնօրենն ասում է, որ չինարենի իմացությունը պարտադիր չէ: Այնուհետև տնօրենը բացատրում է, թե ինչ պետք է անեք: Դուք պետք է նստեք մի սենյակում, որտեղ կողքի սենյակից փոքրիկ պատուհանով ձեզ պետք է փոխանցվեն քարտեր, որոնց վրա կան չինարեն սիմվոլներ: Ձեզ տրվում է նաև ուղեցույց, որում նշվում է, թե որ քարտը ստանալու դեպքում դուք ո՛ր քարտը պետք է հետ ուղարկեք: Որոշ ժամանակ աշխատելուց հետո դուք վարժվում եք և շատ արագ եք կատարում աշխատանքը: Նման դեպքում կողքի սենյակում գտնվող անձանոթ մարդուն կարող է թվալ, թե դուք շատ լավ չինարեն գիտեք:

Սյոռլի կարծիքով՝ համակարգիչն աշխատում է նույն կերպ, ինչ չինական սենյակում աշխատող մարդը: Համակարգիչները կարող են տարբեր գործառույթներ կատարել՝ առանց դրանց իմաստը հասկանալու: Հետևաբար՝ Սյոռլի կարծիքով, համակարգիչները չեն կարող մտածել:

Ժամանակակից մեկ այլ հայտնի փիլիսոփա Դանիել Դենետը առաջարկում էր «մտածել» հասկացությունը փոխարինել «գիտակ-



Ջոն Սյոռլ



Դանիել Դենետ

ցություն» հասկացությամբ: Հարցադրումը նա ձևակերպում էր հետևյալ կերպ. «Արդյո՞ք մարդկանց գիտակցություն ունենալը նույնն է, ինչ համակարգչի գիտակցություն ունենալը»: Եթե դրանք տարբեր են, ապա համակարգիչը գիտակցություն չունի:

Առաջադրանք

1. Արհեստական ինտելեկտի մասին տեսություններից ո՞րն է չեզ համար ընդունելի: Պատասխանը հիմնավորե՛ք:

2. Պատասխանե՛ք ստորև բերվող հարցերին՝ «ճիշտ է» կամ «սխալ է»: Պատասխանները հիմնավորե՛ք:

Համակարգիչը մտածում է, եթե.

ա. Կարողանում է հաղթել շախմատի աշխարհի չեմպիոնին:

բ. Գրում է քանաարեղծություն:

գ. Գրում է Րա.Ֆ.Ֆու «Սամվել» վեպի նման արժեքավոր սրեղծագործություն:

դ. Ինքնուրույն շարժվում է:

ե. Համակարգիչն ասում է. «Ես տխուր եմ»:

3. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԳԱՍ 7. ԻՆՎՈՒԿՅՈՒՆ

Մարդկային ճանաչողության գլխավոր նպատակներից մեկն իրերի ու երևույթների ընդհանուր հատկությունների իմացությունն է, դրանց օրենքների հայտնաբերումը: Օրինակ՝ աստղագետը, իմանալով Արեգակի, Երկրի և Լուսնի փոխադարձ շարժումների օրենքները, կարողանում է ճշգրիտ հաշվարկել Արեգակի կամ Լուսնի խավարումները:

Ընդհանուրի իմացությունը, օրենքների հայտնաբերումը ստեղծագործական ընթացք է: Այդ ընթացքի մեջ մեծ տեղ է գրավում ինդուկցիան, այսինքն՝ առանձին երևույթներին վերաբերող գիտելիքների ընդհանրացումը, տարածումն այդ երևույթների ամբողջ դասի վրա: Այդ ընդհանրացման տրամաբանական ձևն ինդուկտիվ մտահանգումն է:

Հասարակագիտության դասընթացից վերիիշե՛ք մտահանգման սահմանումը:

Ինդուկտիվ կոչվում է այն մտահանգումը, որում որոշակի հասկանիչ նախադրյալներում վերագրվում է առանձին առարկաների, իսկ եզրակացության մեջ վերագրվում է այդ առարկաների դասին:

Օրինակ՝

Պղինձը տաքանալիս ընդարձակվում է:

Ալյումինը տաքանալիս ընդարձակվում է:

Երկաթը տաքանալիս ընդարձակվում է:

Անագը տաքանալիս ընդարձակվում է:

Կապարը տաքանալիս ընդարձակվում է:


Պղինձը, ալյումինը, երկաթը, անագը, կապարը մետաղներ են:

Հետևաբար՝ մետաղները տաքանալիս ընդարձակվում են:

Այսպիսով՝ տաքանալիս ընդարձակվելու հատկանիշը վերագրվում է առանձին մետաղների, իսկ եզրակացության մեջ՝ ամբողջ դասին:

Ինդուկցիայի մեթոդի հեղինակը 17-րդ դարի անգլիացի փիլիսոփա **Ֆրենսիս Բեկոնն** է: **Ինդուկցիայի էությունը մասնավոր փաստերի ուսումնասիրության հիման վրա կանոնների դուրսբերումն է, ընդհանրացումների կատարումը:**

Ինդուկցիան հետազոտական հիմնական մեթոդներից է: Ստորև ներկայացնում ենք ինդուկտիվ հետազոտության քայլերը.



Առաջադրանք

1. *Դիտարկե՞ք ստորև կատարված ընդհանրացումները և գնահատե՞ք դրանց հիմնավորվածությունը (լիովին հիմնավորված ընդհանրացում - 1, մասնակի հիմնավորված ընդհանրացում - 2, վատ հիմնավորում - 3):*

1. Ես ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել եմ նավթի արտադրության, ներմուծման և սպառման հարցերին առնչվող վիճակագրությունը շատ երկրներում: Նկատել եմ, որ այդ երկրներում առկա է նավթի դեֆիցիտ: Կարող ենք եզրակացնել, որ նավթի դեֆիցիտ կա բոլոր երկրներում:

2. Ես մկատել եմ, որ մարդիկ, որպես կանոն, քիչ փող ունեն աշխատավարձի նախօրեին, քան աշխատավարձ ստանալուց հետո: Հետևաբար՝ մարդիկ հակված են աշխատավարձ ստանալուց առաջ շատ գումար ծախսել:

3. Մեր ֆուտբոլային թիմն արդեն 75 տարի հաղթում է հարևան քաղաքի թիմին: Ես կարծում եմ, որ մեր թիմն ավելի լավն է, քան իրենցը:

4. Մենք զանգահարեցինք մեր քաղաքի հեռախոսագրքում նշված յուրաքանչյուր վեցերորդ բաժանորդին: Նրանց երկու երրորդը նշեց, որ պատրաստվում է քվեարկել Ա թեկնածուի օգտին, մեկ վեցերորդը՝ Բ թեկնածուի օգտին, ևս մեկ վեցերորդը՝ Գ թեկնածուի օգտին: Ես կանխատեսում եմ Ա թեկնածուի հաղթանակն առաջիկա ընտրություններում:

5. Ամեն անգամ, երբ պաղպաղակ եմ ուտում և զարեջուր խմում, մարսողության խանգարում եմ ունենում: Որոշել եմ այլևս պաղպաղակ չուտել:

6. Ամեն տարի ամենաշատը ԱՄՆ ներգաղթում են եվրոպացիները: Կարծում եմ, որ հենց Եվրոպայում են ապրում ԱՄՆ-ում ապրելու մեծ ձգտում ունեցող մարդիկ:

7. Մեր դպրոցի ավագ դասարաններում ավելի շատ աղջիկներ կան, քան տղաներ: Դա նշանակում է, որ ավելի շատ թվով աղջիկներ կդիմեն բուհեր:

8. Որքան շատ է ձեր եկամուտը, այնքան շատ եկամտահարկ պետք է վճարեք:

2. Վարկածների գնահատում

Վարկածները հիմնախնդիրների հնարավոր լուծումներն են: Երբ մենք հայրնվում ենք պրոբլեմային իրավիճակում, փորձում ենք գտնել իրավիճակից դուրս գալու մի քանի ելքեր: Այնուհետև փորձում ենք մտածել, թե լուծման որ տարբերակն է առավել ընդունելի:

Իրավիճակի նկարագրություն

Դուք սովորում եք փոքրիկ գյուղի դպրոցի ավարտական դասարանում: Դպրոցական խորհրդում առկա ճգնաժամի պատճառով նոր բյուջեն չի հաստատվել, ինչը նշանակում է, որ դպրոցը չի ֆինանսավորվելու: Նախորդ օրը կայացել է խորհրդի նիստ, որի ժամանակ հնչել են մի քանի առաջարկներ: Գնահատե՛ք ստորև բերվող առաջարկները՝ առավել ողջամիտները գնահատելով 5, իսկ ոչ ողջամիտները՝ 1: Հիմնավորե՛ք ձեր տեսակետը:

1. Թերթում գրել հոդված, որ եթե բյուջեն չհաստատվի, ապա ավարտական դասարանի երեխաները չեն կարող ավարտել դպրոցը և դիմել բուհեր:

2. Կազմակերպել դրամահավաք դպրոցի գործունեության համար նվազագույն պայմաններ ապահովելու նպատակով:

3. Պարզել դպրոցի խորհրդի բոլոր անդամների հեռախոսահամարները, զանգել յուրաքանչյուրին առանձին-առանձին և բացատրել իրավիճակի լրջությունը:

4. Հարցնել գյուղի բոլոր բնակիչներին՝ պարզելու, թե ինչ լուծումներ կարելի է գտնել:

5. Պահանջել պատասխանատու պաշտոնյայի հրաժարականը:

6. Դիմել կենտրոնական իշխանություններին՝ աջակցության խնդրանքով:

7. Դիմել տարածքի պատգամավորին:

8. Հավաքագրել ծնողների, ուլքեր համաձայն են մանկավարժական աշխատանք կատարել առանց վարձատրության:

9. Խնդրել ուսուցիչներին և դպրոցի տնօրենին՝ աշխատանքը շարունակելու կամավորական հիմունքներով:

Տնային աշխատանք

1. Նշե՛ք ինդուկցիայի առավելություններն ու թերությունները:
2. Կազմե՛ք ինդուկտիվ մտահանգումներ:

ԴԱՍ 8. ԴԵԴՈՒԿՑԻԱ

Ի տարբերություն ինդուկցիայի՝ դեդուկցիայի դեպքում միտքն ընդհանուրից գնում է դեպի մասնավորն ու եզակին: Դեդուկցիայի պարագայում եզրակացության մեջ բացահայտված նոր գիտելիքը բխում է նախադրյալների բովանդակությունից: Եզրակացության մեջ բացահայտվող գիտելիքն անբացահայտ ձևով պարունակվում է նախադրյալներում:

Օրինակ՝

Նախադրյալ – Ոչ մի բույս չի կարող պահպանվել տասը տարի առանց ջրի:

Եզրակացություն – Ոչ մի կակտուս չի կարող պահպանվել տասը տարի առանց ջրի:

Այս մտահանգման եզրակացությունն անբացահայտ ձևով պարունակվում է նախադրյալի մեջ, քանի որ կակտուսը բույս է: Դեդուկցիան համարվում է մտածողության առավել հիմնավոր ձև:

Մասնագետները տարբերակում են մտահանգման մի քանի աստիճաններ՝ անհիմն եզրահանգում, թույլ հիմնավորված եզրահանգում, չափավոր հիմնավորված եզրահանգում, ուժեղ հիմնավորված եզրահանգում և դեդուկտիվ եզրահանգում:

Ներկայացնենք յուրաքանչյուրը:

Չհիմնավորված եզրահանգում

Այս եզրահանգումների առանձնահատկությունն այն է, որ նախադրյալները համապատասխան չեն կատարված եզրահանգմանը:

Օրինակ՝

- Այսօր կիրակի է, հետևաբար՝ այսօր անձրևելու է:
- Քաղաքական գործիչը գեղեցիկ արտաքին ունի, հետևաբար՝ լավ քաղաքական գործիչ է:
- Պաղպաղակը համեղ է, հետևաբար՝ սննդարար է:

Թույլ հիմնավորված եզրահանգում

Կան եզրահանգումներ, որոնք անընդունելի են, բայց դրանք որոշ չափով համապատասխան են նախադրյալներին:

Օրինակ՝

- Դու մեկ անգամ ինձ խաբել ես, հետևաբար՝ ես բացարձակապես չեմ վստահում քեզ:
- Երեկ անձրևեց, հետևաբար՝ այսօր էլ է անձրևելու:
- Մեր ֆուտբոլային թիմը պարտվել է մինչև հիմա անցկացված բոլոր խաղերում, հետևաբար՝ այս մրցաշրջանում այլևս հաղթանակ չի տանի ոչ մի խաղում:

Չափավոր հիմնավորված եզրահանգում

Չափավոր հիմնավորված եզրահանգումներում նախադրյալների և եզրակացության առնչությունը բավական մեծ է: Այս եզրահանգումները կարող են նաև ճշմարիտ լինել:

Օրինակ՝

- Նա, ով կանոնավոր գնում է եկեղեցի, խորապես հավատացյալ մարդ է:
- Հիմա հուլիս ամիսն է, ուրեմն բազմաթիվ մարդիկ կլինեն ծովափերում:
- Հայաստանի շախմատի հավաքականը հիանալի հանդես եկավ համաշխարհային նախկին օլիմպիադայում, հետևաբար՝ այս անգամ էլ հիանալի հանդես կգա:
- Բենզինի գները կտրուկ աճում են, հետևաբար՝ բենզինի սպառումը կտրուկ կնվազի:

Ուժեղ հիմնավորված եզրահանգում

Ուժեղ հիմնավորված եզրահանգումներում եզրակացությունը գրեթե բխում է նախադրյալներից, բայց եզրակացության ճշմարտությունը մնում է հավանական:

Օրինակ՝

- ԱՄՆ-ն աշխարհի տնտեսապես զարգացած երկրներից է, հետևաբար՝ կունենա բարձրակարգ հանրային գրադարաններ: (Կա որոշակի հավանականություն, որ տնտեսապես զարգացած երկրում չլինի բարձրակարգ գրադարանային համակարգ:)
- Բամբակի գները նվազում են, իսկ պահանջարկը մեծանում է, հետևաբար՝ բամբակի վաճառքը կաճի:

Գեղուկտիվ հիմնավորված եզրահանգում

Շատ դեպքերում նախադրյալների և եզրահանգումների միջև կարող է լինել ոչ միայն ուժեղ, այլև կատարյալ առնչություն: Նման եզրահանգումներում եզրակացությունն անխուսափելիորեն բխում է նախադրյալներից:

Օրինակ՝

- Արմենը մեծ է Աշոտից, բայց փոքր է Լևոնից: Հետևաբար՝ Լևոնը մեծ է Աշոտից:
- Նա հաճախակի խաբել է ինձ: Հետևաբար՝ նա ազնիվ մարդ չէ:

Առաջադրանք

1. Ընթերցե՛ք ստորև նշվող եզրահանգումները: Նշե՛ք, թե որ տարրերակն է ճիշտ. չհիմնավորված, թույլ հիմնավորված, չափավոր հիմնավորված, ուժեղ հիմնավորված, դեղուկտիվ հիմնավորված:

- Ֆրզիկան բարդ առարկա է տարրական դպրոցի աշակերտների համար:

Տարրական դասարաններում սովորող ոչ մի աշակերտը չի կարող ֆիզիկա սովորել:

- Ավարտալիան մեծ կղզի է:

Ավարտալիան ունի շատ բնակչություն:

2. Ձևակերպե՞ք մեկական շիմնավորված, թույլ հիմնավորված, չափավոր հիմնավորված, ուժեղ հիմնավորված և դեղուկորիվ հիմնավորված եզրահանգումներ:

ԴԱՍ 9-10. ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր մարդ մտածում է: Բայց շատ հաճախ մեր մտածողությունը կողմնապահ է, հիմնավորված չէ: Մինչդեռ մեր կյանքը մեծապես կախված է մեր մտածողության որակից: «Եթե ուզում ես քո կյանքը փոխել, պետք է մտածողությունը փոխես», – ասվում է հայտնի ասույթում: Ժամանակակից աշխարհում կարևորվում են քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է նշանակում քննադատական մտածողություն: Դա ամենևին չի նշանակում որոշակի տեսակետների մասին բացասական վերաբերմունք: Քննադատաբար մտածող մարդը կարողանում է.

- հստակ ձևակերպել հարցեր և հիմնախնդիրներ,
- հիմնախնդիրներին վերաբերող տեղեկություններ հավաքել և մեկնաբանել,
- կշռադատված եզրահանգումներ կատարել,
- բաց է այլոց կարծիքների հանդեպ,
- կարողանում է արդյունավետ հաղորդակցվել խնդիրներ լուծելու նպատակով:

Քննադատական մտածողության կարևոր բաղադրիչներից է արդարամտությունը: Շատ հաճախ մարդիկ տեսնում են ուրիշների մտածողության սխալները՝ անտեսելով հակադիր տեսակետի ուժեղ կողմերը: Նույն տրամաբանությամբ մարդիկ չեն նկատում իրենց տեսակետների խոցելի կողմերը:

Քննադատական մտածողության դրսևորումներ են արժևորումը, հիմնավորումը, դասակարգումը, վերլուծությունը:

Քննադատական մտածողությունը զարգացնելու համար շատ կարևոր է մշտապես մտածել հետևյալ հարցերի շուրջ.

1. Ի՞նչ է հետևում այս ամենից:
2. Կարո՞ղ եք բերել տվյալ միտքը հաստատող և ժխտող օրինակներ:
3. Կարո՞ղ եք բերել այլ իրավիճակներ, որոնցում տվյալ կանոնը գործում է:

Քննադատական մտածողության առանձնահատկություններից մեկն այն է, որ մտքերը պետք է լինեն հիմնավորված: Ստորև ներկայացվում են հաղորդակցության ընթացքում հաճախակի օգտագործվող սխալներ:

Օրինակ՝ հաճախ մարդիկ ասում են՝ **«Կան փաստեր, որ ...»**: Ի՞նչ փաստեր, արդյո՞ք աղբյուրը վստահելի է:

«Լուրջ մտածող մարդիկ ասում են ...»: Ու՛րբե՞ր են լուրջ մտածող մարդիկ, ինչո՞ւ եք իրենց համարում լուրջ մտածող մարդիկ:

«Փորձը ցույց է տալիս ...»: Ո՞ւմ փորձը, ինչպե՞ս է այն ցույց տալիս:

«Շատ գիտնականներ հավատում են, որ ...»: Ինչո՞ւ են հավատում, ինչի՞ հիման վրա են հավատում:

«Հետազոտությունները վկայում են ...»: Ո՞ր հետազոտությունները, որքա՞նով է այդ հետազոտությունը հավաստի:

Ամփոփելով նշենք, որ մտքեր արտահայտելիս շատ կարևոր է հիմնավորումներ տալը, տեղեկատվության աղբյուրները նշելը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Տարածված տեսակետ կա, թե ստեղծագործական մտածողությամբ ոչ բոլոր մարդիկ են օժտված: Բայց դա ճիշտ չէ: Բոլոր մարդիկ ունեն ստեղծագործական մտածողություն: Այսօր ստեղծագործական մտածողությունը համեմատում են գրագիտության հետ: Ինչպես ամեն ոք կարող է կարդալ, գրել, հաշվել, նույն կերպ կարող է լինել ստեղծագործական:

Մեկ այլ թյուր տեսակետի համաձայն՝ ստեղծագործականությունն առկա է կյանքի միայն որոշակի ոլորտներում, օրինակ՝ արվեստում: Մինչդեռ ստեղծագործականությունն առկա է բոլոր ոլորտներում:

Ստեղծագործականությունն ինքնատիպ ու արժեքավոր գաղափարներ առաջադրելն է: Ստեղծագործական լինել նշանակում է շատ գաղափարներ ունենալ, ճկուն ու ինքնատիպ լինել: Ստեղծագործականությունը շատ նման է երևակայությանը: Երևակայությունը մարդու ներքին կարողությունն է: Ստեղծագործականությունը երևակայության կիրառման արդյունքն է:

Հաղորդակցության գործընթացում շատ կարևոր է տրամաբանական կանոնների պահպանումը: Այս դասի ընթացքում մենք կքննարկենք մի քանի տրամաբանական սխալներ, որոնք հաճախ են հանդիպում մեր առօրյայում:

«ԱՆԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱՐԿ»

Այս սխալն արտահայտվում է երկու ձևով.

1. Մենք չգիտենք, որ X-ը ճիշտ է, հետևաբար՝ այն սխալ է:

2. Մենք չգիտենք, որ X-ը սխալ է, հետևաբար՝ այն ճիշտ է:

Ընդհանրացված ձևով այս սխալն արտահայտվում է հետևյալ կերպ. նախադրյալում նշվում է, որ «X-ի մասին չգիտենք», իսկ եզրահանգման մեջ ասվում է, որ «X-ը ճիշտ է» կամ «X-ը սխալ է»:

Ստորև բերենք մի քանի օրինակներ.

1. Ես չունեմ պատճառներ կարծելու, որ դու ստախոս ես: Հետևաբար՝ դու ստախոս չես:

Հակափաստարկ: Այստեղ սխալն այն է, որ մենք ոչ թե պետք է ասենք, որ մարդը ստախոս չէ, այլ որ մենք չգիտենք՝ արդյոք այդ մարդը ստախոս է: Եթե դուք չունեք պատճառներ տվյալ մարդուն ստախոս համարելու, դա դեռևս բավարար չէ նրան ստախոս չհամարելու:

2. Ոչ ոք չի ապացուցել, որ բջջային հեռախոսների օգտագործումն առաջ է բերում քաղցկեղ: Հետևաբար՝ բջջային հեռախոսների օգտագործումը քաղցկեղ չի առաջացնում:

Հակափաստարկ: Խնդիրն այն է, որ ապացույցների բացակայությունը դեռևս բավարար հիմք չէ պնդելու, որ բջջային հեռախոսների օգտագործումը քաղցկեղ չի առաջացնում:

Առաջադրանք

Ընթերցե՛ք ստորև բերվող մտահանգումները և բերե՛ք հակափաստարկներ. ա. Մարդիկ դարեր շարունակ փորձում են ապացուցել Աստծո գոյությունը, բայց դեռևս հաջողության չեն հասել: Հերևաբար՝ Աստված գոյություն չունի: բ. Հնագետները երկար դարեր փորձում էին գրկել մի շարքի վան, բայց նրանց ջանքերն արդյունք չտվեցին: Հերևաբար՝ այդ շարքի վանը գոյություն չունի:

«ԵՐԿԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ»

Այս սխալը հանդիպում է այն դեպքում, երբ մենք նախ բառն օգտագործում ենք մեկ իմաստով, ապա անցնում ենք այդ բառի օգտագործման մեկ այլ իմաստի:

Օրինակ՝

1. Թեև դու 25 տարեկան ես, բայց իմ երեխան ես: Հետևաբար՝ ես կարող եմ քեզ վերաբերվել իբրև երեխայի:

Այս մտահանգման մեջ «երեխա» բառը սկզբում օգտագործվում է որդի կամ դուստր իմաստով, ապա երեխա ասելով նկատի են ունենում մեկին, ով այնքան փոքր է, որ չի կարող հոգ տանել իր մասին:

2. Յուրաքանչյուր ոք էգոիստ է: Ամեն մարդ իր լավն է ուզում: Հետևաբար՝ ոչ մի վատ բան չկա էգոիստ լինելու և ամեն ինչ սեփական շահերին ծառայեցնելու մեջ:

Առաջին մասում «էգոիստ» բառն օգտագործվում է բարոյական տեսանկյունից չեզոք իմաստով, մինչդեռ երկրորդ մասում այն արդեն օգտագործվում է բացասական իմաստով՝ որպես ամեն ինչ սեփական շահերին ծառայեցնելու միջոց:

«ՀԱՊԾԵՊ ԸՆԴՀԱՆՐԱՑՈՒՄՆԵՐ»

Մենք մշտապես ընդհանրացումներ անելու կարիք ունենք: Եթե մենք ընդհանրացումներ չանենք, ապա կարող ենք միայն պարզունակ մտքեր արտահայտել: Սակայն ընդհանրացումներ կատարելիս մենք պետք է շատ զգույշ լինենք: Հայտնի է, որ ժամանակին եվրոպացիները գիտեին, թե կարապները միայն սպիտակ են լինում, քանի որ նրանց տեսած բոլոր կարապները սպիտակ էին եղել: Այդ պահին միանգամայն տրամաբանական էր ընդհանրացնել, որ բոլոր կարապները սպիտակ են: Բայց, ի վերջո, Ավստրալիայում նրանք տեսան նաև սև կարապներ:

Հապճեպ ընդհանրացման սխալն այն է, որ մի քանի օրինակի հիման վրա մենք ընդհանրացում ենք կատարում:

Օրինակ՝

1. Ես երեք անգամ լսել եմ Արմենի երգերը և եզրակացրել եմ, որ նա երբեք մեծ երգիչ չի դառնա:

Հակափաստարկ: Հնարավոր է, որ նա նոր է սկսել երգելը և շատ է հուզվում: Չի բացառվում, որ փորձ ձեռք բերելուց հետո սկսի ավելի լավ երգել:

2. Մեր հեռուստահաղորդման ընթացքում ստացված բոլոր զանգերը կառավարության նոր ծրագրին դեմ էին: Հետևաբար՝ հասարակությունը չի ընդունում կառավարության նոր ծրագիրը:

Հակափաստարկ: Սովորաբար մարդիկ, ովքեր դեմ են ինչ-որ բանի, ավելի ակտիվ են զանգելու և իրենց դժգոհություններն արտահայտելու հարցում: Տվյալ դեպքում տասը հոգու կարծիքը շատ քիչ է ընդհանրացում անելու համար:

3. Բենզինի վաճառքը վերջին մեկ շաբաթվա ընթացքում նվազել է: Հետևաբար՝ առաջիկայում էլ վաճառքի տվյալը կմնա նույնը:

Հակափաստարկ: Մեկ շաբաթը շատ կարճ ժամանակահատված է նման ընդհանրացում անելու համար:

«ԾԱԳՄԱՆ ՄԻՍԱԼ»

Այս սխալը թույլ է տրվում այն դեպքում, երբ վիճարկվում է ոչ թե մտքի բովանդակությունը, այլ դրա ծագումը, առաջացումը:

Օրինակ՝

1. Արիստոտելի փիլիսոփայական հայացքները ձևավորվել են հին աշխարհում: Հետևաբար՝ դրանք իրենց դարն ապրել են:

Հակափաստարկ: Թեև մտահանգման նախադրյալը ճիշտ է, բայց եզրահանգումն անընդունելի է: Թեև Արիստոտելն ապրել է վաղ շրջանում, բայց նրա հայացքներն այսօր էլ համարվում են շատ ազդեցիկ:

2. Պատգամավոր Պողոսյանը հետադիմական կուսակցության անդամ է: Նրա ժամկետանց գաղափարները տեղ չունեն ժամանակակից խորհրդարանում:

Հակափաստարկ: Պատգամավորի հետադիմական կուսակցության անդամ լինելը դեռևս չի նշանակում, որ նրա գաղափարները ժամկետանց են:

3. Տվյալ ուսանողը աղքատ երկրից է: Նրա շարադրությունը դժվար թե հավակնի բարձր գնահատականի:

Հակափաստարկ: Երկրի տնտեսական վատ վիճակն ամենևին չի նշանակում, որ այն ներկայացնող ուսանողը ցածր առաջադիմություն ունի:

4. Արմենն ունի ուսման վատ առաջադիմություն: Հետևաբար՝ նա ծույլ է:

Հակափաստարկ: Ուսման մեջ վատ առաջադիմություն ունենալը բավարար չէ պնդելու, որ աշակերտը ծույլ մարդ է:

«ԸՆԴՂԵՄ ՄԱՐԴՈՒ» («Ad Hominem»)

Այս սխալի էությունն այն է, որ մարդու տեսակետը քննադատելու փոխարեն քննադատում են մարդուն: Ֆուտբոլային բառապաշարում այն հայտնի է «Գնդակին հարվածելու փոխարեն խաղացողին հարվածել» ձևակերպմամբ:

Երբեմն թեժ բանավեճի ժամանակ մարդիկ կորցնում են ինքնատիրապետունը և սկսում են մեղադրել միմյանց: Սա «Ընդդեմ մարդու» սխալի վատագույն տարբերակն է: Օրինակ՝ Լուսինեն լսում է Աշոտի փաստարկները և գիտի, որ Աշոտը վատ բնավորություն ունի: Նման դեպքում Լուսինեն կարող է մտածել, որ Աշոտն այն մարդը չէ, ում կարելի է վստահել: Եթե նույնիսկ ընդունենք, որ Աշոտը վատ բնավորություն ունի, դա դեռևս բավարար հիմք չէ պնդելու, որ նրա միտքն անընդունելի է: Պատկերացրեք, եթե նույն միտքն ասեր մի մարդ, ում Լուսինեն սիրում է: Նման դեպքում հնարավոր է, որ Լուսինեն այլ դիրքորոշում ունենար:

Հիշե՛ք նման օրինակներ չե՛ր կյանքից: Չե՛ր կարծիքով՝ մարդի՞կ են վատը, թե՞ նրանց արարքները: Կարո՞ղ է լավ մարդը վատ արարք թույլ տալ:

Երբեմն թույլատրելի է քննադատել մարդու բնավորությունը, եթե այն հետևանք է ունեցել որոշակի իրավիճակում: Օրինակ՝ եթե մարդու ծուլության պատճառով որևէ աշխատանք է ձախողվել, ապա մենք կարող ենք քննադատել այդ մարդու բնավորությունը: «Ընդդեմ մարդու» սխալի հետ առնչվող դեպքեր են արձանագրվում դատարաններում: Դատական գործընթացներում ցուցմունքներ վերցնելիս շատ կարևորվում է վկայի վստահելի լինելը: Ենթադրվում է, որ ազնիվ մարդու ցուցմունքները վստահելի են:

Արդյո՞ք համաշայն եք վերջին գնահատականին:

Դիտարկենք «Ընդդեմ մարդու» սխալի մի քանի նմուշներ:

Օրինակ՝

1. Արմեն – Մեքենաները չպետք է երթնեկեն բարձր արագությամբ: Գերազանցված արագությունն ավտովթարների հիմնական պատճառն է:

Գևորգ – Արմենը շատ տխուր մարդ է, ով ուզում է փչացնել այն մարդկանց հաճույքը, ովքեր սիրում են արագություն:

Գևորգի պատասխանը համարժեք չէ: Նույնիսկ եթե Արմենը էությամբ տխուր մարդ է, նրա բերած փաստարկը միանգամայն տրամաբանական է:

2. Անուշ – Եթե մարդիկ շարունակեն անխնա վարվել բնության հետ, ապա բնությունը վրեժխնդիր կլինի:

Արուսյակ – Անուշը հոռետես մարդ է: Նա միայն վատ բաներ է ասում:

Ստորև բերենք մեկ օրինակ, որի դեպքում «Ընդդեմ մարդու» փաստարկն ընդունելի է:

1. Վաճառող – Այս մեքենան շատ թանկ արժե: Այն հիանալի պահպանված է ու խնամված:

Հաճախորդ – Բայց Դուք հայտնի եք որպես մեքենաների վաճառքով զբաղվող մարդ, ում պարբերաբար քննադատում են վերահսկողները կեղծ գովազդի համար:

Այս պարագայում վաճառողն ուզում է, որ հավատան իր խոսքերին, իսկ հաճախորդը պատասխանում է նրան հիմնավոր ձևով, որ նրա խոսքերին հավատալ չի կարելի:

Առաջադրանք

Յուրաքանչյուր սխալի համար բերեք մեկ օրինակ և ինքներդ նշեք հակափաստարկներ:

Հետաքրքրաշարժ պատմություն

Լավ հարցեր տալը կարևոր է

Նոբելյան մրցանակի դափնեկիր Իսիդոր Ռաբիին մի անգամ հարցնում են. «Ինչո՞ւ Դուք գիտնական դարձա՞ք, այլ ոչ թե բժիշկ, իրավաբան կամ գործարար»: Ի պատասխան նա ասում է. «Իմ մայրն ինձ դարձրեց գիտնական: Եթե մյուս երեխաների ծնողներն ամեն օր հարցնում էին՝ ի՞նչ ես սովորել, ապա իմ մայրը միանգամայն այլ հարց էր տալիս՝ ի՞նչ լավ հարցեր ես տվել այսօր դպրոցում: Հենց լավ հարցեր տալու պահանջի արդյունքում էլ ես դարձա գիտնական»:

ԳԱՍ 11-12. ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Մտածողության հմտությունների ուսուցումը փիլիսոփայական մտածողության կարևորագույն նախապայմաններից է:

Ներկայացնենք դիրքորոշման հիմնավորում հմտությունը:

Հմտությունն ուսուցանելու քայլեր

1. Ձեր դիրքորոշումը հստակ ձևակերպե՛ք նախադասությամբ:
2. Ձեր դիրքորոշումը հաստատելու համար առնվազն երեք հիմնավորում բերե՛ք.
 - ա. Հաշվի առե՛ք, թե ինչն ավելի համոզիչ կլինի լսարանի համար:
 - բ. Մտածե՛ք ձեր տեսակետը պաշտպանող կամ հակառակ տեսակետին դեմ հիմնավորման մասին: Բացատրե՛ք՝ ինչով է հակառակ տեսակետն ավելի թույլ:
3. Յուրաքանչյուր հիմնավորում հաստատեք ճշգրիտ ապացույցներով:
4. Ձեր հիմնավորումներն ու հաստատող ապացույցները դասավորեք արդյունավետ կարգով:
5. Եզրակացություն արեք:

Հմտության ուսուցում

Ընթերցեք հետևյալ տեսակետը

Ծխելը կարող է շատ վնասակար ազդեցություն ունենալ մարդու վրա: Այն առնվազն թանկ սովորություն է: Մեկ տուփ ծխախոտն ամենաքիչը 200 դրամ արժե: Իսկ որ ավելի կարևոր է, ծխելը կարող է բացասաբար ազդել մարդու արտաքինի վրա: Այն դեղնացնում է ատամները և դեմքի վրա կնճիռներ առաջացնում: Սակայն ամենամեծ վնասը առողջությանն է հասցնում: Յուրաքանչյուր գլանակ ծխողի կյանքից 5-20 րոպե է խլում: Ծխելը մեծացնում է քաղցկեղի, սրտային և այլ հիվանդությունների զարգացման հնարավորությունը: Իրականում ամեն օր 1200 մարդ է մահանում ծխելու հետևանքով առաջացած հիվանդություններից: Ինչպիսին էլ որ լինի ծխելու հաճույքը, այն նրա պատճառած վնասը չարժե:

Ի՞նչ կարծիք ունի տեքստի հեղինակը:

Հեղինակը համոզված է, որ ծխելը շատ վնասակար է:

Ո՞րն է առաջին հիմնավորումը:

Առաջին հիմնավորումն այն է, որ ծխելը թանկ է: Սակայն «առնվազն» բառը ցույց է տալիս, որ դա ծխելու ամենավատ հետևանքը չէ:

Ո՞ր ապացույցն է հաստատում առաջին հիմնավորումը:

Հեղինակը նշում է մեկ տուփի ծխախոտի գինը:

Ո՞րն է երկրորդ հիմնավորումը և այն հաստատող ապացույցը:

Մյուս հիմնավորումը ծխախոտի վնասակար ազդեցությունն է մարդու արտաքինի վրա, հաստատող ապացույցը՝ դեղնած ատամները և դեմքի կնճիռները:

Ո՞րն է վերջին հիմնավորումը և այն հաստատող ապացույցը:

«Ամենամեծ վնաս» կապակցությունը ցույց է տալիս, որ կարևորագույն հիմնավորումը ծխախոտի գործած ազդեցությունն է մարդու առողջության վրա: Ապացույցը ներառում է կյանքի տևողության կրճատումը, հիվանդությունների տեսակները և ծխելու հետևանքով ամենօրյա մահացությունը:

Ո՞րն է հեղինակի եզրակացությունը:

Գրողն ասում է, որ ծխելու հաճույքը նրա պատճառած վնասը չարժե:

Հմտության կիրառում

Ընթերցեք հեղինակի տեքստը և պատասխանեք հարցերին:

Մարդու կլոնավորում չպետք է թույլատրվի: Կլոնավորումն առողջությանն այնպիսի վտանգ է սպառնում, ինչպիսին վաղաժամ ծերացումն է: Այն կարող է նաև սոցիալական և հոգեբանական վնասակար ազդեցություն ունենալ: Քանի որ երեխաներն այդպիսով գիտական արտադրանք են դառնում, կլոնավորումը կարող է քայքայել ընտանեկան ավանդական հարաբերությունները: Եվ որ ամենակարևորն է՝ կլոնավորումը մարդկային կյանքի արժեքը չի ճանաչում: Նա սպառնում է այն սկզբունքին, որ յուրաքանչյուր մարդ բացառիկ ինքնություն ունի, և նրա նկատմամբ պետք է արժանապատիվ վերաբերմունք դրսևորել: Կլոնավորումն անտարակույս ֆիզիկական, սոցիալական, հոգեբանական և բարոյական լուրջ վտանգ է մարդկության համար:

Ո՞ր տեսակետն է հաստատում հեղինակի հիմնավորումը (ընտրեք մեկը):

- Ծայրահեղ դեպքերում մարդու կլոնավորումը կարող է արդարացվել:
- Մարդու կլոնավորումն ավելի վտանգավոր է, քան կենդանիներիինը:
- Մարդու կլոնավորումը երբևէ չպետք է թույլատրվի:
- Կլոնավորման ֆիզիկական հետևանքներն ավելի ծանր են, քան բարոյական հաճույքը:

Ո՞րն է հեղինակի ամենագորեղ հիմնավորումը (ընտրեք մեկը):

- Կլոնավորումը շատ մեծ վտանգ է ներկայացնում մարդկանց առողջության համար:
- Կլոնավորումը սոցիալական և հոգեբանական լուրջ հետևանքներ ունի:

- Կլոնավորումը քայքայում է ընտանեկան ավանդական հարաբերությունները:
- Կլոնավորումը խարխլում է հավատը մարդկային կյանքի արժեքի նկատմամբ:

Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ (ընտրեք մեկը):

- Հեղինակն ընդգծում է, որ կլոնավորումը կրճատում է ժառանգական բազմազանությունը:
- Հեղինակը շեշտում է կլոնավորման ֆիզիկական հետևանքները:
- Հեղինակն այն կարծիքին է, որ կլոնավորումը չի կարող կասեցվել, բայց պետք է սահմանափակվի:
- Հիմնավորումներով ընդգծում է, որ կլոնավորումը տարբեր սպառնալիքներ է ծնում:

ԳՒԱՍ 13-14. ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՊԱՐԶՈՒՄ

Հմտությունը ուսուցանելու քայլեր

1. Իբրև ելակետ ընտրեք որևէ դեպք կամ հանգամանք:
2. Հնարավոր պատճառի համար փնտրեք դրան նախորդած դեպք կամ հանգամանք:
3. Հնարավոր հետևանքների համար փնտրեք դրան հաջորդած դեպք կամ հանգամանք:
4. Ամփոփեք պատճառահետևանքային կապը:

Հմտության ուսուցում

Պատճառը դեպք է կամ հանգամանք, որ մի ուրիշ բան է ծնում, առաջ բերում: Հետևանքը այն է, ինչ տեղի է ունենում իբրև պատճառի արդյունք: Պատճառը պարզելու համար հարցրեք. «Սա ինչո՞ւ տեղի ունեցավ» կամ «Ի՞նչը հանգեցրեց սրան»: Հետևանքը պարզելու համար հարցրեք. «Սա ինչի՞ հանգեցրեց» կամ «Ո՞րն է հետևանքը/արդյունքը»:

Ընթերցեք հարվածը

Գիտնականները հարյուրավոր տարիներ չէին կարողանում հասկանալ եգիպտական հիերոգլիֆները: 1799 թ. Ռոզետայի մոտակայքում (Եգիպտոս) գտնվեց մի քար՝ հիերոգլիֆներով և հունարեն արձանագրությամբ: Գիտնականներն ուսումնասիրեցին արձանագրությունը և 1820-ական թթ. ի վերջո վերծանեցին հիերոգլիֆները: Հայտնի եգիպտագետ Շամպոլիոնը մի գրքույկ հրատարակեց, որի մեջ բացատրում էր, թե ինչպես պետք է կարդալ դրանք: Ուրիշ գիտ-


նականներ օգտագործեցին դա եզիպտական գրությունները թարգմանելու համար: Արդյունքում այսօր մենք հին Եզիպտոսի մասին ավելի շատ բան գիտենք, քան մարդիկ 200 տարի առաջ:

1. Իբրև ելակետ ընտրեք մեկ դեպք կամ հանգամանք: Օրինակ՝ գրքույկ հրատարակելը դեպք է:

2. Հնարավոր պատճառների համար փնտրեք դրան նախորդած դեպքեր կամ հանգամանքներ: Հարցրեք. «Սա ինչո՞ւ տեղի ունեցավ» կամ «Ի՞նչը հանգեցրեց սրան», կամ «Ի՞նչը սա հնարավոր դարձրեց»: Դուք կարող եք գտնել նաև այնպիսի հուշող բառեր, ինչպիսիք են՝ պատճառով, որովհետև, առաջացնել/առաջ բերել, նպատակով: Հիերոգլիֆների վերծանումը հանգեցրեց գրքույկի հրատարակմանը: Անմիջական պատճառն ուղղակիորեն հանգեցնում է արդյունքի: Հեռավոր պատճառը միջանկյալ փուլ է ստեղծում, բայց ուղղակիորեն հետևանքի չի հանգեցնում: Հիերոգլիֆների մեկնաբանումն անմիջական պատճառ է, իսկ քարը գտնելը՝ հեռավոր պատճառ:

3. Հնարավոր հետևանքների համար փնտրեք ելակետին հաջորդած դեպքեր կամ հանգամանքներ: Հարցրեք. «Սա ինչի՞ հանգեցրեց» կամ «Ո՞րն է արդյունքը»: Դուք կարող եք գտնել այնպիսի հուշող բառեր, ինչպիսիք են՝ հանգեցնել, բերել, արդյունք, այսպիսով, ուրեմն, հետևաբար: Գրքույկի հրատարակումը գիտնականներին մղեց թարգմանելու եզիպտական գրավոր աղբյուրները: Այստեղ գրքույկը պատճառ է, իսկ թարգմանությունը՝ հետևանք: Անմիջական հետևանքը ուղղակի արդյունք է: Հեռավոր հետևանքն ավելի երկար ժամանակահատված է պահանջում: Այստեղ թարգմանությունն անմիջական հետևանք է, իսկ այսօրվա մեր գիտելիքները՝ հեռավոր հետևանք:

4. Ամփոփեք պատճառահետևանքային կապը: Գծապատկերը կարող է ավելի տեսանելի դարձնել այն:



Ինչպես նկատում եք, որոշ դեպքեր/հանգամանքներ կարող են միաժամանակ և՛ պատճառ լինել, և՛ հետևանք:

Հմտության կիրառում

Ընթերցեք հատվածը

Շատ հանգամանքներ հանգեցրին Արևմտյան Հռոմեական կայսրության անկմանը: Մեկը իշխանավորների վատ աշխատանքն էր: Մյուսը կարգապահության թուլացումն էր բանակում: Միննույն ժամանակ տնտեսական խնդիրները մեծացնում էին լարվածությունը: Կայսրությունը կործանվեց, երբ 5-րդ դարում գերմանական ցեղերը գրավեցին Հռոմեական տարածքները: Աստիճանաբար անկում ապրեց առևտուրը, անհետացան քաղաքները, շարքից դուրս եկավ ջրամատակարարման համակարգը:

Առաջադրանք

1. Տեսրոմ գծե՛ք ստորը բերվող տրամագիծը և դեպքերը տեղադրեք տրամագրի մեջ: Քննվող դեպքը տեղադրեք մեջտեղում, պարզեք պատճառները և հետևանքները: Առաջին երեք և վերջին երեք դեպքերը կարող են տեղադրվել ցանկացած կարգով:



2. Պատճառահետևանքային ի՞նչ կապեր են նկարագրվում այս հատվածում:

- Կայսրության անկման հեռավոր պատճառներ և հետևանքներ:
- Կայսրության անկման անմիջական պատճառներ և հեռավոր հետևանքներ:
- Կայսրության անկման անմիջական և հեռավոր պատճառներ:
- Կայսրության անկման անմիջական պատճառներ և հետևանքներ:

4. ԵՍ ՄԱՐԴ ԵՄ

ԴԱՍ 15. ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ

*Ի՞նչ հիասքանչ էակ է մարդը,
եթե... իրոք մարդ է...*

Մենանդրոս

Ընթերցե՛ք սպորեկ բերվող հարցերը և մտորե՛ք դրանց շուրջ:

Ի՞նչ է նշանակում լինել մարդ: Մարդ լինելը բնությունի՞ց է տրված, թե՞ հասարակությունն է մեզ մարդ դարձնում: Արդյոք մարդը եզակի՞ էակ է բնական մյուս էակների համեմատությամբ: Եթե այո, ապա ինչո՞վ: Մտածողությա՞մբ, խղճո՞վ, հոգատարությա՞մբ... Թե՞ մարդու էության ավելի կարևոր բնութագրիչներ կան...

Մեզ ի՞նչ կարող է տալ մարդու հիմնախնդրի մասին մտորումը, դրա նշանակության արժևորումը: Իսկ ի՞նչ է նշանակում «արժևորում» բառը...



Վերնագրուն

Ո՞ւմ ճանաչեցիք նկարում: Ինչո՞ւ էին նրանք հավաքվել: Ի՞նչ մրահոգություններ ունեին: Ի՞նչ էին ցանկանում անել:



*Բերանն արևուր Մարդակերը էն անբան
 Հագար դարում հազիվ դարչալ Մարդասպան.
 Չեռքերն արևուր գնում է նա դեռ կամկար,
 Ու հեռու է մինչև ՄԱՐԴԸ իր ճամփան...*

Հովհաննես Թումանյան

Իմաստասերները խոսում են մարդու հիմնախնդրի մասին: Ինչո՞ւ հիմնախնդիր:

Հիմնախնդիրը՝ պրոբլեմը, մարդու իմացածն է իր չիմացածի մասին, երբ մարդը կարողանում է առաջ քաշել հարցեր, սակայն դժվարանում է փալ դրանց վերջնական պատասխանները:

Մարդու հիմնախնդիրը մտածողներին դարեր ի վեր հուզող նման հիմնահարցերից մեկն է, որին բազմիցս փորձել են պատասխանել, սակայն գիտակցել են, որ, այնուամենայնիվ, մարդու էության վերհանման խնդիրը ամենաառեղծվածա-

յին հարցերի շարքին է պատկանում... Գուցե խնդրի դժվարության պատճառներից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր նոր սերունդ, յուրաքանչյուր նոր դարաշրջան ձգտում է յուրովի լուծել այն...



**Ռ.ա.Ֆայել Սանդի.
 Սիբարիևյան Տիրամայրը**

Այժմ անդրադառնանք վերոնշյալ հարցերին: Ինչո՞ւ են փիլիսոփաները մտածում մարդու հիմնախնդրի շուրջ, մի՞թե հնարավոր չէ ապրել առանց նման հարցերին անդրադառնալու: Ինչ խոսք, հնարավոր է: Իհարկե, երբեմն կարելի է ապրել բավական հետաքրքիր, արդյունավետ կյանքով: Սակայն, որպես կանոն, լինում են կենսական շրջադարձային, ճգնաժամային պահեր, որոնք ստիպում են մարդուն մտորել նման խնդիրների շուրջ: Ընդ որում՝ այդ մտորումն անհրաժեշտություն է դառնում թե՛ անհատական, թե՛ հասարակական մակար-

դակում: Անհատը սկսում է նման հարցերին անդրադառնալ, երբ իր կյանքում հանդիպում է որոշ երևույթների, որոնք ինքն էլ որակում է որպես անմարդկային: Նման գնահատականն անմիջապես առաջ է բերում մարդկայինը սահմանելու անհրաժեշտությունը, և մարդը սկսում է մտածել, թե, օրինակ, միջանձնային կամ աշխատանքային հարաբերություններում¹ վարվելակերպի ո՞ր տեսակը կարելի է համարել մարդկային, իսկ որը՝ ոչ:

Հասարակական մակարդակում է՛լ ավելի բարդ իրադրություններ կարող են լինել, երբ այս կամ այն հասարակությունը հեղեղվում է անմարդկային արարքներով, իրադարձություններով ու միմյանց հանդեպ մարդկանց թնամականությամբ: Եվ մտածողները սկսում են որոնել այդպիսի **սպամարդկայնացման, այսինքն՝ մարդկայինի ժխտման կամ անտեսման երևույթների պատճառները**: Այդ որոնումների արդյունքում նրանք անհրաժեշտաբար հանգում են մարդու հիմնախնդրին:

Երբեմն առ երբեմն լրատվամիջոցներից տեղեկանում ենք, որ այս կամ այն քաղաքում ինչ-որ գինված անչ (մա՞րդ) մտել է ուսումնական հասարակություն. մանկապարտեզ, դպրոց կամ համալսարան ու կրակահերթով սպանել անմեղ երեխաների, երիտասարդների, դասավանդողների... Ինչպե՞ս և ինչո՞ւ է հնարավոր դառնում նման սպամարդկայնացումը...

Առօրյա կյանքում, ցավոք, երբեմն ականատես կամ մասնակից ենք լինում կոնֆլիկտային իրավիճակների՝ «Մի կաթիլ մեղրի» տրամաբանությամբ, երբ մարդիկ խեղում են միմյանց հոգեպես կամ մարմնապես, քանի որ անհասկոթժող են ու չեն արժևորում միմյանց որպես բարձրագույն արժեքների՝ մարդկանց...

Իմաստասերները, վերլուծելով նման իրադրությունները, եզրակացնում են, որ խնդիրը մարդու աշխարհայացքի մեջ է:

Գուք հիշում եք, որ աշխարհայացքն աշխարհին նայելու մարդու կերպն է, այն, թե մարդն ինչպես և ինչպիսին է տեսնում իրեն, շրջապատող իրականությունն ու իրեն այդ իրականության մեջ:

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում ձևավորում է իր աշխարհայացքը: Որպես կանոն, մարդու աշխարհայացքը ձևավորվում է տարերայնորեն՝ ելնելով նրա կյանքի հանգամանքներից, շրջապատից և տարատեսակ ազդեցություններից: Մարդկանց ճնշող մեծամասնությունը կա՛ն չի անդրադառնում, կա՛ն սակավ է անդրադառնում իր աշխարհայացքին, թեպետ ապրում է և գործում՝ դրանից ելնելով: *Բայց մարդը կարող է իր աշխարհայացքը ձևավորել գիտակց-*

¹ Միջանձնային հարաբերությունները տարբեր մարդկանց անձնական հարաբերություններն են միմյանց հետ, օրինակ՝ մտերմություն, բարեկամություն և այլն, աշխատանքային հարաբերություններում առավել կարևորվում է պաշտոնական կողմը, օրինակ՝ ղեկավար-կատարող, առաջադրանք-իրագործում և այլն:

ված որոնումների արդյունքում՝ մշակելով իր սկզբունքները, հայացքները, գնահատականները, աշխարհի իր պատկերը: Այստեղ է, որ օգնության է գալիս փիլիսոփայությունը՝ մարդուն հնարավորություն տալով, եթե պետք է, վեր գտնվել իր կյանքի կոնկրետ պայմաններից ու մշակել ավելի լայնահուն և մարդասիրական աշխարհայացք:

Համաձայնելով, որ թեպետ կյանքը կարող է ծնել այնպիսի իրադրություններ, երբ բախվում են մարդկանց շահերը, երբ ծագում է «կա՛մ...կա՛մ» ընտրության խնդիր, *իմաստասերները, այնուամենայնիվ, գրնում են, որ տարբեր քախումնային իրավիճակներում միշտ կարելի է գրնել մարդկային լուծումներ...* Խորհելով մարդու հիմնախնդրի մասին՝ մեզանից յուրաքանչյուրը սկսում է կատարել ներքին աշխատանք, սկսում է ձևավորել իրեն մարդ բառի բարձր իմաստով: *Իմաստասերները հուշում են, որ մարդու առավել մարդկայնացումն իրականանում է գիրակցված նպատակամղված խորհրդածություն-արժևորումների ընթացքում:*

Իսկ ի՞նչ է նշանակում արժևորել... Բառն ինքը խոսում է իր մասին՝ **արժևորել** նշանակում է արժեք տալ կամ գիրակցել ու հարգել արժեքը, կարևորել այն:

Արժեքները մարդու կողմից գնահատվող, կարևորվող իրողություններ են:

Դրանք կարող են լինել անցողիկ և անանց: **Անցողիկ արժեքներն** իրադրական են և ավելի շատ արտահայտում են մարդկանց շահերը: **Հավերժական, անանց արժեքները** կազմում են մարդու մեջ



Մոնթե Մելքոնյան

Մտաբեր, որո՞նք էին այն արժեքները, որոնց համար Մոնթեն հերոսացավ

եղած մարդկայինի կորիզը, այն ամենակարևորը, որի համար մարդը կարող է հերոսանալ: Հերոսականությունը միայն մարդուն բնորոշ երևույթ է, որը չկա կենդանական աշխարհում: *Երբ մարդու արժեհամակարգում տեղ են գրնում այնքան կարևոր արժեքներ, որոնց պահպանման համար նա կարող է զոհաբերել իր բարեկեցությունը կամ նույնիսկ կյանքը, ասում ենք, որ մարդը հերոսական արարք է կատարում:*

Մտաբերե՛ք մեր ժամանակների կամ անցյալի որևէ հերոսի: Ինչո՞ւ եք նրան համարում հերոս:

Արժեքները լինում են նաև *նյութական* և *հոգևոր*:

Նյութական արժեքները տեսանելի, շոշափելի, ֆիզիկական գոյություն ունեցող իրողություններ են: Օրինակ՝ շենքերը, գործիքները,



Ռաֆայել Սանտի. Ինքնանկար

10-րդ դասարանի դասընթացից վերհիշեք Վերածննդի գեղագիտական իդեալը և մտորեք այդ դարաշրջանի հոգևոր արժեքների շուրջ:



Ալբրեխտ Դյուրեր. Ինքնանկար

Ի՞նչ գիտեք Դյուրերի մասին, ի՞նչ եք կարծում, որո՞նք էին նրա ապրած դարաշրջանի գլխավոր հոգևոր արժեքները:

ճանապարհները: Մարդը ստեղծում է նյութական արժեքներ, օգտագործում ու պահպանում դրանք:

Սակայն *մարդու խորքային էությունն ավելի շատ հոգևոր արժեքներ ունենալու մեջ է*: Սա է այն կարևոր բնութագրերից մեկը, որն իմաստասերները վեր են հանել մարդու էության մեջ: Եվ այստեղ է, որ «բանական մարդ» կենսաբանական տեսակին պատկանող էակը դեռևս չի կարող համարվել մարդ բառի բուն իմաստով, եթե չունի հոգևոր արժեքներ: Հոգևոր արժեքներից գուրկ էակը պարզապես գոյություն է քարշ տալիս, բանում է աշխատելու, առավել ևս ստեղծագործելու փոխարեն: Իսկ վատագույն դեպքում լրացնում է վերը նկարագրված ապամարդկային իրողությունների ցանկը:

Հոգևոր արժեքներն աշխարհայացքի կարևորագույն բաղադրիչներն են, դրանց միջոցով է մարդը ճեղակորում իր վերաբերմունքը թե՛ արյուաքին աշխարհի, թե՛ ինքն իր հանդեպ:

Հոգևոր արժեքները գաղափարներ են, սկզբունքներ, որոնք, որպես կանոն, հիմնվում են իդեալի հասկացության վրա¹:

Իրականությունը համեմատելով իր ունեցած կամ տվյալ ժամանակաշրջանում տիրապետող իդեալի հետ՝ մարդը գնահատում է տեղի ունեցող իրողություններն ու որոշում իր վերաբերմունքն այդ ամենի հանդեպ: Նման գնահատման արդյունքում ծնվում են գեղեցիկն ու այլանդակը, վեհն ու ստորը, բարին և չարը, արժանապատիվն ու անպատիվը և այլն:

Հարցեր մտորելու համար

1. Գարձյալ անդրադարձե՞ք դասի սկզբում առաջարկված հարցերին ու փորձե՞ք գտնել դրանց պատասխանները:
2. Ի՞նչ է հիմնախնդիրը: Կարո՞ղ եք բերել արդի հասարակությանը հուզող հիմնախնդիրների օրինակներ:
3. Ի՞նչ է աշխարհայացքը: Կարո՞ղ եք բնորոշել, օրինակ, քաղքենու, հավատացյալի, գործարար մարդու, երիտասարդի և ծերունու աշխարհայացքները: Ի՞նչ եք կարծում, դրանցում նմանություններն են շատ, թե՞ տարբերությունները:
4. Ի՞նչ է արժեքը: Ինչպիսի՞ արժեքներ կան:
5. Ի՞նչ է իդեալը: Ի՞նչ դեր ունի այն աշխարհայացքի համակարգում:
6. Ինչպե՞ս կարելի է բացատրել «Մարդը հոգևոր արժեքներ ունեցող էակ է» միտքը:

Առաջադրանք

Տանը թղթի վրա գրե՛ք չեզ համար կարևոր մի շարք արժեքներ (օրինակ՝ մեքենա, առողջություն, ուսում, տուն, դրոշմանիշների կամ այլ հավաքածու, դահուկներ, սեր, հայրենասիրություն, իրավունք, պարտականություն և այլն): Այս արժեքների այդ ցուցակը դասավորե՛ք ըստ առաջնահերթության. սկզբում ամենակարևորները, ապա պակաս կարևորները և այդպես շարունակ: Արդյունքում դուք կստանաք չեզ արժեքների աստիճանակարգը՝ հիերարխիան, իհարկե, տվյալ պահի համար: Թերթիկը չեզ հետ տարեք դասարան հաջորդ դասին զույգերով քննարկելու համար:

¹ Իդեալը, ինչպես հիշում եք 10-րդ դասարանի դասընթացից, կատարելատիպ է, այն բարձրագույն վիճակը, որին կարող է հասնել տվյալ առարկան կամ երևույթը:

ԴԱՍ 16. ՄԱՐԴ ԷԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԵՐԸ



Աշխատանք զույգերով

Միմյանց ներկայացրե՛ք ձեր արժեքների հիերարխիան: Եթե պետք է, արե՛ք մեկնաբանություններ, պարզաբանումներ: Լսե՛ք միմյանց ուշադիր և հարգանքով: Քանի որ խոսում եք ձեզ համար կարևոր բաների մասին, եղե՛ք նրբանկատ և անզգույշ արտահայտություններով մի վիրավորեք դիմացինի արժեքներն ու արժանապատվությունը: Եթե որոշ ընտրություններ ձեզ թվում են զարմանալի կամ ոչ ընդունելի, այդ մասին արտահայտվե՛ք քաղաքավարի ու հարգալից: Չգտե՛ք լինել հանդուրժող և ընկալունակ:

Դո՛ւրս գրեք այն արժեքները, որոնք առկա էին երկուսիդ ցանկերում: Մտորե՛ք դրանց մասին. ինչո՞ւ են դրանք ընդհանուր:

Կայի՞՞ն այնպիսի արժեքներ, որոնք ներառված չէին արժեքների ձեր ցանկում, բայց քննարկման արդյունքում կուզեիք ավելացնել:

Ստացված ընդհանուր ցանկում ո՞ր արժեքներն են գերակշռում՝ նյութակա՞ն, թե՞ հոգևոր...

Համադասարանական աշխատանք

Գրատախտակին կամ պաստառի վրա գրառե՛ք յուրաքանչյուր զույգի ընդհանուր ցանկի ամենակարևոր երկու արժեքները, կրկնվող կամ նման արժեքները արտահայտե՛ք մեկ հասկացությամբ:

Արդյոք երկա՞ր ցուցակ ստացվեց, թե՞ ոչ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:

Այս համադասարանական ցուցակում ո՞ր արժեքներն են գերակշռում. նյութակա՞ն, թե՞ հոգևոր: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:



Ընթերցե՛ք տեքստը

*Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.
Ի՛նչ են փարեղ նըրանք կյանքից, թե ինչ փանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ:*

Հովհաննես Թումանյան

5-րդ դարի հայ մեծ փիլիսոփա **Եզնիկ Կողբացին** իր խրատներից մեկում ասում է. «Վաղը զնալու ես հայրենիքը (գերեզման), այնպեղ հանգստացիր»: Այսինքն՝ քանի ապրում ես՝ գործիր:

Կողբացու խրատում երևում են մարդու ևս երկու հիմնական բնութագիր. *մարդը ժամանակավոր կամ, այլ կերպ ասած, մահկանացու էակ է, և մարդը գործող էակ է*: Մարդուն տրված ժամանակն անորոշ է. ոչ ոք չգիտի, թե ինքը որքան է ապրելու: Գուցե կյանքի հետաքրքիր կողմերից մեկն էլ դա է, որ մարդիկ չգիտեն, թե որքան ժամանակ է իրենց տրված: Բայց մի բան կարծես թե պարզ է. մարդու կյանքի ժամանակը սահմանափակ է: Ու այդ գիտակցությունը մարդուն դրդում է անդադար գործել: Ինչ խոսք, սա չի նշանակում, որ մարդը պետք է ունայն քաշքշուկների և անիմաստ վազքի մեջ անցկացնի իր կյանքը: Ցանկալի է, որ նա նախ հստակեցնի իր արժեքային հիերարխիան, հասկանա, թե ինչ է ուզում անել այս կյանքում, ապա դրա համաձայն սկսի վարել նպատակասլաց գործունեություն:

Մարդը կատարում է տարբեր դերեր, նա, օրինակ, զավակ է, եղբայր, հայր, հացթուխ, հարևան, հայրենիքի պաշտպան և այլն, և այլն: *Մարդը, սակայն, որպես էակ, չի հանգեցվում իր կատարած և ոչ մի դերին: Մարդ լինել նշանակում է լինել ավելին, քան մեր կատարած դերերն են կամ նույնիսկ այդ դերերի հանրագումարը*: Մարդու էությունն այնքան լայն է ու անսահման, որ ինքը՝ մարդը, չի կարող լիովին սպառել իր մեջ եղած անսահմանությունը: Դուք գիտեք, որ մենք, օրինակ, օգտագործում ենք մեր ուղեղի հնարավորությունների չնչին տոկոսը միայն: Մարդը չի հանգեցվում նաև իր իսկ ունեցած ձգտումներին, ցանկություններին, անգամ իր ստեղծած ես-պատկերին, քանի որ դրանք բոլորը սահմանափակ են ու մասնավոր: Քանի որ մարդու մեջ միշտ առկա է ավելին, քան նա կարող է պատկերացնել, ապա հնարավոր չէ պնդել, որ մարդը կարող է լիովին իրականանալ իր մեջ եղած ողջ ներուժով: Այս հատկությունն է, որ մարդուն դարձնում է, հույների բառերով ասած, միկրոկոսմ, փոքր տիեզերք, տարերք, որ ինքն իրեն լիովին չի ճանաչում: Դրա համար հին հույն իմաստասեր Սոկրատեսը, հետևելով



*Մինաս Ավետիսյան.
Աշունը Չափոտում*

դելփյան տաճարի պատին արձանագրված ասույթին, կոչ էր անում. «**Ճանիր զքեզ**», այսինքն՝ ճանաչիր ինքդ քեզ: Ավելացնենք այսօրվա մարդաբանության տեսանկյունից. *գիտակցիր ու գնահատիր քո անսահմանությունն ու արժանի՛ եղիր դրան՝ չգարելով իրականացնել այդ անսահման պոպեկցիայի թեկուզ մի մասնիկը*:

Մարդու մյուս հիմնական հատկությունն **անկրկնելիությունն** է:

Նկատարձ կլինեք, թե ինչպես երբեմն ունանք հազնում են ճշացող զգեստներ, փարփողիկ սանրվածքներ են անում, խոսում են ոչ ընդունված ձևով և այլն: Յանկանում են փարբերվել: Սա ինքն իրեն գրնելու որոշակի ընթացք է, եթե դուրս չգա ընդունելի մարդկային ու մշակութային սահմաններից: Ինչպես դա եղավ, օրինակ, Հերոսփարտեաի դեպքում... Հիշո՞ւմ եք, իր անունն անմահացնելու համար նա այրեց Արտեմիսի փանարը Եփեսոսում, քանի որ կառուցելով փարբերվել, ավաղ, չէր կարող...

Մարդը պարզապես պետք է գտնի ինքն իրեն. հասկանա, թե որն է այն գործը (գործերը), որի (որոնց) համար նա եկել է այս աշխարհ: *Մարդը պետք է պարզապես սովորի հարազատ մնալ իր անկրկնելիությանը:* Արհեստականորեն անկրկնելիություն պետք չէ որոնել, քանի որ բնական ժառանգական հատկությունների համակցությամբ մեզանից յուրաքանչյուրն արդեն իսկ անկրկնելի է: Բայց հարց է, թե արդյոք անկրկնելիության նախադրյալներով օժտված մարդը կարողանում է մասն անկրկնելի կյանք ապրել: Իսկ անկրկնելի կյանք չի նշանակում անպայման մեծ քաղաքական գործչի, գորավարի, հանրահայտ երգչի կյանք: Կարելի է անկրկնելի, լի ու հետաքրքիր կյանք ապրել՝ մնալով մասն թվացյալ սովորականության շրջանակներում: Ըստ 18-րդ դարի ֆրանսիացի իմաստասեր Միշել Մոնտենի՝ հրաշալի է պաշարել թշնամու ամրոցը, լինել դեսպանության գլուխ, կառավարել ժողովրդին. այս ամենը շքեղ է և արժանի բոլորի ուշադրությանը: *«Բայց հանդիմանել, ծիծաղել, վաճառել, գնել, սիրել, արել ու գրուցել մարերիմների և ինքդ քեզ հետ մեղմորեն՝ չգրելով լինել արդարացի, ու չգրվել թուլությունների՝ հարազատ մնալով ինքդ քեզ. սա շատ ավելի հազվագյուր ու ավելի դժվար բան է...»:*

Անկրկնելիությունն ու անփոխարինելիությունն ապրելու սեփական ոճը գտնելու, աշխատելու և տքնելու սեփական դաշտը կամ դաշտի մի փոքրիկ կտորը բացահայտելու մեջ է: Թող որ մարդը, օրինակ, ընդամենը մի մեխ խփի, բայց դա անի ստեղծագործաբար, հաճույքով, լիակատար դարձնելով իր կյանքն ու գոյությունը: Դա անի այնպես, որ հետագայում հիշի հաճույքով ու իրականացված առաքելության գիտակցումով: Պատահական չէր ասում մեր մեծ բանաստեղծը.

*Ես հոգնել եմ մանրաքանդակ, պաղ խոսքերից,
Լավ է լինել հմուտ դարբին, քան ոսկերիչ...*



Մ. Մարյան,
Գոհար Գասպարյանի դիմանկարը
*Ի՞նչ եք կարծում, ինչով է անկրկնելի
Գոհար Գասպարյանը*

Հարցեր մտորելու համար

1. Ինչպե՞ս կբացատրեք դասի բնաբանը:
2. Բացատրե՞ք, թե ինչ են նշանակում «Մարդը գործող էակ է», «Մարդն անցավոր էակ է», «Մարդն անկրկնելի ու անփոխարինելի էակ է» արտահայտությունները:
3. Ամբողջատիրական քաղաքական համակարգերում ընդունված էր մտածել, որ անփոխարինելի մարդիկ չկան: Ի՞նչ էք կարծում, նման մտածողությունն ինչպե՞ս կարող է ազդել մարդկային հարաբերությունների և կյանքի որակի վրա: Ինչո՞ւ:
4. Մարդու էական բնութագրերին ծանոթանալը փոխե՞ց ինչ-որ բան ձեր պատկերացումներում, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
5. Կարդացե՞ք Համո Սահյանի «Ինչ արած, մարդ եմ» բանաստեղծությունը և վերլուծե՞ք այն նոր սովորած հասկացությունների համատեքստում:

*«Ինչ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք, էլի, ես մի քիչ բարդ եմ,
Քարի պես պիկնդ եմ, հողի պես փխրուն,
Ինչքան չիևի, դեռ մի քիչ մարդ եմ:*

*Ես իմ իշխանն եմ, իմ գլխի տերը,
Եվ ինչ թվում է, մեծ ու անպարտ եմ,
Բայց ինչ-որ չափով և ինչ-որ մի տեղ
Դեռ թիպարտ եմ:*

*Մերք ուրից գլուխ զարդեր եմ հագնում,
Մերք այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,*

*Մերք քար ու քարափ, մերք վայրի խուպակ,
Մերք կանաչ անտառ ու ցանած արտ եմ:*

*Հավիրենության լծորդն եմ անդու,
Բայց և կարճատև մի ակնթարթ եմ,
Փոթորիկներ են եռում հարակիս,
Թեև երեսից այսպես հանդարտ եմ:*

*Կյանքս ավարտելու վրա եմ արդեն,
Բայց ինքս, ավա՜ղ, դեռ անավարտ եմ...*

*Ինչ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք, էլի, ինչ արած, մարդ եմ:*

Առաջադրանք

Տանը ծնողների և այլ հարազատների հետ զրուցե՞ք դասում արծարծված հիմնահիմունքների շուրջ, հարցրե՞ք նրանց մտրեցումների մասին, ապա գրե՞ք մի փոքր շարադրանք. «Մարդը, որ կուզենայի լինել» կամ թեմային համահունչ մեկ այլ վերնագրով:

ԴԱՍ 17-18. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿՎ



Աշխատանք զույգերով

Բաժանվե՛ք զույգերի: Փոխանակե՛ք տանը գրած ձեր շարադրանքները ձեր ընկերոջ հետ: Ընթերցե՛ք միմյանց շարադրանքները, ապա քննարկե՛ք միասին:

Ցանկության դեպքում կարելի է բոլորի համար բարձրաձայն ընթերցել մեկ-երկու շարադրանք, ապա համադասարանական քննարկում անցկացնել:


Ուսումնասիրե՛ք ստորև առաջարկվող հասկացությունների քարտեզը: Ի դեպ, դուք այն կարող եք վերածնել, փոփոխել ձեր համոզմունքներին համապատասխան ու ստանալ նոր քարտեզ:

Ինչպես նկատում եք, այդ քարտեզի կարևորագույն հասկացությունը ՄԱՐԴ-ն է: Պատկերված են կին և տղամարդ, ինչը նշանակում է, որ մարդը բաժանված է երկու սեռերի: Այնուհետև մերձավոր շրջանում տրված են մարդու որոշ բնութագրեր.

- Մարդը երկակի՝ հոգեմարմնական էակ է:
- Մարդը բարոյական առաքինություններ և արժեքներ ունեցող էակ է:
- Մարդը գեղեցիկն ընկալող էակ է:
- Մարդը տնտեսություն վարող էակ է:
- Մարդը իրավունքներ և պարտականություններ ունեցող էակ է:
- Մարդը քաղաքական էակ է:
- Մարդը կատարելագործվող էակ է:

Հաջորդ՝ լայն շրջանում տրված են այն հասարակական գիտությունները, որոնք ուսումնասիրում են մարդուն այս կամ այն տեսանկյունից: Այդ գիտությունների ցանկը ձեզ քաջ ծանոթ է, քանի որ «Հասարակագիտություն» դասընթացը դուք անցել եք այդ բաղադրիչներով: Կան մարդուն ուսումնասիրող այլ գիտություններ ևս, բայց մենք կանդրադառնանք միայն նրանց, որոնց դուք արդեն ծանոթ եք: Մյուսների հետ կձանոթանաք ձեր ուսումնառությունը հետագայում շարունակելիս:





Խմբային աշխատանք

Այժմ բաժանվե՛ք խմբերի: Դ-ա կարող եք անել ըստ նախասիրության, եթե նախապատվություն եք տալիս վերոնշյալ գիտություններից որևէ մեկին, կամ պատահականորեն: Յուրաքանչյուր խումբ դասի մնացյալ ժամանակահատվածում և մինչև հաջորդ դասը պետք է ուսումնասիրի իրեն բաժին հասած գիտությունն ու դրան համապատասխան մարդու բնութագիրը և փորձի հաջորդ դասին ապացուցել, որ մարդուն ուսումնասիրող ամենակարևոր գիտությունը հենց իրեն բաժին ընկած գիտությունն է: Հաջորդ դասին դերային խաղ-բանավեճ անցկացնելու համար խմբերը պետք է ոչ միայն կարդան յուրացնեն ստորև առաջարկվող նյութը, այլև վերհիշեն նախորդ տարիներին հասարակագիտության դասընթացից իրենց ուսումնասիրած կարևոր գաղափարները, օգտագործեն Ինտերնետը, ՁԼՄ-ները, գրուցեն ավագների հետ: Սի խոսքով՝ նրանք պետք է փորձեն մի քանի օրվա ընթացքում դառնալ իրենց առաջարկված բնագավառները ներկայացնող գիտակներ՝ դրանց օգտին փաստարկելու համար: Հասկանալի է, որ այլ աղբյուրների կողքին ձեզ օգտակար կլինեն նաև 10-րդ և 11-րդ դասարանների հասարակագիտության դասագրքերը:



Իրավագիտությունն ուսումնասիրում է մարդկանց միջև առաջացող իրավական հարաբերությունները: Պատմականորեն նախնադարից ի վեր իր մարդկայնանալու գործընթացում մարդը ստեղծել է հասարակական երևույթներ, երբեմն ասում են՝ ինստիտուտներ, որոնք հնարավորություն են տվել պաշտպանելու մարդու իրավունքները: Սակայն մարդկային պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ իրավունքները տարբեր դարաշրջաններում ընկալվել են տարբեր կերպ: Վաղ անցյալում իրավունքն ընկալվել է որպես դասային պատկանելություն, եղել են ի սկզբանե իրավագուրկ և իրավունքներ ունեցող մարդիկ: Օրինակ՝ ստրուկները չեն ունեցել ազատություն, սեփականության ու այլ իրավունքներ, և դա համարվել է բնական: Պարտականությունների հարցում նույնպես եղել են տարբերություններ: Հնագույն իրավական հուշարձաններում պահպանվել են նորմեր, ըստ որոնց նույն հանցանքի համար արտոնյալ դասերի ներկայացուցիչները ավելի փոքր կամ թեթև պատիժներ են ստացել, իսկ ցածր դասերի ներկայացուցիչները՝ ավելի ծանր: Այնուամենայնիվ, մարդկային հասարակությունը զարգացել է դեպի իրավունքի գաղափարի լայնացում և խորացում: Այսօր արդեն հասարակության տարբեր շերտեր ու ներկայացուցիչներ համարվում են իրավունքի տեսանկյունից միմյանց հավասար: *Մարդը՝ որպես իրավական էակ, ընդունել է բոլորի հավասարությունն օրենքի առաջ՝ անկախ սեռից, մաշկի գույնից, ազգային կամ կրոնական պատկանելությունից, ունեցվածքից և այլն:* Այդուհանդերձ, նորագույն ժամանակները նոր խնդիրներ են առաջ բերում մարդու՝ որպես իրավական էակի առջև: **Իրավունքը** ապահովելու համար մարդը ստեղծել է **օրենք**, և օրենքի չարաշահումները բացառելու նպատակով հասարակությունը փորձել է այնպես անել, որ ունենալով օրինաստեղծ գործառույթներ՝ իշխանությունները չկարողանան ստեղծել ոչ իրավական օրենքներ: Այդ նպատակով ստեղծվել են սահմանադրական դատարաններ, որոնց գործառույթներից մեկը, ի թիվս այլոց, ընդունվող օրենքների իրավական բնույթի ստուգումն ու ապահովումն է՝ ելնելով երկրի կարևորագույն իրավական փաստաթղթից՝ **Սահմանադրությունից**: Իսկ Սահմանադրությունը՝ որպես կարևորագույն իրավական փաստաթուղթ, պետք է ընդունվի **հանրաքվեի**, այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքացու քվեարկության արդյունքում:



Արդի աշխարհում իրենց գործունեությունն իրականացնելիս մարդիկ անհրաժեշտորեն մտնում են իրավական հարաբերությունների մեջ՝ կնքում պայմանագրեր, ստանձնում պարտավորություններ, փորձում պաշտպանել և իրականացնել իրենց իրավունքները: Եվ հասկանալի է, թե որքան կարևոր է իրավագիտու-

թյունը մարդկանց բնականոն իրավահարաբերությունները կարգավորելու տեսանկյունից:

*Հերևե՛ք լրավորությանը և պարզե՛ք, թե մեր հասարակության կյանքում
ինչ հաճախությամբ են առաջանում իրավական բնույթի խնդիրներ:*

Բարոյագիտությունը մարդուն ուսումնասիրում է որպես բարոյական նորմեր ստեղծող ու դրանց հերևող էակի: Մարդ-բարոյական էակը ձգտում է հետևել արդարության պահանջին ու իրավական միջամտության կարիք չառաջացնել: Այսինքն՝ այնտեղ, որտեղ կա բարոյականություն, կլինի նաև օրինապահություն, եթե միայն օրենքները նույնպես հիմնված լինեն բարոյականության վրա: Մ.թ.ա. 6-րդ դարի չինացի փիլիսոփա Լաո Յզին ասում էր՝ որքան շատ օրենքներ և կարգադրություններ հրատարակվեն, այնքան երկրում կշատանա գողերի և ավազակների թիվը: *Հին չինացիները գրևում էին, որ օրենքն օրինախախտների համար է, իսկ արժանապատիվ քաղաքացիները պետք է հերևեն առաքինություններին ու սովորույթներին:*



Ինչ խոսք, չինացիները փոքր-ինչ ծայրահեղացնում էին, քանի որ օրենքը հարգելը և օրինապահությունն իրենց հերթին բարոյական արժեքներ են: Բարոյականությունը նույնպես կարգավորում է մարդկանց գործունեությունն ու փոխհարաբերությունները: Այն առաջանում է, երբ մարդիկ ձգտում են իրենց միջանձնային հարաբերությունները կառուցել բարոյական, մարդկային արժեքների հիման վրա: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում մարդկային տեսակի և այդ տեսակին պատկանող յուրաքանչյուր էակի զոյատևումը: *Բարոյականությունը դիմում է մարդու ներաշխարհին, և բարոյական մարդը սիսալ կամ մերժելի արարք չի կատարում ոչ թե այն պարճառով, որ վախենում է բռնվելուց, դատապարտվելուց, այլ այն պարճառով, որ ինքն այդ արարքը համարում է կատարելուն անարժան:* Արդի աշխարհում ակնհայտ է, որ ներքին բարոյական մտորման պակասն ու ապաբարոյականացումը բերում են քաոսի՝ վտանգելով հասարակության և առանձին մարդկանց բարեկեցությունը: Բարոյականության հիմնական հասկացություններից է առաքինությունը, որը պատմականորեն ծագել է «այր», «առն» բառից և նշանակել է քաջություն, արիություն: *Իրոք, բարոյական լինելը և բարոյական մնալու չգրումը ենթադրում են որոշակի քաջություն, արժեքներին ու սկզբունքներին հավատարիմ մնալու համարձակություն:*

Հերևե՛ք մեր պետական այրերի ու փրկմանց գործունեությանն ու փորձե՛ք հասկանալ՝ որքանով է այն համապատասխանում բարոյականության պահանջներին: Ի՞նչ էք կարծում, բարոյականությունը րեղ ունի՞՞ քաղաքականության մեջ, թե՞ դրանք միմյանց բացասող ոլորտներ են: Ինչո՞ւ:

Տնտեսագիտությունը մարդուն ուսումնասիրում է որպես արևմտություն վարող էակ: Հասարակության կենսագործունեության հիմքը որոշ մտածողներ համարում են տնտեսությունը՝ գտնելով, որ ինչպիսին տնտեսությունն է, այնպիսին էլ բարոյականությունն է, իրավունքն ու մշակույթը՝ նեղ իմաստով: Ինչ խոսք, տնտեսական հարաբերությունները էական դեր են կատարում հասարակական զարգացման գործընթացում: Սակայն չպետք է մոռանալ հոգևոր իրականության ինքնուրույն գոյության ու նաև առաջ ընկնելու հատկության մասին: Առայժմ, սակայն, իմաստասերները փաստում են, որ «**տնտեսական մարդը**» դեռևս թելադրում է իր պարտադրանքը «**մշակութային մարդուն**», դեռևս տնտեսական շահույթի շարժառիթն ավելի ազդեցիկ է արդի հասարակությունում, քան, այսպես կոչված, հոգևոր շահը: Տնտեսական գործոնի արդի համակողմանի ազդեցության պարագայում կարևորվում է տնտեսագիտություն ուսումնասիրելը, որը հնարավորություն է տալիս պլանավորել ապագա գործողությունները, անձնական և, օրինակ, պետական բյուջեների հոդվածները, լուծել ընթացիկ բազմազան տնտեսական խնդիրներ: Մարդն ուզենա, թե ոչ, օրինաչափորեն ներքաշված է տնտեսական հարաբերությունների մեջ, և այս բնագավառի իմացումը նրան կարող է հետ պահել սխալներից: Արդի տնտեսական գլոբալ ճգնաժամների դարաշրջանում անգամ հասարակության քաղաքական կառույց հանդիսացող պետություններն են իրենց պահում որպես տնտեսական գործիչներ:



Հերևե՛ք մեր պետության արտաքին քաղաքական հարաբերությունների ու փորձե՛ք հասկանալ, թե դրանց որ մասն է պարմառավորված արևմտական գործոններով:

Քաղաքագիտությունը մարդուն ուսումնասիրում է որպես քաղաքական հարաբերություններ իրականացնող էակ: Դուք հիշում եք, որ դեռևս Արիստոտելն էր մարդուն անվանում **քաղաքական էակ**: Այսինքն՝ մի էակ, որ չի կարող մեկուսացած ապրել, որ անհրաժեշտորեն ստեղծում է որոշակի քաղաքական կազմավորումներ: Մի էակ, որ ելնելով շահերի մնանությունից՝ ձեռք է բերում դաշնակիցներ, զարկ է տալիս համագործակցության:

Դուք հիշում եք, որ անգլիացի փիլիսոփա Թոմաս Հոբսը առաջարկել է **հասարակական դաշինքի** տեսությունը: Ըստ այդ ուսմունքի՝ մարդիկ սկզբում, անիշխանության պայմաններում գտնվել են «բոլորի դեմ բոլորի պատերազմի» վիճակում: Այա զգալով, որ համընդհանուր թշնամության և լարվածության այդ վիճակը ոչ մեկին լավ բան չի խոստանում՝ որոշել են հասարակական դաշինք կնքել և իշխանությամբ օժտել իրենց միջից ընտրված առաջնորդներին՝ պայմանավորվելով ենթարկվել նրանց կամքին: Այս դաշինքը ծնում է քաղաքական կարևորագույն կազմավորում՝ պետություն, որի հանդեպ վերաբերմունքը նույնպես զարգացել փոխվել է պատմության ընթացքում: Եթե երկար ժամանակ տիրապետող



մտայնությունն այնպիսին էր, որ մարդիկ պետք է ծառայեն պետությանը, ապա մարդու իրավունքների և հասարակական զարգացման արդի միտումների արդյունքում ձևավորվեց պետական իշխանության նոր հարացույց. պետությունը դիտվեց որպես մարդկանց ազատություններն ու իրավունքները ապահովող կառույց: Պետական իշխանությունը սկսեց ընկալվել որպես հասարակությանն արված ծառայություն, իսկ իշխանավորները՝ որպես ծառայողներ: Սա կարևոր արժեքային մոտեցում է, քանի որ *ժողովրդավարական հասարակություններում իշխանությունը պայտկանում է ժողովրդին, և պետական իշխանությունները պարզապես ծառայում են գերագույն իշխանավորին՝ այդ*

նույն ժողովրդին: Յավոք, վերոնշյալ միտքը դեռևս ավելի շուտ ընկալվում է որպես ցանկալի նպատակ, բայց ոչ իրականություն: Դրան հասնելու համար պետք է փոխվեն և՛ իշխանավորների, և՛ հասարակ քաղաքացիների մտածելակերպն ու արժեքային կողմնորոշիչները:

Ձեր համայնքի կյանքից կարո՞ղ եք նշել հանրային քաղաքականությանը վերաբերող որևէ խնդիր, որ առաջ եք քաշել դուք կամ ձեր ծանոթները: Կա՞րողոք պատասխանատու մարմինների կողմից լուծում ստացած նման որևէ հիմնախնդիր:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր քաղաքացիների կողմից համայնքային հիմնախնդիրների վերհանումը: Դա ի՞նչ կարող է տալ ժողովրդավարությանը, մեր հասարակության կյանքի բարելավմանը:

Հոգեբանությունը ուսումնասիրում է մարդուն որպես հոգեկան կյանք ունեցող էակի: Հոգեբանության խնդիրն է օգնել մարդուն ճանաչել ինքն իրեն: Ծանաչել իրեն բնորոշ հոգեբանական առանձնահատկությունները, օրինակ՝ հիշողության ծավալը, կենտրոնանալու և հակազդեցություններ տալու արագությունը, մտապահելու և մտաբերելու հեշտությունը կամ դժվարությունը, հույզեր ու զգացմունքներ ապրելու ուժգնությունը և այլն, և այլն: Ծանաչելուց հետո հոգեբանությունը կարող է օգնել զարգացնել որոշ ցանկալի հատկություններ, օրինակ՝ սովորել լավ մտապահել, մարզել ուշադրությունը, կամքը և այլն: Հոգեբանության խնդիրն է *նեցուկ լինել մարդուն, հնարավորություն տալ նրան բացահայտելու և իրականացնելու իր ներուժը, արեղծագործաբար հարմարվելու ինքն իրեն և շրջապատող հարստ ուսումնականներին:*

Եթե ավանդական հասարակություններում մարդիկ ավելի հաճախակի ու հարցերի ավելի մեծ շրջանակներում էին շփվում միմյանց հետ, ապա արդի հասարակությունում այնքան են առաջ մղվել գործարար հարաբերությունները, որ մարդկանց անձնական շփումների համար քիչ տեղ է մնացել: Դրա հետևանքով շատ մարդիկ գրկվել և գրկվում են *մարդուն փրկած մեծագույն շքեղությունից՝ շփումից*: Իսկ սակավ շփվելով ծնողների, հարազատների, հասակակիցների ու մտերիմների հետ՝ մարդիկ մի շարք հոգեբանական հիմնախնդիրների դեմ հանդիման մնում են մենակ: Նրանք չեն կարողանում լուծել այնպիսի խնդիրներ, որ ավանդական հասարակությունների ներկայացուցիչների համար ոչ մի դժվարություն չէին ներկայացնում: Միայնակ՝ ավանդույթից ու մարդկանցից կտրված մարդու համար շատ հոգեբանական երևույթներ դառնում են դժվար հաղթահարելի: Հոգեբանությունն օգնության է հասնում այստեղ՝ հնարավորություն տալով գրքի, Ինտերնետի միջոցով կամ անմիջականորեն շփվելով հոգեբանի հետ ստանալ որոշ պատասխաններ ու հաղթահարել հուզող խնդիրները:



Թեպետ այժմ կան բազմաթիվ հոգեբանական ծառայություններ, սակայն *ցանկալի կլինեն, եթե մարդն աշխատեր դառնալ ինքն իր հոգեբանը, չեռք բերեր հոգեբանական վերլուծություն կատարելու որոշակի ունակություն և հիմնախնդիրներ լուծելու որոշ հմտություններ*:

Ունե՞ք արդյոք ինչ-որ խնդիրներ, որոնց շուրջ կցանկանայիք գրուցել հոգեբանի հետ: Բացի հոգեբանից, ի՞նչ եք կարծում, էլ ո՞ւմ կարելի է դիմել նման հարցերով:

Գեղագիտությունը մարդուն ուսումնասիրում է որպես գեղեցիկի պահանջ-մունք ունեցող էակի: Իսկ գեղեցիկը, ինչպես հիշում եք, տիեզերական երևույթ է, նրանով հագեցած է մեզ շրջապատող ողջ իրականությունը: *Գեղագիտական ճաշակ ունեցող մարդու համար ողջ գոյավորը հանդես է գալիս որպես մի մեծ սրեղծագործություն, որում ամեն ինչ ներդաշնակ է ու գնահատելի*: Գեղեցիկի զգացում ունեցող մարդիկ արժևորում են նաև մարդկային առօրյա իրականության գեղեցկությունը: Նրանք չեն կարող խաթարել այն՝ օգտագործելով տգեղ բառեր ու արտահայտություններ, հանդես բերելով վարքի տգեղ դրսևորումներ... Այդպիսի մարդիկ կպահպանեն մարդկային հարաբերությունների ներդաշնակությունը՝ ձգտելով չաղավաղել դրանք անհարկի միջամտություններով, բախումներով և այլն...

Սակայն մտածե՞ք՝ շա՞տ են արդյոք նման մարդիկ: Իսկ պե՞տք է, որ լինեն նման մարդիկ: Դուք կուզե՞նայի՞ք լինել այդպիսին, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

Գեղեցիկի զգացումը, ինչ խոսք, մարդու էական բնութագրերից մեկն է: Սակայն այն կարող է խեղվել ու խեղաթյուրվել: Դա տեղի է ունենում այն ժամանակ,

երբ մարդը հանդես չի բերում որոնող, իմաստավորող ու արժևորող մոտեցում, այլ պասիվ կերպով տրվում է իրեն շրջապատող կեղծ մշակույթին:

Գպրոցականների շրջանում փարսածված են լեզվական աղավաղումներ, խոսքի ոչ տեղին օգտագործումներ և այլն: Ինչո՞ւ: Պարճառն այն է, որ ենթարկվելով շրջապատի որոշ «հեղինակությունների», որոշ դպրոցականներ սկսում են կապկել նրանց՝ զիջելով իրենց գեղագիտական որոշ սկզբունքներ, և շուտով նույնիսկ սկսում են գեղեցկություն տեսնել նման խեղաթյուրումների մեջ...



**Ե. Թարևոյան.
Կոմիպաս**

Յավոք, ճաշակի համընդհանուր անկումն այսօրվա հասարակության հիվանդ կողմերից մեկն է, և գեղագիտությունը՝ որպես մարդուն ուսումնասիրող գիտություն, խնդիր է դնում հասկանալ նման իրավիճակի պատճառներն ու դրանից դուրս գալու ելքերը: Խնդիրը լուծելու համար գեղագիտությունն ուսումնասիրում է գեղագիտական իդեալները մարդու իդեալի հետ դրանց ունեցած կապակցության մեջ: Գեղագիտությունը մարդուն հնարավորություն է տալիս գեղեցիկի, վեհի միջոցով կրթվելու և ինքնակրթվելու՝ նման ցանկություն ունեցող մարդկանց մեջ առաջացնելով զգալ-մտորելու, իսկական գեղեցկությունն ընկալելու կարողություն...

Իր մեջ փիլիսոփայություն պարունակող հոգին չի կարող իր առողջությամբ չհամակել և մարմինը: Նրանում իշխող հանգստությունն ու գոհությունը չի կարող չճառագել շուրջը...

Միշել Մոնտեն

Փիլիսոփայությունը ուսումնասիրում է մարդուն և նրան շրջապատող իրականությունն իր ամբողջության մեջ:

Փիլիսոփայությունը, ինչպես արդեն գիտեք, սեր է իմաստության հանդեպ: Սա նշանակում է, որ իմաստությունն անասիման է, ու դրան հասնելը՝ համարյա անհնար: Սակայն իմաստության հանդեպ սերը դիրքորոշում է, որը մղում է մարդուն

որոնումների, խորհրդածությունների: Իմաստությունը միայն գիտելիքների շատությունն ու խորությունը չէ. պարտադիր չէ, որ իմաստուն մարդն ամեն ինչ գիտենա: Բայց իմաստունը ձեռք է բերում այնպիսի աշխարհայացք, որ նրան հնարավորություն է տալիս անվրդով նայելու աշխարհին և ունենալու ներքին հանդարտություն: *Փիլիսոփայության՝ որպես առ իմաստություն սիրո այս ընկալման մեջ երևում է նրա մի այլ կարևոր կողմ ևս. փիլիսոփայությունը սեր է, այսինքն՝ այն չի կարող լինել զուր մրաժակյան կառույց, այն միշտ ենթադրում է վերաբերմունք, հոգատարություն: Փիլիսոփայությունը հոգատարություն է մարդու հոգու հանդեպ, որը հնարավորություն է տալիս ձևավորել մարդու հոգին, աշխատանք տանել նրա գեղեցկացման ու ներդաշնակեցման ուղղությամբ:*



*Օ. Ռոդեն
Մրաժողը*

Փիլիսոփան հանդես է գալիս խնամող խորհրդատուի դերում՝ փորձելով պատասխանել մարդուն հուզող բազմաթիվ հարցերի կյանքի, բնության, հասարակության ու մարդկանց մասին, տալով նրան փոփոխական իրողությունների հորձանուտում կարևոր-էականը վերհանելու և կողմնորոշվելու հնարավորություն, հոգու հանդարտությունը վերագտնելու կարողություն:

Փիլիսոփայության մեջ համադրվում են տեսական ու գործնական կողմերը, քանի որ փիլիսոփայությունը սոսկ ճանաչողություն չէ: Այն ավելի շուտ *կյանքն արժանապարհիվ ապրելու արվեստ է*: Պատահական չէ, որ Դավիթ Անհաղթը փիլիսոփայության այդ կողմը մեկնաբանելու համար մեջքերում է Հին աշխարհի մեծագույն իմաստասեր **Պլատոնին**՝ նշելով, որ «Դեռևս Պլատոնն ասում էր, թե փիլիսոփա է անվանում ոչ թե նրան, ով շարք բան գիտե, և ոչ էլ նրան, ով կարող է շարք բաների մասին խոսել, այլ նրան, ով անբիծ ու անարար կյանք է վարում, որը հենց գործնական իմաստասիրությունն է»:

Ի՞նչ էք հասկանում «անբիծ ու անարար կյանք» ասելով: Ի՞նչ էք կարծում, պե՞տք է չգրել նման կյանք ապրել, թե՞ ոչ: Ինչո՞ւ...

Փիլիսոփայությունը գիտությունների ու արվեստների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ այն հանդես է գալիս որպես մի «ընդհանուր հայտարար», որն ի մի է բերում մարդկային գործունեության տարատեսակ ձևերը՝ հարաբերելով դրանք մարդկայնության տեսանկյունից: *Փիլիսոփայությունը տեսական գիտություններին հնարավորություն է տալիս գտնել իրենց գոյության հիմնավորումները, իսկ գործնականներին օգնում է այնպես գործել, որ չվնաս-*

սեն... Բոլոր մասնավոր գիտություններն ու արվեստներն իրենց սկզբունքները վերցնում են փիլիսոփայությունից, որն էլ իր հերթին մեկնաբանում է մասնավոր գիտությունների ու արվեստների բերած նորույթներն ու որոշում դրանց արժանի տեղը մարդու հոգևոր մշակույթի գանձարանում:

Քանավեճ

Յուրաքանչյուր խումբ հանդես կգա իր ընտրած բնագավառի օգտին ելույթով, որից հետո մյուս խմբերի ներկայացուցիչները կարող են երկու-երեք հարց ուղղել ելույթը ներկայացրած խմբին: Բանավեճից հետո կարող եք քննարկել հետևյալ հարցերը:

Հարցեր քննարկման համար

1. Կա՞նք արդյոք կարևոր և անկարևոր գիտություններ: Ինչո՞ւ:
2. Ինչո՞ւմն է քննարկվող գիտությունների հասարակական կարևորությունը:
3. Ձեր կարծիքով՝ նշված գիտաճյուղերից որո՞նք են արդիական, որոնք՝ ոչ: Ինչո՞ւ:
4. Այդ գիտությունների ներածական դասընթացների ուսումնասիրությունն արդյոք օգնո՞ւմ է մասնագիտական կողմնորոշման ճանապարհին, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
5. Ո՞րն էր բանավեճի ընթացքում հնչած ամենաուժեղ փաստարկը: Ինչո՞ւ:

Փիլիսոփայության վեց սահմանումներն ըստ Դավիթ Անհաղթի



- ◆ Փիլիսոփայությունը գիտություն է գոյերի մասին:
- ◆ Փիլիսոփայությունը գիտություն է մարդկային ու Աստվածային իրողությունների մասին:
- ◆ Փիլիսոփայությունը մտածմունք է մահվան մասին:
- ◆ Փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության:
- ◆ Փիլիսոփայությունը գիտությունների գիտությունն է և արվեստների արվեստը:
- ◆ Փիլիսոփայությունը սեր է առ իմաստություն:

ԳԱՍ 19. ՄԱՐԴԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԷՍԿ



Ընթերցե՛ք տեքստը

*Հին աշխարհքը ամեն օր
Հազար մարդ է մտնում նոր,
Հազար տարվան փորձն ու գործ
Ըսկրավում է ամեն օր:*

Հովհաննես Թումանյան

... Ես ելնում եմ բեմ: Հնչում է երաժշտությունը: Սկսում եմ երգել: Գահլիճը քարանում է հիացմունքից... Շունչները պահած լսում են Կոմիտասի երգի հրաշալի հնչյուններն իմ կատարմամբ: Արդեն մարել են երգի վերջին ելևէջները, բայց հանդիսատեսը դեռ ուշքի չի եկել: Քիչ անց, սթափվելով, դահլիճը երկարատև, բուռն ծափահարություններով ողջունում է ինձ...:

...Ինձ մոտ են բերում մի հիվանդի, որին ասել են, որ իր հիվանդությունն անբուժելի է: Սակայն ես հայտնաբերել եմ այդ հիվանդության բուժման եղանակը և պատրաստվում եմ վիրահատության: Ո՛չ հիվանդը, ո՛չ նրա հարազատները հրաշքի չեն հավատում: Բայց ունեն աղոտ հույս: Հաջող վիրահատությունից հետո նրանք ինձ անվանում են հրաշագործ: Ինձ սիրում են, քանի որ ես փրկում եմ մարդկային կյանքեր...:

Դուք ընթերցեցիք հատվածներ չեր հասակակիցների շարադրանքներից: Նրանք համաշայնել էին գրել իրենց երազանքների մասին: Երևի նման կամ այլ երազանքներ ունեք նաև դուք:

Իսկ ձեր երազանքներին հասնելու համար ի՞նչ եք անում այսօր, հենց հիմա: Եթե երգիչ կամ երգչուհի դառնալ ցանկացող ձեր հասակակիցն իր վերոբերյալ տեսիլքը պատկերացնելուց հետո ծուլանա բացել նոտայի տետրն ու անել ձանձրալի թվացող վարժությունը, իսկ բժիշկ/բժշկուհի դառնալ ցանկացողը չտվորի, օրինակ, քիմիայի կամ կենսաբանության դասը, ապա նրանց երազանքները կմնան լոկ երազանքներ...:

Ինչ խոսք, դուք հսրակ տարբերում եք երազանքները նպատակներից: Գիտեք, որ երազել կարելի է ամեն ինչի մասին, քանի որ մարդկային երևակայությունն անսահման է: Բայց դուք չգրում եք դնել իրատեսական նպատակներ:

Իսկ չե՞ք մտածել, որ որոշ երազանքներ ունեն իրականանալու հատկություն: Երազանքները կա-



րող են իրականանալ, եթե դուք ձեր ամենօրյա գործունեությամբ ձեզ մոտեցնեք այն «մարդուն, որ կցանկանայիք լինել»...

*Գործել... Գործել... Ահա այն, հսկունս
ինչի մենք գոյություն ունենք...*

Յոհան Ֆիխտե

Մարդը գործող էակ է, և գործունեությունն աշխարհի հետ հարաբերվելու մարդուն բնորոշ չեն է:

Գործունեությունն ինչ-որ բան անելու մարդուն հատուկ եղանակն է: Կենդանիներն էլ են ինչ-որ բան անում. դա երբեմն անվանվում է «բանել»: Կենդանիները բանում են, քանի որ նրանց գործողությունների հիմքում հաճախ դրված է «բնական ծրագիր»՝ բնագրը, կամ որոշակի գործողություններ անելու մեխանիկական նույնանման կադապարը:

Մարդը գործում է և ոչ թե բանում, այսինքն՝ մարդն ինքն է «ծրագրավորում» իրեն՝ որոշելով ինչ անել և ինչպես անել: Կենդանական աշխարհի ողջ «գործունեությունը» հազարամյակներ ի վեր մնացել է շրջապատող միջավայրին հարմարվելու շրջանակներում, և կենդանիներն անում են միայն այն, ինչում «մասնագիտացել են»:



Ժ. Է. Լիոպար.
Շոկոլատ մալուցողը

Մարդն իր նպատակամղված գործունեության շնորհիվ կարողացել է վերափոխել իրեն փրված միջավայրը և ոչ միայն հարմարվել, այլև միջավայրը հարմարեցնել իրեն: Մարդը կարողացել է իրականացնել գործունեության տարատեսակ ձևեր. տուն կառուցել, կամուրջ սարքել, տիեզերանավ ուղարկել ուղեծիր, ինքնաթիռով կամ նավով կատարել շուրջերկրյա ճանապարհորդություն և այլն, և այլն:

Մարդն ունի նպատակներ: Ինչ խոսք, կենդանիներն էլ կարծես ունեն նպատակներ. նրանք թաքնվում են թշնամիներից, որս են անում սնվելու համար, բույն են սարքում ձագերին մեծացնելու համար: Բայց կենդանիների «նպատակները» հազարամյակներ շարունակ մնացել են նույնատիպ. նպատակը եղել է գործողության անմիջական արդյունքը: Միայն մարդն է, որ կարողանում է դնել միջնորդավորված նպատակներ: Մարդը կարող է ունենալ մեծ ռազմավարական նպատակ, որին հասնելու համար կարող է

տարիներով իրականացնել տարատեսակ բազմաթիվ մարտավարական նպատակներ:

Երեք շինարար աշխարհում են: Անցորդը մոտենում է նրանց ու հարցնում. «Ի՞նչ եք անում»: Առաջին շինարարը պատասխանում է. «Պար եմ շարում», երկրորդ շինարարն ասում է. «Առաջին սենյակն եմ ավարտում»: Երրորդ շինարարը պատասխանում է. «Դպրոց եմ կառուցում»:

Ի՞նչ եք կարծում, նրանք նո՞ւյն գործունեությանը են զբաղված: Ինչո՞ւ:

*Հազար ճամփա է մեզ շեղում նպատակից,
մինչ դեպի այն տանում է լուկ մեկը...*

Միշել Մոնտեն

Նպատակը ակնկալվող արդյունքի գիտակցված պատկերն է, այսպես կոչված՝ պեյսալանը, որին հասնելուն է ուղղված մարդու գործունեությունը:

Նպատակներ դնելու կարողությունը նույնպես մարդ էակին բնորոշ հատկանիշ է: Մարդու մասին կարելի է մտածել ըստ այն նպատակների, որոնք նա դնում է:

Նպատակներին հասնելու համար մարդն օգտագործում է բազմաթիվ հանգամանքներ, որոնք անվանվում են միջոցներ: Իմաստասերները ցավով նշում են, որ արդի հասարակության մեջ երբեմն միջոցներն են դառնում նպատակ:

Ըստ վիճակագրության՝ տնտեսապես զարգացած երկրներում, որպես կանոն, համեմատաբար շքեղ մեքենաներ գնում են այն մարդիկ, որոնց եկամուտը բավարարում է ընտանիքի առաջին անհրաժեշտության բոլոր պահանջներին:

Կենսական անհրաժեշտ բոլոր պահանջները բավարարելուց հետո միայն մարդիկ իրենց թույլ են տալիս գնել շքեղ մեքենաներ: Իսկ տնտեսապես չզարգացած որոշ երկրներում համեմատաբար շքեղ մեքենաներ կարող են գնել նաև մարդիկ, որոնց ընտանիքները, երեխաները չունեն լիարժեք, առողջ սնունդ կամ չեն օգտվում բժշկական ծառայություններից: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է այդպես:



**Պ. Օ. Ռենուար.
Ընդամենական դիմանկար**



Նպատակ դնելու կարողությունը մարդու կարևոր բնութագրերից է: Բայց ոչ պակաս կարևոր է նաև *նպատակաւաւացությունը, նպատակին հասնելու կամքի ուժն ու ժամանակն օգտագործելու կարողությունը*: Պետք է հիշել, որ մեծ նպատակները չեն կարող իրականանալ միանգամից: Նախ և առաջ պետք է այդ մեծ նպատակները մասնատել ավելի փոքր նպատակների: Ապա որոշել, թե այդ փոքր նպատակներին հասնելու համար ինչպիսի գործողություններ պետք է կատարել և ինչ ժամկետներում: Իսկ հետո ամենադժվար պահն է գալիս. *պետք է կարողանալ ամեն օր, ամեն շաբաթ կամ ամիս կատարել նպատակի այն բաժինը, որ դրել եք տվյալ ժամանակահատվածի համար*: Եթե ձեր մեջ մշակեք նպատակներին հասնելու մտան մեխանիզմ, շատ ավելի մեծ կլինի նպատակներին հետագայում հասնելու հավանականությունը: Հիշեք կարևոր սկզբունք. *պետք է ժամանակի ամեն մի փուլի ավարտին ինքներդ ձեզ հաշվեքու լինեք*: «Կատարե՞լ եմ արդյոք այն ամենը, ինչ պետք է անեի ժամանակի տվյալ պահին: Եթե ոչ, ապա հաջորդ փուլի համար ի՞նչ լրացուցիչ ջանքեր պետք է ներդնեմ, որպեսզի լրացնեմ բացը»:

Ինչ խոսք, դուք հիշում եք, որ մարդը ժամանակավոր՝ անցավոր էակ է, այսինքն՝ անցած ժամանակն այլևս չի վերադառնում:

Եվս մեկ իմաստասիրական դիտարկում. ժամանակը հոսք է, որը կարող է չափվել տարբեր մեծություններով: Այն կարող է չափվել ժամերով, օրերով, ամիսներով: Բայց կարող է չափվել նաև մարդու արած գործերով: Պայմանականորեն ընդունենք, որ Ա-ն մեկ օրում հասցնում է կատարել, ասենք, երեք գործ,

իսկ Բ-ն՝ միայն մեկ: Գործերով հաշվելու դեպքում կարելի է ասել, որ Ա-ն մեկ օրում ապրում է Բ-ի ապրած երեք օրվան համարժեք ժամանակահատված: Չարմանալի՞ է...

Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել նման պարադոքսալ դիպրա-կումից:

Հարցեր

1. Ինչպե՞ս կբացատրեք «Մարդը գործող՝ ակտիվ էակ է» արտահայտությունը:
2. Ի՞նչ է գործունեությունը:
3. Ի՞նչ է նպատակը: Ինչպիսի՞ նպատակներ է դնում մարդը:
4. Վերածննդի դարաշրջանի իտալացի քաղաքական փիլիսոփա Նիկոլո Մաքիավելին համաձայն էր, որ նպատակն արդարացնում է միջոցները: Ի՞նչ եք մտածում այդ պնդման մասին:
5. Հիշե՛ք, որ ֆրանսիացի իմաստասեր Մ. Մոնտենն ասում էր. «Ես ուզում եմ, որ մարդիկ գործեն, որ կյանքի կողմից առաջադրված պարտականությունները կատարեն լիովին, որքան դա հնարավոր է»: Փորձեք բացատրել Միշել Մոնտենի նաև այն միտքը, որ նպատակից շեղող հազար ճանապարհ կա, մինչդեռ դեպի նպատակ ճանապարհը մեկն է:
6. Մարդն ինչո՞վ է նմանվում կենդանիներին և ինչո՞վ առանձնանում նրանցից:
7. Մարդու ապրած կյանքի ժամանակը կախվա՞ծ է արդյոք մարդու գործուն լինելուց: Ինչո՞ւ:

Առաջադրանք

Տանը առանձնացե՛ք հարմարավետ դիրքով ու մտածե՛ք ձեր որևէ կարևոր նպատակի մասին: Փակե՛ք աչքերն ու փորձե՛ք ակնառու պարկերացնել, թե ձեր նպատակն արդեն կատարված է: Պարկերացրե՛ք իրավիճակը, մարդկանց: Կարող եք լսել նրանց ձայները, խոսքը: Չգացե՛ք, թե ինչ հույզեր ու զգացմունքներ ունեք այդ վիճակում, երբ իրականացել է ձեր տվյալ նպատակը: Բացե՛ք աչքերը:

Տրամաբանորեն դատելով՝ նշե՛ք այն քայլերը, որոնք պետք է կատարեք ձեր նպատակին հասնելու համար: Ենթադրենք, նպատակ ունեք լողալ սովորել: Սահմանեք այդ նպատակին հասնելու վերջնաժամկետ: Ենթադրենք՝ երկու ամիս: Այս հարցերը ինքնե՛րդ ձեզ, թե ինչ պետք է անել տվյալ նպատակին տվյալ ժամկետում հասնելու համար: Ենթադրենք, թե պետք է.

1. գնել լողալ սովորելու ձեռնարկ,
2. կարդալ այն,
3. գնել լողագգեստ և անհրաժեշտ պարագաներ,
4. գնալ լողի պարապմունքների:

Հաջորդ քայլով որոշե՛ք, թե վերոնշյալ գործողություններն ինչ ժամկետներում եք պատրաստվում անել: Կարանաք արորև բերվող աղյուսակին նման աղյուսակ.

Քայլեր լողալ սովորելու համար	Ժամկետներ	Գիտողություններ	Նշում կատարման մասին
Գնել լողալ սովորելու ձեռնարկ	Օրինակ՝ նոյեմբերի մեկին	Ընկերոջ տուն գնալու ճանապարհին մտնել գրախանութ	
Կարդալ ձեռնարկը	Նոյեմբերի երկուսից	Օրեկան 20 բույս հատկացնել այն ընթերցելուն	
Ընթերցումն ավարտել	Նոյեմբերի տասին		
Պարզել, թե որտեղ է լողավազանը, որտեղ անց են կացնում լողի պարապմունքներ	Նոյեմբերի մեկից տասը	Հարցնել ծանոթներից, նայել Ինտերնետում, հեռախոսային տեղեկագրում	
Այցելել լողավազան, ընդունվել խմբակ	Նոյեմբերի տասներկուսին		
Գնել լողազգեստ և անհրաժեշտ պարագաներ	Նոյեմբերի 13-ին	Մարզչին հարցնել, թե որտեղ են վաճառվում լավագույն պարագաները	
Մասնակցել պարապմունքներին	Նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը	Դասավորել մյուս գործերն այնպես, որ պարապմունքների համար անհրաժեշտ ժամանակ լինի	
Եթե լինեն չյուրացված դետալներ, դրանց համար լրացուցիչ դիմել մարզիչի օգնությանը	Դեկտեմբերի 15-30-ը	Մարզչին խնդրել գնահատել լողալու ձեռք բերած հմտությունները և տալ խորհուրդներ	

Ձեր աղյուսակի չորրորդ սյունակը շատ կարևոր է: Չգտեք, որ կատարման մասին նշումը միշտ առկա լինի: Անկանխատեսելի հանգամանքների կամ խոչընդոտների դեպքում փոքր-ինչ տեղաշարժեք ժամկետները: Հաշվի առեք նաև կատարման որակը, թերություններ կամ բացեր ունենալու դեպքում սահմաններ լրացուցիչ պարապմունքներ:

Նման աղյուսակների միջոցով մեծ նպատակները հաջորդաբար քայլերի վերածելու և դրանք հետևողականորեն իրականացնելու հմտություն ձեռք բերելով՝ դուք կարող եք դառնալ ավելի նպատակասլաց:

Նման աղյուսակներ կարող եք կազմել չեզ համար ցանկալի փարբեր նպատակներին հասնելու և ժամանակն արդյունավետորեն օգտագործելու համար:

ԴԱՍ 20. ԽԱՂԸ, ՌԻՍՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ



Ընթերցե՛ք տեքստը

*Միրո՛ւն մանկիկ, ես գնում եմ, դու գալիս ես այս աշխարհ,
Ճշմարիտը ես փորձով գիտեմ, ու խոսքերս մի՛ մոռնար,
Կյանքն է ամսյի փախչող սրվեր, վայրկյանն է միշտ իրական,
Բահարի կռանը կամքն է թեև, բայց դիպվածն է տիրական...
Խաղերով լի այս աշխարհում խաղդ եթե տանուլ տաս,
Զվարթ եղիր ու աշխատով քահարի վրա կրիսնդաս...*

Ավետիք Իսահակյան

Գործող էակ մարդն իր կյանքի տարբեր փուլերում հանդես է գալիս գործունեության տարբեր ձևերով: Երեխան, վաղ մանկությունից սկսած, իր ժամանակի մեծ մասն անց է կացնում **խաղալով**: Դպրոց գնալով՝ երեխան սկսում է ավելի ու ավելի շատ ժամանակ հատկացնել **ուսմանը՝ սովորելուն**: Դուք այժմ պատրաստվում եք ավարտել դպրոցը, սակայն շարունակելու եք ուսում ստանալը բարձրագույն կամ այլ ուսումնական հաստատություններում, որպեսզի ապագայում ունենաք մասնագիտություն և կարողանաք աշխատել: *Պայմանականորեն կարելի է ասել, որ մանկությունը խաղալու ժամանակն է, պատանեկությունն ու վաղ երիտասարդությունը՝ սովորելու, իսկ հասունության փուլում մարդն աշխատում է*: Սակայն քանի որ մարդկային գործունեության երեք տեսակները՝ խաղը, ուսումը և աշխատանքը, միշտ էլ առկա են մարդու կյանքում, պարզապես տարբեր համակցություններով: Մարդը **խաղացող, սովորող և աշխատող էակ է**: Այժմ տեսնենք, թե ինչ են խաղը, ուսումը և աշխատանքը:



Մ. Մարյան.
Հողային աշխատանքներ

Յոհան Հայզինգա

Դառնալ հասուն տղամարդ նշանակում է ձեռք բերել այն լրջությունը, որ ունեիր երեխա ժամանակ... խաղալիս...

Ֆրիդրիխ Նիցշե

Խաղը մարդկային կեցության հիմնական բնութագրերից մեկն է: Եթե ուշադիր դիտարկելու լինենք մարդկային գործունեության բազմազան արտահայտությունները, կտեսնենք, որ դրանցում այս կամ այն չափով առկա է խաղարկային տարրը:

Հարսանիքներում, օրինակ, խաղային տարրն արտահայտվում է այն պայմանական դերերով և կանոններով, որ իրականացնում են մարդիկ: Օրինակ՝ զարդարում են «կենաց ծառ», «աղվես» են ուղարկում խնամիների մոտ, դաշույնով «փակում են» փեսայի ճանապարհը և այլն, և այլն:

Խաղարկային տարրն առկա լինելով մարդկային ողջ գործունեության մեջ, առավել ուժգին արտահայտված է արվեստում և սպորտում: Ասում ենք «դերասանի հարուստ խաղ», «օլիմպիական խաղեր», «խաղեր բորսայում» և այլն...

Հիշեք «խաղ» բառով որոշ արտահայտություններ և փորձեք բացատրել դրանք վերև ասվածի համապետությամբ:

Ըստ հոլանդացի փիլիսոփա և մշակութաբան **Յոհան Հայզինգայի**՝ խաղը մարդկային մշակույթից հին է, քանի որ խաղը՝ որպես ակտիվության ձև, առկա է



նաև կենդանական աշխարհում: Բայց մարդու աշխարհում խաղն արդեն դուրս է գալիս բնագոյային գոտուց, իմաստավորվում: Խաղում առկա է թևավորող հաճույքի զգացողությունը, որը կենտրոնանում է ոչ այնքան նպատակի (թեև դա էլ կարող է լինել, ինչպես, օրինակ, սպորտում), որքան ընթացքի վրա: Մարդկային գործունեության բոլոր ոլորտներում հանդես են գալիս խաղի ակնհայտ կամ թաքնված ձևեր, մարդը բոլոր տարիքներում էլ երբեմն-երբեմն հայտնվում է խաղարկային իրադրություններում:

Խաղը երբեմն զուգորդվում է անլրջության հետ, այնինչ խաղին իրոք տրվել են-

թաղրում է մեծագույն լրջություն: Գերմանացի իմաստասեր **Ֆրիդրիխ Նիցշեի** վերոբերյալ ասությամբ ամրագրված է այդ հանգամանքը: Պարզվում է, որ հասարակության լիարժեք անդամ դառնալու գործընթացում մարդը սովորում է «խաղի այն կանոնները», որոնք ընդունված են տվյալ հասարակությունում, տվյալ մշակություն: Եվ որքան լուրջ է նա դա անում, այնքան ավելի ներգրավված է լինում տվյալ հասարակության մեջ:

Խաղը գործունեության կարևոր տեսակ է, այնքան կարևոր, որ արդի հոգեբանները հաճախ մարդու հասուն տարիքում հանդիպող բացասական երևույթները կապում են մանկության ժամանակ խաղի պակասի հետ: Բնականոն զարգացման համար շատ կարևոր է, որ երեխան խաղա, որ մեծահասակները նույնպես ժամանակ տրամադրեն ու խաղան երեխայի հետ: Երեխան խաղալիս, բառի բուն իմաստով, մարդկայնանում է: Նա կատարում է, օրինակ, մոր, հոր, ուսուցչի, դեկավարի, նույնիսկ ձիու, շան, ավտոմեքենայի, ինքնաթիռի և այլևայլ դերեր՝ ձեռք բերելով նրանց հասկանալու կարևորագույն հմտություններ և հատունանալով: Ներկա համակարգչային դարում կարծես թե դուրս են մղվել դեռահասների բակային խաղերը, որոնք նույնպես նպաստում էին դեռահասների սոցիալականացմանը (այսինքն՝ հասարակության անդամ դառնալուն), ինչպես նաև ֆիզիկական զարգացմանը:

Ներկայումս դուք ի՞նչ շարժուն խաղեր եք խաղում միմյանց հետ: Թե՞ բավարարվում եք համակարգչային խաղերով:

Ես գիտելիքներով չեմ ծնվել...

Կոնֆուցիոս

Դուք արդեն ծանոթացել եք մարդու՝ ճանաչող էակ լինելու գաղափարին: Արդեն գիտեք, որ, ինչպես ասում էր **Կոնֆուցիոսը**, մարդը գիտելիքներով չի ծնվում, այլ իր նպատակամղված գործունեության՝ **ուսման, սովորելու** շնորհիվ է ձեռք բերում գիտելիքներ: Թեպետ մարդն իր ողջ կյանքում սովորում է, սակայն ընդունված է սովորելը համարել պատանեկության և երիտասարդության գլխավոր գործունեության տեսակը: Հայ իմաստասեր **Գավիթ Անհաղթը**, հետևելով հույն իմաստասեր **Պլատոնին**, ասում է. «Կրթիր քեզ՝ շար բաներից հավաքելով քո մեջ այն, ինչ ինքն է գալիս, քանի դեռ երիտասարդ ես: Իսկ եթե չանես այդ ժամանակին, գիտությունը կփախչի քեզանից»:



Ուշադիր եղեք մեր մեծ մտածողի այդ հորդորին, քանի որ նրանում կարևոր ճշմարտություն կա: Եթե մարդը երիտասարդ տարիքում չի սովորում իմացության արվեստը, ապա տարեց հասակում ինչ-որ բան սովորելու նրա ձիգերը կարող են անհաջողության մատնվել:

Մարդը սովորում է ամեն ինչ: Բացի դպրոցում ուսումնասիրվող դպրոցական առարկաներից, մարդը սովորում է անասելիորեն շատ բան: Նա սովորում է պարզապես շփվել հասակակիցների ու մեծահասակների հետ, մոտենալ ու ծանոթանալ անծանոթ, բայց հետաքրքիր, գրավիչ մարդու հետ: Սովորում է հասկանալ լռության լեզուն, չսաված խոսքերը, դիմախաղը, շարժումների իմաստը: Մարդը սովորում է հասկանալ իր մարմնի պահանջները, մշակել իր ռեակցիաները և այլն, և այլն: Եթե ընդհանուր ասենք, մարդը սովորում է սիրել, պարզապես սպրել, մարդ լինել... Մարդն անընդհատ սովորում է, նա իրավամբ **սովորող էակ է:** Բայց կան, չէ՞, մարդիկ, ովքեր դադարում են սովորել, կարծրանում են, կաղապարվում... Ինչ խոսք, այդ մարդիկ նույնպես շարունակում են գոյատևել, սակայն նրանք կարող են ժամանակ առ ժամանակ դուրս մնալ իրադարձությունների ընթացքից, չհասկանալ, թե ինչ է կատարվում, չկարողանալ ժամանակին համընթաց քայլել...



Պ. Օ. Ռենուար.
Աղջիկները դաշնամուրի մոտ

Սովորելը ամեն մի մարդու անհատական ընտրությունն է: Մարդն ինքն է ընտրում. լինել սովորող, թե՛ ոչ: *Արդի իրողությունները ցույց են տալիս, որ հարափոփոխ մեր աշխարհում շատ կարևոր է բաց միտք և սովորելու կամք ունենալը, քանի որ նման մարդիկ սովորում են կարծես խաղալով, հաճույք ստանալով: Եվ կյանքը նրանց համար շատ ավելի գունագեղ է լինում, քանի որ նրանք ցանկացած անհաջողություն կարող են ընկալել որպես նոր բան սովորելու հնարավորություն:* Քանի որ անհաջողությունը նման մարդկանց համար դառնում է ոչ թե հիասթափության և ինքն իրեն կորցնելու ազդակ, այլ հակառակը՝ ավելի նպատակասլաց վերլուծության և աշխատանքի, իսկ ապագայում նաև նոր հաջողությունների սկիզբ:

Աշխատանքը գուտ մարդկային գործունեության ձև է: Եթե կենդանական աշխարհում տեսնում ենք խաղարկային տարրեր, միայնաց ինչ-որ բան սովորեցնելու երևույթներ, ապա աշխատանքն առկա է միայն մարդկային հասարակությունում: Դուք հիշում եք, որ կենդանին պարզապես բանում է: Իսկ ի՞նչ է աշխատանքը:

*Մի սպավիհնիր դու հիացնունքին,
Փայլատակում է նա հանկարծ... ու վերջ,
Եթե ուզում ես հասնել բարձունքին,
Ներշնչանք գրի՛ր աշխատանքի մեջ:*

Համո Սահյան

Աշխատանքը մարդկային գործունեության տեսակ է, որը նպատակահարմար է գործնականում օգտակար արդյունքի ստացմանը:

Աշխատանքի շնորհիվ պատմականորեն մարդ էակը ձեռք է բերել ազատություն բնության հանգամանքներից: Ի տարբերություն կենդանիների, որոնք բավարարվում են բնության պարզևաժողով՝ մարդը աշխատանքի միջոցով կարողացել է ստեղծել «երկրորդ բնություն» և բավարարել իր պահանջմունքները:

Աշխատանքը կարևոր է նաև անհատական մակարդակում: Չարմանալի մի ձևակերպմամբ կարելի է ասել, որ *մարդն ինքն իր կատարած աշխատանքի արդյունքն է*: Սա ճիշտ է և՛ «մարդ» ընդհանուր հասկացության համար (իմաստասերները պնդում են, որ մարդու ուղղաձիգ քայլվածքը, նուրբ շարժումների ունակ ձեռքը և ուղեղն աշխատանքի արդյունք են), և՛ ամեն մի կոնկրետ մարդու համար: *Յուրաքանչյուր առանձին մարդ այն է, ինչ դարձնում է իրեն իր իսկ աշխատանքի արդյունքում*: Ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է լինել և՛ ֆիզիկական, և՛ հոգևոր, և՛ արտաքին աշխարհին ուղղված, և՛ ներքին: Դուք այժմ ավարտական դասարանի աշակերտներ եք, և *չե՛ր կարևորագույն աշխատանքն ինքնակերպումն է*: Դուք այն կշարունակեք նաև հետագայում՝ այլ ուսումնական հաստատություններում, բայց հիմա շատ կարևոր փուլ է, քանի որ դուք որոշում եք այն մասնավոր աշխատանքը՝ մասնագիտությունը, որով պետք է զբաղվեք ձեր հետագա կյանքում:



**3. Վերմեր
Ասեղնագործող աղջիկը**

Մասնագիտության ընտրությունը մարդու կատարած կարևորագույն ընտրություններից է, որն իրենով պայմանավորելու է մարդու կյանքի բնույթը հետագայում: Հաճախ ձեր տարեկիցներն աշխատանք, մասնագիտություն ընտրելիս ելնում են միայն ակնկալվող դրական կողմերից՝ չնկատելով ու չմտածելով դժվարություն հարուցող կողմերի մասին: Դրա հետևանքով երբեմն տարիներ շարունակ մասնագիտություն ստանալուց հետո շատերը հասկանում են, որ իզուր են կորցրել ժամանակը, քանի որ դա այն գործը չէ, որ իրենք կցանկանային անել:

Նման խնդիրները սակավ դարձնելու համար կարևոր է «առավելություն - դժվարություն» բնույթի վերլուծություն անելը:

Օրինակ՝ ես ուզում եմ բժիշկ դառնալ, քանի որ նրանք լավ են վաստակում, մարդիկ հարգում են նրանց և այլն: Այժմ մտածեք դժվարությունների մասին. բժիշկները շարունակաբար, օրըստօրե գործ են ունենում հիվանդությունների, արյան, թարախի հետ: Նրանք պետք է լինեն հոգատար, բարի ու մարդկային, որպեսզի կարողանան ախտերի հետ շփվելով՝ չկորցնել իրենց մարդկայնությունը: Լավ բժիշկը նախ և առաջ բուժում է հոգեպես, կարող է նաև դա անել:

Կամ ցանկանում եմ դառնալ վարորդ. գրավիչ են ճանապարհները, արագությունը: Բայց պատրաստ եմ արդյոք օրվա ընթացքում բազմաթիվ ժամեր անցկացնել մեքենայում նստած, ունեն՞ կանոններիս հետևելու կամք, վարորդի աշխատանքի դժվարությունները հաղթահարելու ունակություններ...

Մասնագիտություն ընտրելիս ցանկալի է հնարավորինս շատ շփվել այդ մասնագիտությամբ հենց հիմա աշխատող մարդկանց հետ, տեսնել, թե ինչպես են նրանք ընկալում և գնահատում իրենց աշխատանքը, ինչ դժվարություններ են մատնանշում: Ինչ-որ մեկը բանկում է աշխատում, մյուսն ուսուցիչ է, երրորդը՝ շինարար... Ջրուցե՛ք նրանց հետ, պատկերացրե՛ք ձեզ այդ դերերում: Եթե զգում եք, որ աշխատանքի դժվարությունները ձեզ չեն վախեցնում, ուրեմն հանգիստ ընտրեք մասնագիտությունը: Բայց նաև հիշե՛ք, որ ընտրությունը միայն առաջին քայլն է: Դուք պետք է ամեն ինչ անեք ձեր ընտրած մասնագիտությանը տիրապետելու համար, որպեսզի ապագայում կարողանաք աշխատել ասես խաղ անելով՝ հաճույքով և հեշտ: Մտածե՛ք, թե ձեր ընտրած աշխատանքում ինչպիսի գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ են անհրաժեշտ և փորձե՛ք դրանք մշակել ձեր մեջ: Չմոռանաք նաև արժեքային մոտեցումների մասին. լավ մասնագետ լինելու համար դուք պետք է արժևորեք այդ մասնագիտությանը բնորոշ



կարևոր իրողությունները: Այլապես տիրապետելով գիտելիքների և ունենալով հմտություններ, դուք չեք դառնա լավ մասնագետ, քանի որ կպակասի ամենակարևորը՝ արժեքայինը:

Օրինակ՝ եթե ինչ-որ մեկը չի սիրում երեխաներին, նա լավ ուսուցիչ կամ դաստիարակ չի դառնա:

Չկան լավ կամ վատ մասնագիտություններ, բայց կան լավ կամ վատ մասնագետներ: Ինչ գործ է որ ընտրեք, ձգտեք հիմնովին տիրապետել դրան, քանի որ աշխատանքը հասուն մարդու կյանքում մեծ տեղ է գրավում, և հաջողությունները կամ անհաջողություններն աշխատանքում կարող են անդրադառնալ մարդու կյանքի մյուս կողմերի վրա: *Աշխատանքի բոլոր տեսակները պետք են հասարակությանը, այլապես դրանք չէին լինի: Անկախ այն բանից, թե ինչ աշխատանք է, այն միշտ արժանի է հարգանքի:* Սովորե՛ք հարգել տանը կատարվող աշխատանքները ու մասնակցել նաև դրանց, որոնք թեպետ չեն վճարվում, սակայն ստեղծում են կարևորագույն ու մեծ արժեք:

Հարցեր

1. Ի՞նչ է խաղը: Ինչո՞վ է այն կարևոր մարդու համար:
2. Ինչպե՞ս կրացատրեք դասի բնաբանը: Կարդացե՛ք Ավ. Իսահակյանի «Կտակ» բանաստեղծությունն ամբողջությամբ ու մտորե՛ք դրա շուրջ: Կա՞ն արդյոք անհամաձայնություններ:
3. Մեկնաբանե՛ք Ավ. Իսահակյանի հետևյալ տողերը.
*«Անուշ մորս ուրևների տակ թռվռայի, խաղայի,
Փառք ու հանճար չարժեն խաղին մի ծաղկաբույր տղայի:
Իմ սո՛ւրբ մանկիկ, թո՛ղ համբուրեն թաթիկներդ ցեխուրած,
Դու՛ կյանք ու սեր, ծափ ու ծիծաղ, ուրախությա՛ն դու ասրված...»:*
4. Ի՞նչ է ուսումը, ի՞նչ է այն տալիս ձեզ:
5. Ի՞նչ է աշխատանքը:
6. Ինչպե՞ս կրացատրեք Վոլտերի հետևյալ խոսքերն աշխատանքի մասին. «*Աշխատանքը մարդուն ազատում է երեք գլխավոր չարիքներից. ջանջրույթից, արարից ու կարիքից...*»:
7. Ինչո՞ւ է մասնագիտության ընտրությունը կարևոր:

Առաջադրանք

1. Մտորե՛ք ձեզ համար ցանկալի երկու-երեք մասնագիտության մասին: Այս գծե՛ք ստորև բերվող աղյուսակը և լրացրե՛ք այն յուրաքանչյուր մասնագիտության համար՝ նշելով դրանք ձեռք բերելու առավելություններն ու դժվարությունները:

Առավելություններ	Դժվարություններ

2. 8-րդ և 10-րդ դասարանների հասարակագիտության դասագրքերից վերընթերցե՛ք «Ազատություն» և «Երջանկություն» թեմաները և պատրաստվե՛ք քննարկման:

ԴԱՍ 21-22. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ. ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐՉԱՆԿՈՒԹՅՈՒՆ



Խմբային աշխատանք

Նախորդ դասարաններում անցած նյութի հիման վրա փորձե՛ք խմբերով մշակել ընդհանուր մոտեցում ազատության և երջանկության հարցերի շուրջ: Նախ մտքերի տարափով գրառեք խմբի յուրաքանչյուր անդամի ազատության ընկալումը, ապա նույն ձևով գրառե՛ք երջանկության մասին պատկերացումները:

Ներխմբային հետագա քննարկման ժամանակ ձևավորե՛ք մեկական ընդհանուր ընկալում ազատության և երջանկության մասին: Քննարկումը ցանկալի է անցկացնել համագործակցության և փոխադարձ հանդուրժողականության մթնոլորտում, ինչը կնպաստի խմբի անդամներից յուրաքանչյուրի ազատության և երջանկության զգացման խորացմանը:

Համադասարանական աշխատանք

Խմբերի ստացած ձևակերպումները գրե՛ք գրատախտակին կամ պաստառների վրա ու մտորե՛ք դրանց շուրջ:

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ



Ընթերցե՛ք տեքստը

*Դո՛ւ անցորդի պես քեզ միայն ըզգա՛,
Եվ որպես ճամփորդ այս երկրի վըրա.
Ազա՛ր հայացքով նայիր ամենին
Եվ անվերջ քայլիր քո անհայտ ուղին:*

Ավետիք Իսահակյան

Մի՞թե ազատության խնդիրն այդքան կարևոր է, որ տարիներ շարունակ տարբեր համատեքստերում անդրադառնում ենք դրան: Կարծես թե արդեն պարզ է, որ մարդն ազատությամբ օժտված էակ է (մարդու ևս մեկ բնութագիր): Էլ ի՞նչ խնդիր կա քննարկելու:

Պարզվում է՝ կա: Այո՛, ինչ խոսք, ազատությունը՝ որպես երևույթ, գոյություն ունի միայն մարդկային աշխարհում: Կենդանին անազատ է, քանի որ «հետևում» է իրեն տրված «ծրագրին», միայն մարդն է, որ ազատ է և կարող է

ինքն իր համար ծրագիր կազմել ու հետևել դրան: Կարծես թե՛ այո: Բայց ամեն ինչ այնքան էլ միանշանակ չէ: Հազարամյակների ընթացքում պայքարելով ազատության համար ու կարծես թե վերջին երկու դարերի ընթացքում հասնելով որոշակի իրավական, քաղաքական ազատությունների, մարդը, այնուամենայնիվ, անազատ էակ է: Ազատությունը դեռևս մարդու երազանքների ոլորտում է...

Ազատ լինել նշանակում է քաջություն ունենալ դեմ հանդիման նայելու կյանքի ու սպազայի անորոշությանը: Ազատ լինել նշանակում է քաջություն ունենալ մենակ մնալու, քանի որ ազատությունը միշտ ենթադրում է անհասկանալի որոշումներ, լուծումներ:

Իսկ շատ շատերը վախենում են մենակությունից, նրանք գերադասում են ընդունել այլոց որոշումները՝ դրա փոխարեն ունենալով հովանավորող տաքուկ թև, ինչպես նաև ազատվելով սպազայի հանդեպ տագնապից ու անորոշությունից:

Ազատ լինել նշանակում է ընդունել այնպիսի որոշումներ, որոնք չեն սահմանափակում քո իսկ ազատությունը: Այնինչ մարդկանց մեծամասնությունը որոնում է հնար՝ ազատության իր բաժինը դնելու այլոց ուսերին. չէ՞ որ սխալ որոշումների համար այդ դեպքում հեշտ կլինի պատասխանատվությունը գցել ուրիշների վրա:



Ազատությունը մարդկանց մեկընդմիջ տրված երևույթ չէ: *Ազատության աստիճանը կախված է ամեն անգամ մարդու կատարած ընկրությունից.* եթե մարդը կատարում է այնպիսի ընտրություններ, որոնք չեն ճկում նրա հոգին, չեն ստիպում խեղել ինքն իրեն, դեմ գնալ իր բարի բնությանը, մարդը մեծացնում է իր ազատության աստիճանը: Եվ հակառակը, եթե մարդն ընդունում է իր էությանը հակասող որոշումներ, նա ավելի ու ավելի անազատ է դարձնում ինքն իրեն: Հետաքրքիր մի դիտարկում. քաղաքական, իրավական, տնտեսական ազատությունները դարերի ընթացքում զարգացում են ապրում և կարող են ամրագրվել տարբեր նորմերով ու պաշտպանվել: Դուք հիշում եք, որ պետությունը ժողովրդավարական հասարակություններում հանդես է գալիս որպես մարդկանց ազատությունների (սեփականություն ունենալու և այն տնօրինելու ազատություն, տեղաշարժվելու ազատություն և այլն) երաշխավոր: *Իսկ մարդու ներքին ազատությունը չունի ոչ մի արտաքին երաշխավոր, ոչ մի զարգացած, առաջադեմ պետություն չի կարող մարդուն դարձնել հոգեպես, ներքնապես ազատ, եթե մարդն ին-*

քը ջանքեր չի գործադրում այդ ուղղությամբ: Յուրաքանչյուր նոր սերունդ, յուրաքանչյուր անհատ պետք է աշխատանք կատարի ազատություն ունենալու համար: Ներքին ազատությունը չի փոխանցվում մեխանիկորեն, այն սեփական մտորումների, սեփական կյանքում հանդիպող հակասական իրավիճակներին պատասխան փալու արդյունքում է ծնվում ու զարգանում:

Տարբեր մարդիկ տարբեր ընտրություններ են կատարում, ոմանք ընտրում են ազատությունը, մյուսները՝ հարմարավետությունը: Հազվադեպ է լինում, որ ազատությունն ու հարմարավետությունն ուղեկցեն միմյանց, և դա է դառնում ազատությունից փախչելու պատճառ:

Հին հույն մրաժող Գիոզենեսի կյանքից պահպանվել են հեղինակայ երկխոսությունները:

Ժամանակի բարձր պաշտոնյաներից մեկը մի օր փողոցում տեսնում է Գիոզենեսին, ով ուսպ էր ուրում, և ասում է. «Այ, եթե դու կարողանայիր փոքր-ինչ քծնել ու խոնարհվել, դու սրիպված չէիր լինի հիմա ուսպ ուրել»: Գիոզենեսը հանգիստ պատասխանում է. «Իսկ եթե դու կարողանայիր ուսպ ուրել, դու սրիպված չէիր լինի հիմա քծնել ու խոնարհվել»:

Մեկ այլ ավանդազրույց: Ալեքսանդր Մակեդոնացին շիտև հեծած մուրեկնում է Գիոզենեսին ու հարցնում. «Ո՞վ իմաստուն մարդ, ի՞նչ կուզենաս, որ շնորհեմ քեզ»: Գիոզենեսը պատասխանում է. «Նախ և առաջ՝ մի կողմ քաշվի շիտվդ ու ինչ մի՛ զրկիր արևի շնորհած լույսից...»:

Ի՞նչ կապ ունեն րվյալ պատմություններն ազատության խնդրի հետ: Ազատության դիզենեսյան րիպը կարո՞ղ է ընդունելի լինել, ինչո՞ւ...



Ժերոմն. Գիոզենես

Ի՞նչ գիրեք
Գիոզենեսի մասին,
ի՞նչ եք կարծում,
ինչո՞ւ էր նա սպրում
րակառում: Ի՞նչ են
խորհրդանշում նրան
շրջապատող շները:

ԵՐՉԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երջանկությունը, որին մարդիկ շատ փոքր են ճանաչում, և ընդհանրապես հարուստների ապարանքներում են որոնում, հաճախ յուր բոլոր կայարանությունները գտնվում է այն անշուք տնակներում, որոնց մենք «թշվառների կացարան» ենք անվանում: Ապրիլ արդար վաստակով, ճանաչել չափավորություն և գիտենալ գոհ լինել յուր ունեցածով, ահա երջանիկ լինելու առաջին պայմանները:

Մուրացան

Իսկ ազատության և երջանկության միջև կապ կա՞: Պարզվում է, որ կա: *Որքան մեծանում է մարդու ազատության աստիճանը, այնքան նա ավելի շատ է շեղք բերում երջանիկ լինելու կարողություն:*

♦ *Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ:*

♦ *Հաճախ հարցնում են. «Չեզ որքա՞ն գումար է անհրաժեշտ երջանիկ լինելու համար»: Մրածե՛ք ու փորձե՛ք պարասխանել ինքներդ ձեզ համար՝ ձեզ ինչքա՞ն և ինչպիսի՞ նյութական կամ այլ հանգամանքներ են պետք երջանիկ լինելու համար:*

Մեզ հուզող խնդրո առարկայի մասին խորհել են շատ իմաստասերներ, այդ թվում նաև Վերածննդի դարաշրջանի ֆրանսիացի փիլիսոփա **Միշել Մոնտենը**: Հետևենք նրա մտքերի ընթացքին. «Ե՛վ ունևորությունը, և՛ չունևորությունը կախված են այն պատկերացումներից, որ մենք ունենք դրանց մասին: *Հարստությունը, ինչպես որ փառքն ու առողջությունը, գեղեցիկ և հրապուրիչ է այնքանով միայն, որքանով այդպիսին է դիրվում ունեցողների կողմից*: Յուրաքանչյուրն ապրում է լավ կամ վատ՝ նայած այն բանին, թե ինքն ինչ է մտածում այդ առթիվ: Գոհ է ոչ թե նա, ում ուրիշներն են հորջորջում այդպիսին, այլ նա, ով ինքն է իրեն համարում այդպիսին... Դակատագիրը մեզ ո՛չ բարիք է բերում, ո՛չ չարիք, այլ մատուցում է միայն մեկի և մյուսի հումքը... Մեր հոգին, որ այս տեսակետից առավել գորեղ է, քան ճակատագիրը, օգտագործում և կիրառում է այդ հումքն ըստ իր հայեցողության՝ այսպիսով հանդիսանալով միակ պատճառն ու տնօրինողն իր երջանիկ կամ թշվառ կացության...»:

Մտորե՛ք Մոնտենի մտքի շուրջ: Համաձայն էք, թե՞ կան առարկություններ:

Դուք, ինչ խոսք, վերընթերցել եք 10-րդ դասարանի դասընթացում երջանկության խնդրին նվիրված բաժինը: Եվ հիշում եք, որ երջանկության կարևոր բաղադրիչը երջանկության զգացողությունն է: Պարզվում է, որ արտաքին հանգամանքներն իրենց մեջ երջանկություն չեն պարունակում: Ինչպե՞ս, կհարցնեք: Չե՞ որ երջանկություն է, օրինակ, բուհ ընդունվելը, ամուսնանալը, երեխա ունենալը,



**Պ. Պ. Ռուբենս.
Ռուբենսը կնոջ՝ Ելենա Ֆուրմանի
և զավակի հետ**

*Ի՞նչ էք կարծում, կյրավի
հերոսները երջանի՞չ են:
Եթե այո, ապա ինչո՞ւմ է նրանց
երջանկությունը:*

ինչ-որ հեղինակավոր մրցույթում հաղթելը և այլն, և այլն... Տարբեր մարդիկ տարբեր բաներ կասեն: Հարցին պատասխանենք հարցով. իսկ ինչո՞ւ են վերը թվարկված այդ հանգամանքները երջանկություն: Պատասխան. *քանի որ մենք՝ մարդիկս, այդ հանգամանքներին վերագրել ենք երջանկության բնութագիրը*: Մարդկային կեցության առեղծվածային երևույթներից մեկն էլ այն է, որ մեզ երջանիկ է դարձնում այն ամենը, ինչին մենք ի սկզբանե վերագրել էինք (հաճախ չգիտակցելով) մեզ երջանիկ դարձնելու կարողություն: Եվ հետևաբար՝ հենց որ այդ հանգամանքները բացակայում են, մենք սկսում ենք մեզ զգալ դժբախտ կամ գոնե ինչ-որ բանի կարոտ...

Նորից մտածենք. երջանկությունն այնտեղ է, որտեղ կա երջանկության զգացում, ապրում: Իսկ երջանկության ապրումն ավելի բնորոշ է այն մարդկանց, ովքեր իրենց «ազատագրել են» արտաքին հանգամանքների տիրապետությունից: Նման անկախության դեպքում պարզվում է, որ մարդ էակին զարմանալիորեն քիչ բան է պետք երջանիկ լինելու համար: Այդ «քիչ» բանը կյանքն է...

Հրաշալի է, որ կա կյանքը... Հրաշալի է, որ այն իր փարբեր իրավիճակներով, խնդիրներով ու դժվարություններով մեզ սրիպում է աշխարհել, յրքնել, ճիզեր գործադրել... Եվ երջանկությունը հենց կյանքի զգացողության մեջ է, ապրելու մեջ է:

Իհարկե, մեկին հանգամանքները պարզևում են ամեն ինչ, մյուսին՝ շատ բան, երրորդին՝ ոչինչ... Բայց երջանիկ լինելը, պարզվում է, այդ ամենից անկախ է:

Արդեն լավում են առարկություններ: Հաճախ ձեր տարեկիցներն ասում են, որ երջանկության մման ընկալման դեպքում մարդը կարծես խաբում է ինքն իրեն, փակում է աչքերն այն հանգամանքների վրա, որ այսինչ բանը չկա, այնինչը թերի է և այլն: Դա եղավ ոչ թե երջանկություն, այլ ինքնախաբեություն:

Լավ, սկսենք սկզբից: Լիակատար ու տևական երջանկությունը, ինչպես ասում էին անցյալում, բնորոշ է աստվածներին ու հիմարներին: Բայց կա մարդկանց մի երրորդ խումբ՝ իմաստություն սիրողների խումբը, որը հասկացել է, որ *երջանկությունը մարդու վերաբերմունքն է իրեն Կրիստոսի հրահանգների հանդեպ: Եթե մարդը կարողանում է գնահատել, արժևորել այն, ինչ ունի, նա սովորում է լինել երջանիկ կամ գոնե երբեմն-երբեմն զգալ երջանկության առկայությունը:*

Երջանիկ էք դուք արդյոք հիմա... Մտածե՞լ եք, թե ինչ երջանկություն է դասարանով ինչ-որ տեղ գնալը, պարզապես դպրոց գալն ու միայնակ հանդիպելը: Մտածե՞լ եք, որ չեք ընդհանրացրել որևէ բազմաթիվ երջանիկ պահեր եք ապրում: Զգացե՞լ եք այսօրվա, այս պահի երջանկությունը, երբ ընթերցում եք այս դասագիրքը: Երբեք չե՞ք երջանիկ զգացե՞լ եք գեղեցիկ արևածագ կամ արևամուր տեսնելիս, աշնան տերևաթափին կամ գարնան հայրցքին հետևելիս...

Երջանկություն զգալու պատճառներն անասանական են: Կյանքը մեզ շոյողներն պարզևում է դրանք, եթե... մենք մեր դժգոհությամբ և պակասության զգացումով չխանգարենք մեզ տեսնել և զգալ այդ ամենը:

Պետք չէ երջանկություն որոնել անսովոր, շքեղ հանգամանքներում, ցանկալի է երջանկությունը սովորել տեսնել սովորականի մեջ, այն ամենի մեջ, ինչ ունենք այսօր, այստեղ: Պետք է տեսնել այդ երջանկությունը, այլապես վաղը կարող է ուշ լինել... Յավոք, մարդիկ հաճախ չեն գնահատում այն, ինչ ունեն, սակայն դրա կորստի պարագայում սուր կերպով գիտակցում են իրենց դժբախտությունը...:

Հիշում ենք, որ մարդու բնութագրերից մեկը ժամանակավոր կամ մահկանացու լինելն է: Մարդն ի սկզբանե գիտի, որ իրեն տրված կյանքը, առողջությունը, կարողությունը ժամանակավոր են: Հետևաբար՝ նա պետք է սովորի գնահատել այն ժամանակը, որ ունի ապրելու համար, սիրելու, որոնելու, աշխատելու համար: Նա պետք է սովորի գնահատել իրեն շրջապատող մարդկանց, որոնք իր մման անկրկնելի ու ժամանակավոր են:

Կարծես թե շատ ասվեց երջանկության մասին, բայց նաև քիչ ասվեց, քանի որ երջանկությունը չունի բանաձևումներ, այն խիստ անհատական է ու կախված է ամեն մի մարդու կատարած ներքին աշխատանքից:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է ազատությունը: Արդյոք հակատություն առաջացա՞վ ազատության մասին ձեր նախորդ պատկերացումների և այսօրվա դասում առաջարկված մոտեցման միջև: Ինչո՞ւ:
2. Կ՞ա արդյոք կապ ազատության և երջանկության միջև: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ էք կարծում, մի՞թե երջանկության խնդիրը հնացած չէ: Արժե՞ արդյոք այն քննարկել 21-րդ դարում:
4. Չարմացրե՞ց ձեզ արդյոք երջանկության առաջարկված ընկալումը: Ինչպիսի՞ առարկություններ առաջացրեց այն:
5. Համաձայն էք արդյոք արդի հայ երգահան-բանաստեղծ Ռուբեն Հախվերդյանի «Երջանկություն, անցի՛ր կողքովս, դու հարատև չես: Դու կարող ես թողնել ինձ ամեն բույս ու հեռանալիս շնախագգուշացնել» բառերի հետ: Ինչո՞ւ:
6. Ռուս բանաստեղծուհի Վերոնիկա Տուչնովան գրել է. *«Իզուր է ասված, որ պեղք է երջանիկ ծնվել: Պարզապես պեղք է, որ սիրտը չհոգնի երջանկության համար աշխարհել: Պեղք է, որ սիրտը չլինի ծույլ և հերստր, այլ որպեսզի ամեն մի մանրուքի համար կարողանա ասել՝ շնորհակալություն, շնորհակալություն...»*:
Բացատրե՛ք այդ խոսքերի իմաստը:

Առաջադրանք

Գրե՛ք շարադրանք «Իմ երջանկությունը», «Երջանկությունն իմ պարկերացմամբ» թեմայով կամ «Ի՞նչ է նշանակում լինել երջանիկ» թեմաներից որևէ մեկով:



← Չարդարյան,
Գարուն

ԳԼՍ 23-24. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ. ՀԱՎԱՏ ԵՎ ՄԵՐ

ՀԱՎԱՏ



Ընթերցե՛ք տեքստը

*Ես շքնչում եմ միշտ կենդանի Աստծո շունչը ամենուր.
Ես լըսում եմ նրբա անլուռ կանչն ու հունչը ամենուր.
Վեհացնում է ու վերացնում ամենալուր իմ հոգին
Տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը ամենուր:*

Հովհաննես Թումանյան

Հավատք մարդու յուրահատուկ հոգևոր վիճակն է, որում մարդը կարող է որպես ճշմարտություն ընդունել այն, ինչը ո՛չ ինքնընդհանրապես ակնհայտ է, ո՛չ էլ կարող է սպացուցվել տրամաբանության միջոցով:

Հավատը կա այնտեղ, որտեղ ինչ-որ հոգևոր իրողություն և՛ կարող է ընդունվել, և՛ կարող է կասկածի ենթարկվել ու մերժվել: Հավատը, որպես կանոն, վերաբերվում է վերագայական իրողություններին: Ինչո՞ւ: Շատ պարզ: Եթե ցանկանում ենք իմանալ՝ անձրև է գալիս, թե ոչ, մոտենում ենք պատուհանին ու նայում դուրս: Մեր զգայարանները մեզ տալիս են տեղեկույթ, որը հնարավորություն է տալիս գիտենալ:

Բայց պարզվում է, որ մարդը միայն գիտեցող էակ չէ, որ մարդկային կեցության մեջ բավական հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ գիտելիքը չի բավականացնում կամ էլ հնարավոր չէ ունենալ լիարժեք, սպառիչ գիտելիք: Մարդու կեցությունն առաջադրում է բազմաթիվ հարցեր, որոնց պատասխանները մարդը չունի, և նրան մնում է միայն հավատալ պատասխանի իր ընտրած տարբերակին: Նման հարցերի օրինակներ են հետևյալ հարցերը. կա՞ կյանք մահվանից հետո, ի՞նչ է կատարվում մարդու հետ մեռնելիս, Աստված գոյություն ունի՞, եթե այո, ապա ինչպիսի՞ն է նա և այլն, և այլն: Նման հարցերին պատասխանում է կրոնը:



Ամենայն հայոց կաթողիկոս
Վազգեն Ա



**Վարդգես Մուրեճյանց,
Աստվածամայրը մանուկ Քրիստոսի հետ**

Ինչ խոսք, դուք հիշում եք, թե ինչ է կրոնական աշխարհայացքը: Երևի գիտեք նաև որոշ կրոնների մասին:

Տարբեր կրոններ նման հարցերին տալիս են տարբեր պատասխաններ ու ամրագրում այդ պատասխանները **դոգմաներում**՝ այնպիսի դրույթներում, որոնք առանց ապացուցման համարվում են անառարկելիորեն ճիշտ և ընդունվում կրոնական հեղինակությունների ու հետևաբար նաև տվյալ կրոնի հետևորդների կողմից:

Սակայն հավատը մարդուն միայն կրոնական բնույթի հարցերում չէ, որ անհրաժեշտ է: Պարզվում է, որ մեր ամենօրյա կյանքում մենք շատ ավելի հաճախ ենք հիմնվում հավատի վրա: Ինչո՞ւ: Քանի որ մարդկային կենսագործունեության իրականացման համար կարևոր է, որ մարդիկ հավատան միմյանց, այլապես այդ կենսագործունեությունը կաթվածահար կլինի:

Դուք հիմա կան տանն եք, կան դպրոցում, այսինքն՝ ինչ-որ շինության մեջ: Դուք գրկվում եք այդ շինության մեջ, քանի որ հավատում եք, որ այն կառուցողները տվյալ շինությունը կառուցել են որակով, այն կայուն է ու չի փլվի ձեր գլխին:

Պարզվում է, որ ամեն քայլափոխի մարդիկ ստիպված են լինում հավատալ, վստահել միմյանց: Մենք հավատում ենք, որ մեքենաները փողոցում կպահպանեն երթևեկության կանոնները և վրաերթի չեն ենթարկի, ասենք, մայթով քայլողներին: Հավատում ենք, որ հացը ճիշտ է թխված ու չի վնասի մեր առողջությանը, հավատում ենք, որ ռեստորանում ճաշի մեջ թույն չի լցված...

Վերջին միտքը խիստ տարօրինակ կարող է թվալ, բայց գիտե՞ք, թե ինչպես է ծագել կենաց ասելուց հետո բաժակները միմյանց խփելու սովորույթը: Քանի որ սեղանակիցները կարող էին միմյանց բաժակների մեջ թույն լցնել, սկսեցին բաժակները խփել միմյանց, որ գինին լցվի մի բաժակից մյուսը, և խոնդները վարահ լինեն, որ բաժակներից ոչ մեկում թույն չկա:

Մարդիկ անընդհատ վստահում ու հավատում են միմյանց: Սա նշանակում է, որ յուրաքանչյուրն իր տեղում պետք է այնպես աշխատի, որ չչարաշահի իր հանդես մարդկանց ունեցած հավատը. շինարարը պետք է լավ կառուցի, բժիշկը ճիշտ բժշկի, դատավորը դատի ըստ օրենքի...

Վարահություն-հավատը հավատի, կարելի է ասել, առօրեական տեսակն է:

Իսկ հավատի ավելի վեհ տեսակը *հայրնություն-հավարն* է, որի մասին խոսք կլինի ստորև:

Հավատը մարդկային էության ամենախորքային երևույթներից է, քանի որ մարդը ոչ միայն բնագոյային էակ է, ոչ էլ զուտ տրամաբանող: Մարդկային իրականության մեջ կան բազմաթիվ երևույթներ, որոնք **խռացիոնալ** են, այսինքն՝ ոչ բանական, միայն տրամաբանությամբ չեն բացատրվում: Եվ այստեղ մարդուն օգնության է գալիս հավատը: Սենք ունենում ենք հույզեր, զգացմունքներ, վիճակներ, որոնք ինքներս էլ տրամաբանորեն չենք կարող բացատրել: Նման դեպքերում մենք սկսում ենք հավատալ մեր ներքնաբանականությանը կամ էլ հավատ ենք ընծայում արտաքին հանգամանքներին: Ինչ խոսք, երբեմն մենք կարող ենք սխալվել, և այդպես լինում է: Մարդկային աշխարհում անսխալական ոչինչ չկա:

*Թե՛ դեպի կյանքը, թե՛ դեպի մարդիկ
Շողավոր, պայծառ հավարով զինված
Ես ողջունեցի... և վեհ, գեղեցիկ
Չզացմունքներով սիրոս դղրաց:*

Ավետիք Իսահակյան

Մարդը, այնուամենայնիվ, չի բավարարվում իրեն տրված ժամանակավոր, սխալական, անկատար իրականությամբ և ուզում է հավատալ, որ կա հավերժական, անսխալ, կատարյալ իրականություն՝ աստվածայինը: Աստվածայինն ու նրա հետ կապված հարցերը հայտնություն-հավատի ոլորտում են, քանի որ հնարավոր չէ դրանք ապացուցել կամ հերքել գիտական, ռացիոնալ մեթոդներով: Յուրաքանչյուր մարդ ինքն է իր հավատի ու խղճի ազատության հիման վրա ընտրում. հավատալ Աստծուն, թե ոչ: *Իմաստասերները պարզապես նկատել են, որ Աստված ունեցող մարդիկ ավելի մարդկային են լինում, քանի որ հավարն առ Աստված մարդուն հնարավորություն է տալիս իր ներսում, իր հոգևոր աշխարհում բացահայտել ու պահպանել հավերժականը, վեհը, աստվածային-մարդկայինը:* Հայտնություն-հավատ ձեռքբերողների համար կարծես թե բացվում են հոգու աչքերը, և մարդը հասկանում է, որ այս երևացող, զգայելի աշխարհից այն կողմ կա ինչ-որ ավելի նուրբ ու կարևոր, ավելի պայծառ ու իրեն հարազատ իրականություն, որին բնորոշ է երանելիությունը, քանի որ չկա ունայն վազքն ու քաշքշուկը անցողիկ արժեքների համար: *Հավար-հայրնությունն աշխարհընկալման ավելի բարձր տեսակ է, երբ մարդը կարծես չերբազարվում է իր էությանը բնորոշ մտածական սահմանափակումներից ու ընկալում սրանում ողջ տրիեզերքն իր միասնության ու ամբողջականության մեջ:* Հավատի շնորհիվ մարդն ու իր իրականու-



Միքելանջեյո Բոունատորի. Ողբ

թյունը դառնում են հենց այնպիսին, ինչպիսին մարդը հավատում է, որ դրանք կան: Ռուս մտածող **Լև Շեստովն** ասում է. «Յուրաքանչյուրին տրվում է իր հավարի չափով, եթե դու հավատում ես, որ Ասրծուց ես, ուրեմն Ասրծուց ես, իսկ եթե հավատում ես, որ կապիկից ես, ուրեմն կապիկից ես»:

Մտորենք այդ դարողության մասին, համաձայն էք արդյոք: Ինչո՞ւ:

Ասրծոն հանդեպ հավարը ոչ միտք է, ոչ համոզմունք, այլ ոգու ներքին վիճակ, ողջ աշխարհի հեյր մերձենալու, այն սիրելու բացություն...

ՍԵՐ

*Ինչ որ ասում եմ, ասողն ասել է,
Ասել պրծել է ինչնից առաջ...
Աշխարհն ինչ համար դեռ չստված սեր է,
Սիրո սարսուռ է, սիրո հառաչ:*

*Ամեն օր նոր եմ թվում լույսերը,
Կարծես թե նոր եմ աչքս բացում:
Աշխարհն ինչ համար դեռ չստված սեր է,
Սիրո սարսուռ է և սպասում:*

Համո Սահյան

Խորհենք, թե ինչ բառերի հեյր է զուգորդվում սերը ձեզ համար: Գրառենք դրանցից երեք-չորսը: Մտորենք այդ բառերի մասին, ինչո՞ւմ է դրանց գրավչությունը: Ինչո՞ւ է սերը հենց այդ բառերի հեյր կապվում:

Սիրո խնդրի տարբեր լուծումներ կան. եղել են մտածողներ, որ կարծել են, թե մարդկային հանցագործությունների ու բախումների պատճառը սերն է եղել: Բայց իհարկե ավելի շատ են այն մտածողները, որոնց կարծիքով՝ սերն է մարդկային հասարակությունը պահպանող շաղախը: Որոշ իմաստասերներ սիրո խնդիրը լուծելու համար տարբերակել են այն. սեր առ ծնողներ, առ հայրենիք, առ հակառակ սեռի ներկայացուցիչ, մայրական սեր, պլատոնական սեր և այլն:

Մտածենք սիրո վերոնշյալ տեսակների մասին, ի՞նչ էք կարծում՝ ինչո՞վ են դրանք տարբերվում միմյանցից:

Թվացյալ տարբերությունների պարագայում, սակայն, իմաստասերների համար պարզ է, որ սերն աշխարհի ու մարդկանց հանդեպ մարդու վերաբերմունքն է, տրամադրվածությունը, հարաբերությունը: Կարող է զարմանալի թվալ. չէ՞ որ սերը զգացմունք է: Այո՞, զգացմունք է: Բայց ոչ միայն: Ինչպես ասում է Էրիխ Ֆրոմը, սերը նախ և առաջ սիրելու ցանկություն է, սիրելու որոշում: Մենք սիրում ենք, երբ մենք ուզում ենք սիրել... Բայց չէ՞ որ մարդն իր ցանկությամբ չի սիրում, կառարկեք դուք, պատահաբար կարող ես տեսնել ինչ-որ մեկին ու քո կամքից անկախ սիրահարվել...

Այո՛, բայց եկեք տարբերենք սիրահարվելն ու սիրելը: Սիրահարվելը, որպես կանոն, լինում է կամքից անկախ, անկանխատեսելիորեն: Այն իր մեջ պարունակում է հաճելի բազմաթիվ թրթիռներ: Բայց սիրահարվելը սիրո հետ ընդհանուր շատ քիչ բան ունի: Նախ սկսենք այնտեղից, որ սերը չի կարող «հարել»՝ խփել: Սերը տառապանքներ չի բերում: Սերը, նույնիսկ անպատասխան սերը, բերում է միայն երջանկություն, քանի որ իրոք սիրող մարդը (և ոչ թե սիրահարվածը) զգում է, թե ինչպես է իրեն պարունում աշխարհի հանդեպ քնքշության զգացումը, քանի որ այդ աշխարհում կանաս այն մեկը, որին սիրում է ինքը... Ինչ-որ մեկին իրոք սիրելով, մարդը զարմանալիորեն սիրում է ողջ աշխարհը... Իսկ եթե մարդուն թվում է, որ ինքը սիրելով տառապանքներ է զգում, դա կարող է նշանակել, որ նա սովորում է սիրել, որ նա աճում է դեպի այն մեծ սերը, որը չի կարող տառապանք պատճառել:

Դարձյալ հանդիպեցինք «սովորել» բառին: Սովորել երջանիկ լինել, սովորել սիրել... Այո՛, սովորել սիրել: **Էրիկ Ֆրոմն** ասում է, որ մարդիկ միանշանակորեն հասկանում են, որ առանց նկարել սովորելու չեն կարող կարգին բան նկարել կամ էլ առանց նվազել սովորելու չեն կարող շոյել ունկնդիրների լսողությունը: Իսկ ինչո՞ւ է մեզ բոլորիս թվում, թե մենք սիրել գիտենք, թե մեզ հանդիպած մարդիկ պետք է երջանիկ լինեն, որ մենք իրենց սիրում ենք... Բայց արդյո՞ք մենք սիրում ենք: *Թե՞ սովորել ենք սեր անվանել էզոիզմը, մենակ մնալու վախից ծնված չգրումն առ մարդիկ, սեփականատիրական զգացումները:*

Մարդիկ հաճախ բավարարվում են սիրո թվացողությամբ՝ սեր անվանելով անիսկական, կեղծ սերերը, որոնք կարող են արտահայտվել տարբեր ձևերով: Դիտարկենք դրանցից մի քանիսը և գուցե կտեսնենք իրականության ծանոթ պատկերներ: Ունանք սեր են համարում իրենց սեփականատիրական մղումները.



Վ. Սուրենյանց. Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ

Ըստ չեզ, ի՞նչ է մտածում Շամիրամը, նա սիրո՞ւմ էր արդյոք Արային: Սերը կարո՞ղ է մահվան պարմառ դառնալ:

այսինչն իմ ընկերուհին է, իմ ընկերը, իմն է... Նման մղման դեպքում «սիրողներից» մեկը՝ «սեփականատերը», սկսում է հրահանգներ տալ մյուսին, թելադրել, թե նա ինչ պետք է անի և ինչպես, ինչպես հագնվի, ում հետ խոսի, ում հետ՝ ոչ... Մի խոսքով՝ փորձում է տնօրինել «սիրած» էակին այնպես, ինչպես տնօրինում են սեփականությունը: Այսպիսի «սերը» կա՛ն ավարտվում է բաժանումով, կա՛ն երկրորդ կողմը հաշտվում է իր դերի հետ ու սկսում դա համարել սիրո վիճակ, այսինքն՝ կատարում է փախուստ ազատությունից:

Որոշ կանայք իրենց ամուսինների մասին մրաժնում են, որ եթե ծեծում է, ուրեմն սիրում է, եթե խանդի տեսարաններ է սարքում առիթ-անառիթ, ուրեմն սիրում է:

Իրականում նման կեղծ սիրո երկու կողմերն էլ անազատ են, քանի որ ազատ մարդը չի կարող և չի ցանկանում բռնաճալ մեկ այլ մարդու վրա: Ե՛վ բռնակալը, և՛ նրան ենթարկվողն անազատ են: Իսկ եթե մարդը չունի ազատություն, նա չի կարող սիրել:

Երբեմն նման սեփականատիրական մղումներով ծնողներն են վարվում երեխաների հետ, և հասկանալի է, որ որպես «սեփականություն» մեծացած երեխան ապագայում էլ կարիք է ունենալու մեկ ուրիշ «սեփականատիրոջ», քանի որ վարվելակերպի ինքնուրույնությունը նրան անհասանելի է, նա միշտ ուղղորդողի կարիք է ունենալու, տարեց հասակում նման մարդուն կսկսեն ուղղորդել իր իսկ երեխաները:

Անիսկական սիրո մեկ ուրիշ տեսակ է սիրո սպասումը: Այս դեպքում երկուսով սպասում են, օրինակ, նշանադրությանը, հարսանիքին կամ երեխայի ծնունդին՝ մտածելով, թե, այ դրանից հետո որքան երջանիկ են լինելու, որքան են սիրելու միմյանց: Նման սպասման մեջ կարծես թե տարակուսելի ոչինչ չկա, քանի որ



Մինաս Ավեգիսյան. Մտորում

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է նկարիչը նկարը վերնագրել «Մտորում»:

մարդն իր ողջ կյանքում առիթներ է ունենում ինչ-որ երևույթների սպասելու: Միրո սպասումը դառնում է կեղծ սիրո նշան, երբ սպասողները միմյանց հետ ձանձրանում են ներկայում, չեն տեսնում միմյանց մեջ եղած անկրկնելի ու խորքային-արժեքավորը, պարզապես մտածում են, որ իրենց ապագա նոր դերերը (նշանածների, ամուսինների, ծնողների) իրենց կպարզևեն սիրո պահեր: Ինչ խոսք, այդ դերերը կբերեն նոր ու հաճելի թրթռուներ, բայց եթե մարդը չի կարողանում ապրել ներկայով, զգալ ներկայի պարզևած երջանկու-

թյունն ու սերը, նրա կյանքում նման լիարժեք գոյության պահերի առկայությունը շեշտակիորեն կնվազի: Ընթացիկ պահին սիրելի ու լիակատար ապրել չկարողանալու պատճառով է, որ մարդկանցից շատերն ապրում են անցյալով, շատերն էլ՝ ապագայով... Թվում է, թե ապագայով ապրելն ավելի լավ է, քանի որ ամեն ինչ առջևում է, իսկ անցյալով ապրելը կարծես թե ցույց է տալիս, որ մարդն արդեն ապրել անցել է իր լավագույն պահերը: Իրականում երկու դեպքն էլ խոսում են մարդու՝ ներկայից փախուստի մասին:

Արևելյան իմաստուններից մեկին մի անգամ հարցնում են, թե որն է նրա իմաստուն լինելու գաղտնիքը, և նա պատասխանում է. «Ես միշտ անում եմ այն, ինչ որ անում եմ: Եթե ես հաց եմ ուտում, ապա իմ ողջ էությունը զբաղված է ուրելով, եթե ես հանգստանում եմ, ապա լիովին ազատ եմ մտքերից ու գործերից: Իսկ մյուս մարդիկ մի բան անելիս մտածում են մեկ այլ բանի մասին, ու կյանքն անցնում է նրանց կողքով...»:

Ապրվող պահը լիակատար վայելելու մասին միտքը չի նշանակում միայն ներկայից կառչածություն: Եկեք չմոռանանք, որ մարդը **անդրանցականության** ընդունակ էակ է: Ի՞նչ է սա նշանակում: *Մարդը կարող է հոգեպես, մտովին լքել իր ներկա վիճակը և հայրնվել ապագայի կամ անցյալի իրեն ստուգանք բերող պատկերներում:* Նման «փախուստի» դեպքում մարդը պահպանում է իր ամբողջականությունը, քանի որ լիովին չի տրվում, ասենք, իրեն մաշող ներկայի ազդեցությանը: Օրինակ՝ Երկրորդ համաշխարհայինի ժամանակ համակենտրոնացման ճամբարում գտնվող մարդկանցից նրանք էին ավելի տոկոսն տանում իրենց բաժին հասած աղետները, ովքեր ունեին անդրանցականության տաղանդ, կարողանում էին իրենց պատկերացնել ապագայում՝ ազատ, ու չէին հուսահատվում: Եթե ներկան ճնշում է մարդուն, իմաստ ունի երբեմն-երբեմն «փախուստ» կատարել դեպի վեհն ու մարդկայինը, հոգում պահպանել ապրելու, սիրելու և ստեղծագործելու ձգտումն ու կարողությունը:



Սանդրո Բոտիչելլի. Լքվածը

Մարդը պետք է *սովորի սիրել*, որքան էլ այս արտահայտությունը զարմանալի թվա և, ոմանց կարծիքով, սիրո ռոմանտիկան վերածի առօրեականության: Ինչ խոսք, կան մարդիկ, որոնց ի վերուստ տրված է սիրելու տաղանդ (ճիշտ այնպես, ինչպես ոմանք ունենում են բացառիկ ձայն կամ նկարչական ունակություններ անգամ առանց սովորելու), բայց *մարդկանց մեծամասությունը պետք է աշ-*



Էրիխ Ֆրոմ

Խաարի իր հոգու վրա, որպեսզի կարողանա սիրել:

Այժմ նորից անդրադառնանք այն բառերին, որոնք գուգորդվում էին սիրո հետ: Համեմատե՛ք ձեր գտած բառերը Էրիխ Ֆրոմի առաջարկած բառերի հետ. **հոգատարություն, հարգանք և պատասխանատվություն:** Չէ, ինչ-որ բան կարծես այն չէ: Նորի՞ց հոգատարություն, նորի՞ց պատասխանատվություն:

Այո, քանի որ սիրել նշանակում է հոգ տանել սիրած էակի հանդեպ, հարգել նրան ու պատասխանատվություն զգալ նրա համար: *Իսկ սիրել ինքդ քեզ փաստորեն նշանակում է հոգատար ու պատասխանատու լինել ինքդ քո հանդեպ:*

Սիրել, այս բառի իսկական իմաստով, կարող է միայն ազատ մարդը, քանի որ նա ազատ է այն կախվածությունից, որ ինքը կսիրի, եթե իրեն սիրեն: Նրա սերը անպայմանական է, կախված չէ արտաքին հանգամանքներից, այլ բխում է միայն իր էությունից: Նա ազատ է նաև սիրվողի հետ կատարվող փոփոխություններից, քանի որ սիրում է տվյալ անձի ներքին խորքային էությունը, այն անկրկնելիությունը, որ բնորոշ է վերջինին: Նման ձևով սիրելու դեպքում մարդը կախված չէ ո՛չ իր սիրած էակի արտաքին գրավչությունից, ո՛չ տնտեսական վիճակից, ո՛չ առողջ կամ հիվանդ լինելուց: Գուցե այս վերջին միտքը կարդալով արդեն զգացիք, թե որքան բացառիկ է իսկական սերը: Ռուս իմաստասեր **Վլադիմիր Սոլովյովը** գտնում էր, որ սերը մարդու համար դեռևս այն է, ինչ բանականությունը կենդանու համար, այսինքն՝ *անորոշ հնարավորություն:*

Մարդկանց մեծամասնությունը, ցավոք, սիրում է կամ մտածում է, թե սիրում է՝ ելնելով արտաքին հանգամանքներից:

Գեղեցիկ արտաքինը, հարստությունը, հասարակական դիրքը և այլ նմանարիպ հանգամանքներ էական դեր են կատարում սիրահարվելու համար, բայց թե այդ սիրահարվածություններից քանիսն են վերածվում սիրո, հարց է:

Ժամանակի ընթացքում այդ արտաքին հանգամանքները փոփոխվում են, և կարծես թե իրար սիրող մարդիկ հասկանում են, որ այլևս չեն սիրում միմյանց: Ինչո՞ւ, քանի որ սիրո առարկան ոչ թե սիրվողի ներքին խորքային անկրկնելիությունն էր, այլ, օրինակ, արտաքին գրավչությունը կամ հասարակական դիրքը, որը ժամանակի հետ կորստյան է մատնվել, իսկ շրջապատում կան դրանց տիրապետող ուրիշները:

Դուք կարող եք հարցնել. իսկ մի՞թե մարդիկ չեն հիասթափվում: Չէ՞ որ դիմացինի մեջ կարող եք տեսնել հատկություններ, որոնք հիասթափություն են առաջ բերում: Այդ դեպքում ի՞նչ անել, ինքնախաբեությամբ զբաղվել, թե խոստովանել, որ սերն այլևս չկա: Դարձյալ հարցին հարցով պատասխանենք. իսկ մենք ինք-

ներս մեզանից չե՞նք հիասթափվում, չի՞ լինում այնպես, որ ինքներս մեզանում տեսնում ենք այնպիսի հատկություններ, որոնք կարող են մեծ հիասթափություն առաջ բերել... Երևի, թե՞ լինում է... Բայց մենք շարունակում ենք սիրել ինքներս մեզ (գուցե քանի որ ինքներս մեզանից փախչելու տեղ չունենք), սիրել՝ գիտակցելով նաև մեր թերությունները, բայց հավատալով մեր լավագույն էությանը: Այդ դեպքում ինչո՞ւ չենք ցանկանում նման ձևով վարվել նաև դիմացինի՝ մեր կողմից սիրված մարդու հետ: Մտածեք, գուցե ձեր հավատը նրա հանդեպ նրան հնարավորություն կտա հաղթահարել դժվարությունները: *Դարձյալ հիշենք՝ սիրել նշանակում է հոգ փսնել ու պայրասիանապրու լինել, իսկ սա նշանակում է հասուն լինել:* Սիրել կարող են այն մարդիկ, ովքեր հասուն են: Իսկ հոգեկան հասունությունը կապ չունի ինտելեկտուալ և սոցիալական հասունության հետ, մարդը կարող է մի քանի բուռ ավարտել, պաշտոններ ունենալ, բավական տարիների կենսափորձ ձեռք բերել, բայց, ցավոք, մնալ հոգևոր տհասության մեջ: Հոգևոր հասունությունը ներքին աշխատանքի արդյունք է. աշխատանք, որ մարդը շարունակում է կատարել քանի դեռ կենդանի է: Մենք մեր ողջ կյանքում սովորում ենք սիրել, սովորում ենք սիրել մեր ծնողներին, մեր քաղաքը, գյուղը, հայրենիքը, աշխատանքը, մարդկանց...

Մերը հարաբերությունն է ողջ աշխարհի հետ, հավատ է նրա հանդեպ, հարգանք, հոգապարտություն ու պայրասիանապրություն, որն իմաստավորում է սիրողի գոյությունը:



Մ. Կասար. Երեխային յոդացնող մայրիկը

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է հավատը:
2. Ինչո՞վ է տարբերվում հավատ-հայտնությունը հավատ-վստահությունից, ո՞րն է ավելի կարևոր:
3. Քրիստոնեությունը մեզ սովորեցնում է հուսալ, հավատալ և սիրել: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:
4. «Իմաստասիրություն» նշանակում է սեր առ իմաստություն: Կարո՞ղ եք բացատրել «սեր» բառն այս համատեքստում:
5. Սիրո իմաստասիրական մեկնաբանությունն ընդունելի՞ է, թե՞ ոչ: Ինչո՞ւ:
6. Համաձայն եք Վլադիմիր Սոլովյովի կարծիքի հետ: Ինչո՞ւ:
7. Դուք ապրե՞լ եք սիրո զգացում, թե՞ դեռ ոչ: Եթե այո՝ ապա վերն ասվածի լույսի ներքո ինչպե՞ս եք գնահատում ձեր ապրածը:

8. Կարդացեք Թումանյանի քառյակը.
*Ո՛վ իմանա՛՜ ո՛ր ընկանք,
 Քանի օրվա հյուր ընկանք,
 Սերն ու սիրտն էլ երբ չըկա՛՜
 Կըրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք:*
 Ինչպե՞ս կբացատրեք քառյակի «Սերն ու սիրտը երբ չկա՛՜ կրա՛կ ընկանք, զո՛ւր ընկանք» արտահայտությունը:
9. Անիսկական սիրո ինչպիսի՞ տեսակների մասին իմացաք: Համաձայ՞ն եք, որ դրանք կեղծ սերեր են: Ինչո՞ւ:
10. Ի՞նչ հատկություններով պետք է օժտված լինի այն մարդը, ում դուք կսիրեք: Ինչո՞ւ:
11. Ի՞նչ եք կարծում, ո՞ր հայրենիքն է ավելի հեշտ սիրել. հարուստ և բարգավաճ, իր քաղաքացիներին ամեն ինչ տվո՞ղ, թե՛ կայացող, ոչ հարուստ և հակառակը՝ քաղաքացիների լրացուցիչ նվիրվածության կարոտ: Ինչո՞ւ:
12. Լա՞վ է, որ հեռուստացույցից անընդհատ մատուցում են սիրո տեսարաններ: Ինչո՞ւ:

Առաջադրանք

Վերլուծե՛ք սիրո և հավատի մասին ձեզ ծանոթ արվեստի գործերը և առանձնացրե՛ք մեկ-երկուսը, որոնց ծանոթանալը, ձեր կարծիքով, օգտակար կլինի ձեր համադասարանցիներին: Ձեր կազմած ցուցակը տարե՛ք դասարան ու քննարկե՛ք ընկերների հետ՝ նրանցից տեղեկանալով իրենց կարծիքով արժեքավոր գրքերի մասին: Ժամանակ գտե՛ք այդ գրքերն ընթերցելու համար:



Սանդրո Բոտիչելլի. Գարուն

ԳԱՍ 25. ՄԱՐԴԸ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՈՐՈՆՈՒՄԵՐՈՒՄ

Իմաստության փարբերիչ նշանը կյանքի հրճվագին ընկալումն է. նրան, ինչպես այս լուսնի փակ եղած ամեն ինչի, բնորոշ է հավեպ պայծառ պարզությունը...

Միշել Մոնտեն

Կարդացե՛ք հեղինակ ավանդազրույցն ու մտորե՛ք դրա շուրջ

Պատմում են, որ կյանքից հիասթափված մի մարդ օրերից մի օր որոշում է վերջ տալ իրեն: Մոտակայքում մի լիճ է լինում: Մարդը որոշում է գնալ լճում խեղդվելու: Լիճ գնալու ճանապարհին հանդիպում է մի կաղ մարդու, որին ասում է իր նպատակի մասին: Կաղը մարդուն խնդրում է առողջ ոտքն իրեն տալ: Մարդուն այն պետք չէր. չէ՞ որ նա մինևույն է գնում էր խեղդվելու: Մարդն իր առողջ քայլվածքն առանց ափսոսանքի տալիս է կաղին, ու ինքը կաղալով շարունակում ճանապարհը: Ապա հերթով հանդիպում է համր, խուլ, կույր մարդկանց ու նրանց տալիս իր խոսելու կարողությունը, լսողությունն ու տեսողությունը: Ու այդպես համրացած, խլացած ու կուրացած հասնում է լճափին ու հանկարծ սկսում զգալ, թե ինչ հրաշալի է, որ ինքը կա, որ իրեն տրված է կյանք, տրված են այդ լիճն ու աշխարհը... Ավանդույթն ասում է, որ նա այդպես երկա՛ր նստում է լճի ափին՝ մոռանալով, թե ինչու էր եկել այդտեղ:

- ◆ *Ի՞նչ էք կարծում, ո՞րն է ավանդազրույցի գլխավոր միտքը:*
- ◆ *Մտորե՛ք, արդյոք ավանդազրույցի հերոսն ապագայում կմտածե՞ր կյանքից հրաժարվելու մասին, թե՞ ոչ: Ինչո՞ւ:*
- ◆ *Ի՞նչ եզրակացություններ կարելի է անել ավանդազրույցից:*

Կյանքը մարդուն տրված մեծագույն արժեքներից մեկն է, որի մասին մտորում-խորհրդածությունը ևս մեկ քայլով հասունացնում է մարդուն: Սակավ հավանական է, որ նախորդ դասերից մեկի ժամանակ արժեքների ցանկ գրողները նշեին նաև կյանքը որպես արժեք: Բայց այսուհետ երևի կմտորեք դրա մասին: *Կյանքը որպես արժեք, որպես պարզև, որպես ինքնաիրակասանալու հնարավորություն... Իրոք, հրաշալի է, որ մեզ այն տրված է:*

Կյանք սրանալու համար ոմանք շնորհակալություն են հայտնում իրենց ծնողներին, ոմանք Աստծուն ու նախահնամությանը: Շնորհակալության այդ զգացումը կարևոր է սեփական և այլոց կյանքն արժևորելու ճանապարհին: Մտորե՛ք, թե ինչի համար կարող էք շնորհակալ լինել: Ի՞նչ կարող է փալ շեզ նման մտորումը:



Միշել Մոնտեն

Կյանքը մեծագույն արժեք է, քանի որ իր մեջ պարունակում է այն ամենի հնարավորությունը, ինչ կարող է տրվել մարդուն, ինչին նա կարող է հասնել իր սեփական ջանքերի միջոցով: Կյանքը արժեքավոր է, քանի որ այն մեկն է, անկրկնելի ու նաև... անցողիկ: Մեզանից յուրաքանչյուրը վաղ թե ուշ հասկանում է, որ հրաշալի է, որ իրեն տրված է կյանքը, Գավիթ Անհաղթի խոսքերով ասած՝ ամեն մեկի ինքնակատարելագործման հնարավորությունը, սակայն նաև մեզ համար պարզում ենք, որ կյանքն անսահման չէ... Մարդու իմաստասիրական որոնումների ազդակներից մեկն էլ դառնում է այն հանգամանքի գիտակցումը, որ կյանքը վերջավոր է: Իսկ իմաստագրված¹ է արդյոք կյանքը մահվամբ...

Փիլիսոփայությունը խորհրդածություն է մահվան մասին:

Գավիթ Անհաղթ



Ժ.Լ. Գավիթ. Սոկրատեսի մահը

Մահվան դալարապարզված Սոկրատեսին առաջարկեցին փախչել, բայց նա չցանկացավ փախուստի դիմել, քանի որ մահից չէր վախենում

Մանկության որոշակի փուլում, կյանքի հանգամանքների բերումով, երեխան սկսում է մտածել մահվան մասին: Ոմանք ավելի շուտ են գիտակցում մարդու մահկանացու լինելու փաստը, ոմանք՝ քիչ ուշ, բայց վաղ թե ուշ բոլորն էլ մտածում են մահ երևույթի ու մահվան առկայության մասին: Մահվան մասին առաջին մտորումներն առաջ են բերում մահվան հանդեպ վախի զգացում: Յավոք, մարդկանց մեծամասնությունը չի կարողանում ազատագրվել մահվան հանդեպ վախից ողջ կյանքի ընթացքում:

Ինչպես տեսաք բնաբանից, **Գավիթ**

Անհաղթը փիլիսոփայությունն անվանում է խոկումն մահու՝ մտորում մահվան մասին: Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք փիլիսոփաները մռայլում են մարդկանց կյանքը՝ ցավոտ խնդիրների շուրջ նրանց կենտրոնացնելով: Մի՞թե ավելի ճիշտ չէ ապրել այնպես, ասես մահը ո՛չ կա, ո՛չ կլինի, ասես մահվան առկայությունը վերաբերվում է ուրիշներին, բայց ոչ մեզ: Պարզվում է, որ ոչ, քանի որ մահվան հանդեպ չհաղթահարված վախը կարող է թունավորել մարդու կյանքը՝ նրան մղելով երբեմն անմարդկային արարքների:

Հին հույն իմաստասեր **Էպիկուրն** ասում էր. «Մենք երբեք մահվան հետ չենք հանդիպում. երբ կա մահը, չկանք մենք, երբ կանք մենք, չկա մահը»: Ուրեմն ինչո՞ւ անիմաստ ժամանակ ծախսել մահվան մասին մտորելով: Բայց դուք երևի գլխի եք ընկնում, որ Էպիկուրը դա ասում էր առանց մահվանից վախենալու... Իսկ վախից ազատվելը նույնպես ազատություն է, որի համար պետք է աշխատել:

Այդ աշխատանքն էլ հենց փիլիսոփայությունն է: Ահա թե ինչու փիլիսոփայությունը նաև խոկումն է մահու:

20-րդ դարի մեծագույն արչակազմիներից մեկը՝ արգենտինացի Խորխե Լուիս Բորխեսը, գրել է մի պատում՝ «Անմահը»: Պատումի հերոսը հրաշքով հայտնվում է մի քաղաքում, որտեղ բնակվում են անմահները: Ունենալով գեղեցիկ սպասելիքներ՝ նա ապշում է՝ հասկանալով, որ իր տեսած ծույլ ու դանդաղաշարժ էակները անմահներն են: Նրանք չեն շարժվում, չեն խոսում, անչրև է գալիս, նրանք անգամ չեն պարսպարվում անչրևից. միևնույն է չեն հիվանդանա, նրանց հետ ոչինչ չի լինի: Նրանք ինչ-որ բան անելու շարժառիթ չունեն, քանի որ մահկանացու չեն: Իսկ «մահկանացուների համար ամեն ինչ անդառնալիի և պարահասկանության արժեքն ունի: Անմահների մոտ ընդհակառակը՝ ամեն մի գործողություն (և ամեն մի միտք) անրեսանելի անցյալում կարարվածների արչագանքն է կամ ուշ ապագայում ինչևհեղության աստիճան կրկնվելիքների հարազար գուշակումը.... Ոչինչ մեկ անգամ չի կարարվում, ոչինչ սքանչելիորեն անդարչ չէ...», – գրում է Բորխեսը: Ուշադրություն դարչրեք՝ ոչինչ սքանչելիորեն անդարչ չէ:

Իսկ մարդկային կյանքում համարյա ամեն ինչ սքանչելիորեն անդարձ է: Դուք հիմա 17 կամ 18 տարեկան եք, սովորում եք միջնակարգ դպրոցի ավարտական դասարանում, բայց լավ գիտեք, որ շատ շուտով դուք կավարտեք դպրոցը: Ամեն ինչ անցնում է, ամեն ինչ դառնում է անցյալ: Դա գուցե թե փոքր-ինչ ցավալի է, բայց դրանում է նաև կյանքի մեծագույն իմաստը. *քանի որ ամեն ինչ անցնում է, պետք է հասցնել ապրել, պետք է հասցնել իրականացնել քեզանում եղած պոտենցիալը, այն անկրկնելիությունն ու անսահմանությունը, որով օժտված ես ի վերուստ:* Իսկ եթե ժամանակն անսահման լիներ, ոչ ոք ջանքեր չէր գործադրի, չէ՞ որ միշտ էլ կարող ես ինչ-որ բան անել:

Իսկ դուք ինչպե՞ս եք պարկերացնում անմահների քաղաքը: Ի՞նչ եք կարծում, անմահությունը շանչրույթ կրեթի՞ շեր պարկերացրած քաղաքում, թե՞ ոչ: Ինչո՞ւ:

Մահն իմաստավորում է մարդու կյանքը երկու առումով՝ երկու դեպքում էլ դրդելով նրան գործել, ինքնահրականանալ... Նախ մահվան առկայությունը նշանակում է, որ մարդուն տրված ժամանակն անսահման չէ, հետևապես մարդը պետք է ժամանակի հոսքին գուզընթաց անվերջ գործի: Երկրորդ՝ մահն անհատականացնում է ամեն մի առանձին մարդու, քանի որ մահվամբ է ընկալվում (ցավոք, սովորաբար այդպես է լինում) միայն, որ տվյալ մարդն անկրկնելի ու եզակի էր, որ տիեզերքում այլևս ոչինչ ու ոչ մեկը չի կարող լրացնել նրա տեղը:

Եթե առաջին ընկալումը դրդում է մեզանից յուրաքանչյուրին արժուրել մեզ տրված ժամանակը, ապա երկրորդ ընկալումը մեզ դրդում է հասկանալ մեզ շրջապարող մարդկանց արժեքը: Եթե երբեմն առ երբեմն մտորենք մեր տարիկ-պապիկների, ծնողների և այլոց անցավոր լինելու մասին, գու-

ցե ավելի մարդկային, բարի ու հանդուրժող կլինենք նրանց հանդեպ, գուցե կշտապենք սիրել նրանց, որովհետև ... հեղու կարող է ոչ լինել...

Մահն ունի նաև մի երրորդ իմաստ, քանի որ այն հասարակությանը (ինչու չէ, նաև բնությանը) հնարավորություն է տալիս նորանալու, թարմանալու, քանի որ մահկանացու մարդիկ երեխաներ են ունենում ու մեծացնում նրանց: Իսկ իմաստասերները հավատում են, որ ամեն մի նոր սերունդ նախորդից լավն է, առաջադեմ, մարդկային: Անմահներն իրենց նեղություն չէին տա երեխաներ ունենալ, քանի որ նրանք բոլորն իրենց նույն կազմով ու նույն որակով միշտ կլինեին ու կլինեին...

Մահը, ի թիվս նշվածների, մեկ այլ իմաստ էլ ունի. մահը որպես կրքերի մահացում: Փիլիսոփայությունը բնորոշելով որպես մտածմունք մահվան մասին՝ Դավիթ Անհաղթն ասում է, որ նկատի ունի *կրքերի՝ մարդուն պարուրող անզայելի ցանկությունների մահացումը*: Նա ասում է, որ իմաստասերները զբաղվում են կրքերի մահացմամբ, քանի որ չբավարարվող տենչանքները կարող են ծնել մեծ տառապանքներ, իսկ կրքերի մահացումը հնարավորություն է տալիս ազատվելու բազմաթիվ արատներից, դառնալու ավելի առաքինի ու երջանիկ: Այս միտքն արդիական է նաև այսօր՝ շուկայական տնտեսության պայմաններում, երբ շատ մարդիկ կամովին թե ակամա իրենց կյանքը վեր են ածել նյութական ձեռքբերումների մրցակազմի: Չկարողանալով վերացնել ընչաքաղցության կիրքը, նրանք գործում են՝ ելնելով միայն այդ նպատակից: Սակայն, ինչպես հիշում ենք, նյութական ձեռքբերումները չեն կարող նպատակ լինել: Դրանք միջոց են հոգևոր ձեռքբերումների համար, ոչ ավելին: Բայց ով իր հոգու ուժերը նվիրել է միայն նյութական ոլորտին, զարմանալիորեն, իսկ գուցե բնականորեն այլևս չի կարողանում երջանկանալ անգամ իր հետապնդած նյութական արժեքներին տիրապետելիս:

Մահն այն հանգամանքն է, որ մարդուն դարձնում է իրոք մարդկային: Մարդը, գիտակցելով իր մահկանացու լինելը, առանձնանում է կենդանական աշխարհից: Կենդանին նույնպես մեռնում է, բայց չգիտի այդ մասին: Միայն մարդն է, որ օժտված է ողբերգականությամբ, այսինքն՝ գիտի իր վերջավոր լինելու մասին: *Սակայն դա հերոսական ողբերգականություն է, որը ոչ թե սոսկ արձանագրում է մահվան առկայության փաստը, այլ սովորում ասելու երջանկության և թռիչքի պահեր ու դրանցով անմահանալ*: Իմաստասիրական խորհրդածությունների արդյունքում մարդը հանգում է այն կարևոր մտքին, որ մահվան առկայությունը իրեն դրդում է արժանապարհիվ ասելու կյանքը, մահվան առկայությունը մարդուն մղում է սիրելու ինքն իրեն ու շրջապարողներին՝ հոգալար և պարասիսաւարու լինելու իր գոյության և այդ գոյության իմաստի համար:

Ի՞նչ եք կարծում, կա՞ն արդյոք Պլատոնը, Դավիթ Անհաղթը, Գրիգոր Նարեկացին: Նրանք մահկանացու՞ են, թե՞ փիլիսոփայական իմաստով՝ անմահ:

Ոմանք մտածում են. քանի որ ամեն ինչ ավարտվում է մահվամբ, ուրեմն ամեն ինչ անիմաստ է: Ինչո՞ւ տքնել, չարչարվել. չէ՞ որ վերջում միևնույն է մահն է...

Նախ մի դիտարկում. ոչ ոք իրոք չի կարող ասել, որ վերջում մահն է, քանի որ մահը կարող է լինել ավելի հրաշալի նորի սկիզբ: Այդ մասին են պնդում բազմաթիվ կրոններ:

Կյանքի իմաստը կյանքը լիակատար զգալ ու ապրելն է, կյանքում սրեղծագործելն ու սեփական առաքելությունն իրականացնելը: Մարդը կյանքի իմաստը պատրաստի չի գտնում, ոչ մի մարդ մյուսի համար չի կարող կյանքի իմաստ ստեղծել: Ամեն մարդ ինքն է գտնում իր կյանքի իմաստն իր նպատակամղված որոնումների, հոգևոր ճիգերի, աճելու, աշխատանքի արդյունքում: Կյանքի իմաստը հենց իրականության թվացյալ անիմաստության և քաոսի մեջ իմաստ գտնելու գործընթացն է: Իմաստի որոնումները լարված կամային ինքնախորասուզումներ են, որոնց արդյունքում մարդն աստիճանաբար ստեղծում է նաև ինքն իրեն: Եվ զարմանալի թող չթվա, որ կյանքի իմաստը պատանեկության տարիներին անմիջապես չի տրվում մարդուն, այն դեռ ավելի շատ հարցերի ու որոնումների տեսքով է արտահայտվում... Կյանքի իմաստը գոյանում է հենց կյանքն ապրելու ընթացքում, այն իմաստավորելու ամենօրյա ջանքերի արդյունքում:

Եվս մեկ դիտարկում. պարզվում է, որ ինքնաիրականացած, իրենց պոտենցիալն իրացրած մարդիկ մահվանից չեն վախենում: Ժամանակի հոսքին նրանք նայում են հանդարտ, անվրդով, քանի որ բավարարվածության զգացումով կարող են փաստել, որ իրենց հաջողվել է անել այն, ինչի համար իրենք եկել էին այս աշխարհ: Հասուն և ծեր տարիքում մահվանից շարունակում են վախենալ այն մարդիկ, ում ծերությունն իմաստություն չի բերել իրենց, ովքեր ապրած կյանքի իզուր լինելու մաշող ու հաճախ չխոստովանվող զգացում ունեն:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ եք կարծում, իմաստ ունի՞ր արդյոք կյանքի իմաստի մասին խորհրդածությունը:
2. Ինչպե՞ս կարելի է բացատրել Գավիթ Անհաղթի կրքերի մահացման մասին գաղափարը: Ըստ ձեզ, այն ի՞նչ կարող է տալ մարդուն:
3. Որո՞նք են մահ երևույթի բերած իմաստները: Ի՞նչ բարոյական, աշխարհայացքային մտորումներ է ծնում մահվան առկայությունը:
4. Ինչպե՞ս կբացատրեք Ավ. Իսահակյանի հետևյալ տողերը.

Կենսական ծովի հույզերի միջին

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.

Կայծակն է զարկում իմ վես նակարին,

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Հողմ ու փոթորիկ շուրջս եմ հաժում,

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:

Գոռ ալիքները կուրծքս եմ ծեծում,

Ես ժայռի նման կանգնած եմ ամուր...:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է պետք «*Ժայռի նման ամուր*» կանգները:

Առաջադրանք

1. Հարմար տեղավորվե՞ք բազկաթոռին, փակե՞ք աչքերն ու պարկերացրե՞ք ձեր... 75 կամ 80-ամյակի տոնակատարությունը: Դժվա՞ր է: Երևակայե՞ք: Պարկերացրե՞ք այն սրահը, որտեղ տոնում են ձեր փարեդարձը, այն մարդկանց, ովքեր ողջունում են ձեզ, այն խոսքերը, որ ասվում են ձեր՝ որպես մարդու մասին: Պարկերացրե՞ք նաև, թե ինչ են ասում ձեր արածի մասին: Այնուհետև, շարունակելով ձեզ պարկերացնել պարկառելի հոբելյար, մտորե՞ք հետևյալ հարցերի շուրջ.

- Ի՞նչ են խոսում իմ մասին իմ երեխաները, թոռները:
- Ի՞նչ արժանիքներ են նշում իմ ընկերներն ու աշխատակիցները:
- Որո՞նք են իմ կյանքի կարևոր փուլերը:
- Որո՞նք են իմ կարևորագույն ձեռքբերումները:
- Որքանո՞վ եմ ես եղել կենսուրախ:
- Եթե կյանքս նորից սարեի, ի՞նչը կփոխեի:

2. Իսկ այժմ վերադարձե՞ք այստեղ ու հիմա: Մտածե՞ք, թե ինչպես պետք է սարեք ձեր այս և եկող փարիները, որպեսզի հոբելյաններ տոնելիս ունենաք կյանքը լիակատար սպրած լինելու զգացողություն:

Գրիգոր Նարեկացի. Մատյան ողբերգության ԲԱՆ ԾԵ, Գ (հատված)



Ինչպես այլազգի մի իմաստասեր
Մահն համարում է մեծագույն չարիք,
Եթե իսկապես իմաստավորված, գիտակցված չէ այն,
Ես էլ իմ խոսքով նույնն եմ հաստատում.
Քանզի անզգա ու պանարամիտ անասունի պես
Մեռնում եմք իզուր՝ ու չեմք զարհուրում,
Կորչում եմք՝ ու չեմք սուկում ապշահար,
Չեմք երկյուղում, երբ հողն եմք իջնելու,
Տարագրվում եմք՝ ու չեմք տագնապում,
Եղծվում եմք՝ ու չեմք ստրջում բնավ,
Մաշվում եմք՝ ու չեմք մտառում նույնիսկ,
Հատնում եմք անհոգ, անփուլթ, անտարբեր,
Գնում եմք անդարձ ու չեմք սթափվում,
Գերեվարվում ու չեմք էլ զգում այդ:

(Թարգմ.՝ Վ. Գևորգյանի)

5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ԴԱՍ 26. ԳԼՈՒԲԱԼԱՅՈՒՄԸ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄԸ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԴՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ



Ընթերցե՛ք տեքստը

*Քանի աշխարհ է կորել աշխարհում,
Բայց աշխարհն էլի ելքեր է ճարում,
Որ ինքն իր գլխին փորձանք չբերի...
Որ իրեն շրկի ու վեր բարձրանա,
Որ չքվի հրճվանքն ավերումների,
Եվ արարումի ցավը քաղցրանա*

Համո Սահյան

Դուք, ինչ խոսք, հայոց և համաշխարհային պատմության դասընթացից ուսումնասիրել եք այն հասարակական փոխակերպումները, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարում, և պատկերացնում եք, թե այժմ ինչպիսի նոր իրողություններ են առկա մարդկություն կյանքում:

Երևի կմտաբերեք կամ ծնողների հետ զրույցներում կպարզեք, որ 2008 թվականին ԱՄՆ-ում սկիզբ առած տնտեսական ճգնաժամն այնուհետև ծավալվեց Եվրոպայում, Ռուսաստանում՝ անմասն չթողնելով իր քաղաքական հետևանքներից նաև մեր երկիրը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ պետք է ԱՄՆ-ի երկարաժամկետ վարկավորման բանկային համակարգում ծագած ճգնաժամն արտացոլվեր մեր՝ հայաստանյան կյանքի որակի ու այլ հանգամանքների վրա:

Ակնհայտ է, որ ներկայումս երկրագնդի մի կեսում կատարվող իրադարձությունները կարող են ազդել մնացած այլ կեսերում ապրող մարդկանց վրա: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ մտածողները նախորդ դարի վերջերից սկսեցին խոսել համամարդկային հիմնախնդիրների առաջացման մասին. *հիմնախնդիրներ, որոնք սկիզբ առնելով երկրագնդի որևէ կողմերի վայրում, այնուամենայնիվ, այնքան ազդեցիկ են ու կարևոր, որ հավասարապես վերաբերում և մրտահոգում են ողջ մարդկությունը:*

Ի՞նչ գիտեք արդիականության համամարդկային հիմնախնդիրների մասին: Օրինակ՝ օգոնային շերտի, օդի աղտոտվածության, ազգաբնակչության բնական աճի կարգավորման, աղքատության հաղթահարման և այլ հիմնախնդիրների մասին:



Թվարկված և այլ համամարդկային հիմնախնդիրները սկսեցին կոչել **գլոբալ, այսինքն՝ ողջ երկրագնդին վերաբերող**: Այնուհետև հասարակության զարգացումն ինքնրստիմքյան ակնհայտ դարձրեց, որ ոչ միայն հիմնախնդիրներն են գլոբալանում, այլև կյանքի տարատեսակ արտահայտությունները: Արդեն իսկ ակնառու էր, որ մարդիկ երկրագնդի տարբեր կետերում սկսել են միանման հագնվել (օրինակ՝ ջինսե հագուստը տարածվել է համարյա ողջ աշխարհում), միանման սնվել (ստեղծվել են նույնանման ճաշարանների ցանցեր), լսել նույնանման երաժշտություն, օգտագործել նույնանման գործիքներ և այլն: Տարբեր հասարակությունների այս մերձեցման, նույնանմանեցման գործընթացն էլ սկսեցին անվանել գլոբալացում:

Թեպետ գլոբալացում երևույթի շուրջ բազմաթիվ վեճեր ու անհամաձայնություններ կան, այն կարելի է ընդհանուր առմամբ բնորոշել հետևյալ կերպ:

Գլոբալացումն ավելի ու ավելի շարժողվորդների և պեպու-թյունների հարաճուն ընդգրկումն է տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական և մշակութային ոլորտների միասնական համաշխարհային գործընթացներում, իհարկե, տարբեր շափերով և արագությամբ:

Գլոբալացման հետևանքով ավելի ու ավելի թափանցիկ են դառնում տարբեր ժողովուրդներին ու մշակույթները միմյանցից անջատող տարածական, պետական և հոգևոր, մշակութային սահմանները: Գնալով ավելի ու ավելի հեշտ և արագ են տեղից տեղ անցնում գաղափարները, տեղեկատվությունը, տեխնոլոգիաները, դրամը, ապրանքներն ու ծառայությունները և, ինչու չէ, նաև մարդիկ:

Գուր գիտեք, որ եվրոպական մի շարք երկրներ միավորվել են, այսպես կոչված, շենգենյան¹ համաշայնագրով, որի շնորհիվ այդ երկրների քաղաքացիները կարող են հեշտությամբ մի երկրից մյուսն անցնել առանց վիզաների և այլ սահմանափակումների:

Առաջին հայացքից թվում է, թե գլոբալացումը դրական երևույթ է, քանի որ նպաստում է մարդկության միավորմանը: Գուցե և այդպես էլ լինել, եթե, սա-

¹ Շենգենն այն ամրոցի անվանումն է, որտեղ կնքվել է համաձայնագիրը:

կայն, այդ միավորող գործընթացներում առկա չլինեին որոշ բացասական կողմեր. օրինակ՝ որոշ մշակույթների կողմից մյուսներին իրենց կամքի թելադրումը, իրենց կենցաղի, մտագործելակերպի ձևերի տարածումն ու երբեմն նաև պարտադրումը: Նկատված բացասական միտումներն առիթ տվեցին բազմաթիվ մարդկանց հռետտերեն նայելու գլոբալ գործընթացներին և դրանցում մարդկության զարգացման համար վտանգներ տեսնելու: Գլոբալացումը նման կերպ ընկալող մարդիկ իրենց սկսեցին անվանել **հակագլոբալիստներ**՝ փորձելով ցույցերով, միջազգային հանդիպումներն ու գազաթաժողովները դատապարտելով հասարակությանը հետ պահել գլոբալացման գործընթացներից:



*Հակագլոբալիստների ցույցը
Էդինբուրգում մեծ տերությունների
գազաթաժողովից առաջ*

Ընդունելով գլոբալացում երևույթին բնորոշ բացասական կողմերի առկայությունը, հասարակագետներն, այնուամենայնիվ, նկատում են, որ այն հասարակության պատմական զարգացման բնականոն գործընթաց է, որին պարզապես հակադրվելը ոչինչ չի փոխի: Մարդկությունն աստիճանաբար գնում է դեպի գործունեության ընդհանուր դաշտի ստեղծում ճիշտ այնպես, ինչպես դարերի ընթացքում շարունակաբար միավորվել է՝ ստեղծելով պետական կազմավորումներ: Ներկա ժամանակաշրջանում արդեն պետություններն են հարաբերվում միմյանց հետ կարծես թե ստեղծելու համար ինչ-որ վերպետական համաշխարհային միավորում, որը դեռևս չկա, սակայն չի բացառվում, որ արդեն այս դարում նման մի կառույց ստեղծվի: Քանի որ գլոբալացումը հասարակության զարգացման օրինաչափ երևույթ է, դրան գուցե թե պետք է նայել հանդարտ, դժգոհելու և տագնապելու փոխարեն փորձելով այնպես անել, որ առկա փոփոխությունների առավելություններից հնարավոր լինի օգտվել, իսկ դժվարությունները հնարավոր լինի հաղթահարել:

Գլոբալացման սահմանումից արդեն իսկ տեսանք, որ այն ունի տարբեր շերտեր. տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական, մշակութային և այլն:

Տնտեսական գլոբալացումը ազգային-պետական տնտեսությունների ինտեգրում-միավորումն է համաշխարհային տնտեսության մեջ արտաքին առևտրի, արտասահմանյան կապիտալի ներդրումների, աշխատանքային ռեսուրսների և ընդհանրապես ազգաբնակչության տեղաշարժերի շնորհիվ: Տնտեսական գլոբալացումն ամենաակնհայտն է մեր կյանքում:

♦ *Ուշադրություն դարձրեք, թե որտեղ են արեղծվել ձեզ շրջապատող իրերը՝ կահույքը, հեռուստացույցը, խաղալիքները, ձեր հագուստները: Կնկարեք, որ ինչ-որ բան արտադրված է, ասենք, Գերմանիայում, մյուսը՝ Մալազիայում, երրորդը՝ Չինաստանում, Ռուսաստանում, այլուր:*

♦ *Նկատել՞ էք, թե ինչ սպրանքանիշեր կան մեր շրջապատում, ի՞նչ էք կարծում, դրանց ո՞ր տիպն է հայկական:*

Տնտեսական գլոբալացումն ունի թե՛ դրական կողմեր, թե՛ բացասական: Դրական կարելի է համարել այն, որ տնտեսական գլոբալացման շնորհիվ երկրագնդի տարբեր մասերում հնարավորություն է ստեղծվում ձեռք բերել ու սպառել գիտության նորագույն նվաճումների արդյունքում ստեղծված սպրանքներ ու ծառայություններ (օրինակ՝ բջջային հեռախոս, ինքնաթիռ, միկրոալիքային վառարան և այլն), եթե նույնիսկ տվյալ երկիրն ի վիճակի չէ ստեղծել նման բարիքներ: Սակայն տնտեսական գլոբալացումը կարող է բերել տնտեսության որոշակի ճյուղերի կորստի այն երկրներում, որտեղ այդ ճյուղերը չեն կարողանում մրցակցել դրսից եկած տնտեսական միավորումների հետ:

Երբեմն մեր քաղաքական և այլ հայտնի գործիչները թե՛ հայաստանցիներին, թե՛ սփյուռքում ապրողներին կոչ են անում հնարավորության դեպքում նախընտրել հայկական արտադրության սպրանքները: Ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ:

Քաղաքական գլոբալացումը քաղաքական ընդհանուր գործընթացների շարացումն է որակապես ու քանակապես, քաղաքական միավորումների՝ պետությունների մերձեցումը քանակցային գործընթացներում, ինչպես նաև վերապահական քաղաքական կառույցներ ձևավորելու շնորհիվ:

Գլոբալացման այս աստիճանը նույնպես ունի դրական և բացասական կողմեր: Դրական է այն միտումը, որ տարբեր պետություններ ձգտում են միավորվել, որ ժողովրդավարական գործընթացները, *իրավունքի և օրինականության գաղափարներն ավելի ու ավելի են տարածվում երկրագնդով մեկ:*

Դուք գիտե՞ք, թե ինչ կառույցներ են ՄԱԿ-ը, ԵՄ-ը, ԱՊՀ-ն ու ինչ արժեքներ են դավանում:

Սակայն բացասական կարող է դիտարկվել այն միտումը, որ քաղաքական դաշտի հսկա պետությունները միջամտում են մնացած փոքր ու միջին պետությունների հարաբերություններին՝ չթողնելով վերջիններին ինքնուրույն կառուցել իրենց հարաբերությունները միմյանց հետ:



Բնասպահականության ոլորտում գլոբալացումն արտահայտվում է նրանում, որ մարդկությունն աստիճանաբար հասկանում է, որ երկրագունդն այնքան էլ մեծ ու անծայրածիր չէ, որպեսզի, օրինակ՝ ինչ-որ ծովում սուզված ատոմային թափոնները կամ ինչ-որ կոնկրետ երկրում իրականացված հողի աղտոտումներն անկատ անցնեն մյուսների համար:

ՉԼՄ-ներից տեղեկանում էք երևի, որ կարող են տեղալ «թթվային անձրևներ», որ օդի

աղյուրվածությունից թռչունները կարող են չվելու ժամանակ երկնքում սարկել ու անչրեի նման ցած թափվել, որ փարբեր երկրներով հոսող գետերը կարող են աղյուրել իրենց ափերը շար հեռու այն վայրից, որտեղ թափոններ են լցրել գետերը և այլն, և այլն:

Եվ առաջանում է անհրաժեշտություն միավորելու ջանքերն ու համատեղ մշակելու միջոցառումներ՝ երկրագունդը՝ բոլորիս ընդհանուր տունը, պահպանելու համար: Այլևս ընդունելի չէ մտածողության այն ձևը, թե մեր ինքնիշխան երկրի տարածքն է, ինչ ուզենք, կանենք, քանի որ պարզ է, որ բնապահպանական խնդիրների համար պետությունների քաղաքական սահմաններն ունեն միայն պայմանական նշանակություն:

Գլոբալացման ևս մեկ հակասական ոլորտներից է մշակութային գլոբալացման ոլորտը: **Մշակութային գլոբալացում կարելի է անվանել մշակույթի ձևերի փարսածումը համաշխարհային հանրության մեջ՝ անկախ պետական սահմաններից:** Գլոբալացման այս շերտն էլ ունի իր դրական կողմը, քանի որ հնարավորություն է տալիս, որ որևէ կոնկրետ տեղում ստեղծված մշակութային արժեքներն անմիջապես դառնան ողջ մարդկության սեփականությունը: Սակայն իրական գլոբալացման գործընթացներն ընթանում են հաճախ այն կերպ, որ ոչ միայն չեն հարստացնում տարբեր մշակույթներ կրողներին, այլև դիմագրկում են վերջիններին՝ նրանց պարտադրելով մշակութային որոշակի համահարթեցված կաղապարներ: Այդ մասին նույնպես խոսք կլինի հաջորդ դասերի ժամանակ:



Հարց է ծագում. ի՞նչ անել: Պատասխանը հետևյալն է. պետք չէ վախենալ գլոբալացումից և հակադրվել դրան, քանի որ այն անխուսափելի գործընթաց է: Ավելի ճիշտ կլինի ուսումնասիրել դրա հետևանքները, որպեսզի կարողանանք ուժեղացնել դրական ազդեցությունները և չեզոքացնել կամ հակազդել բացասականներին՝ պահպանելով մեր հայկականությունն ու մեզ բնորոշ յուրակերպությունները:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է գլոբալացումը:
2. Ովքե՞ր են հակագլոբալիստները, ի՞նչ են պահանջում նրանք:
3. Եթե ընտրության առջև կանգնեիք, գլոբալի՞ստ կդառնայիք, թե՛ հակագլոբալիստ:
4. Ի՞նչ է տնտեսական գլոբալացումը: Ի՞նչ երևույթներ կարող եք նշել այդ ոլորտից:
5. Որո՞նք են քաղաքական գլոբալացման դրական և բացասական կողմերը:
6. Ինչպե՞ս է արտահայտվում գլոբալացումը սոցիալական ոլորտում:

7. Գլոբալացման գործընթացների համատեքստում ինչպե՞ս կբացատրեք Հովհաննես Թումանյանի հետևյալ քառյակը.
*Արյունալի աղեկներով, աղմուկներով ահարկու,
 Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
 Իրենց հոգու անապարից խուսափում են խոռոներամ
 Դեպ Արևելքն աստվածային - հայրենիքը իմ հոգու...:*
8. Բնապահպանության ոլորտի գլոբալացումը դրական, թե՞ բացասական երևույթ է:
9. Ի՞նչ է մշակութային գլոբալացումը: Ինչպիսի՞ հնարավորություններ և բարդություններ է այն պարունակում:

Առաջադրանք

Մտածե՛ք, թե համաշխարհային հանրությունն ինչպես է «ներխուժում» ձեր բնակարան ու կազմեք ցուցակ՝ թվարկելով այն իրերը, երևույթները և գործընթացները, որ կան կամ տեղ են գտնում ձեր տանը, բայց ունեն գլոբալ բնույթ: Օրինակ՝ հեռուստացույցով դիտում եք արտասահմանյան երկրում սրեղծված գովազդ, ֆուտբոլի միջազգային հանդիպում կամ բարձր մոդայի ցուցադրություն, բջջային հեռախոսով զանգում է համադասարակցին: Թվարկման արդյունքում որոշե՛ք, թե որքանով են գլոբալ իրողություններն ազդեցիկ ձեր ամենօրյա կյանքում:

ԴԱՍ 27. ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՐԱ



Աշխատանք գույգերով

Միմյանց հետ քննարկե՛ք ձեր կազմած ցուցակներն ու համեմատե՛ք՝ որքանով նման կամ տարբեր ազդեցությունների եք ենթարկվում: Վերլուծե՛ք, թե այդ ազդեցություններից որոնք կարելի է համարել դրական, որոնք՝ բացասական:



Ընթերցե՛ք տեքստը

Նախորդ դասին տեսանք, թե գլոբալացումն ինչպիսի ազդեցություններ է թողնում հասարակական, պետական, միջազգային, մշակութային հարաբերությունների վրա: Իսկ այժմ կքննարկենք գլոբալացման ունեցած որոշ ազդեցություններ կոնկրետ անձնավորության և նրա ներաշխարհի վրա:

Գլոբալացման ազդեցությունների մասին խոսելիս առաջին հերթին հարկ է լինում անդրադառնալ ինքնության խնդրին: 8-րդ դասարանի հասարակագիտության դասընթացում դուք անդրադարձել եք «ինքնություն» հասկացությանը և, ինչ խոսք, հիշում եք, որ **ինքնությունն** *ինչ-որ մեկի ներքին որոշակիությունն է, հենց այդ մեկը լինելու կերպն է և դրա գիտակցումը:*



*Պարզվում է, որ ինքնությունը հոգևոր իրողություն է, քանի որ այն, թե ինչպիսին է ինքն իրեն պարկերացնում մարդը, մեծապես ազդում է նրա ինչպիսին լինելու վրա: Ինքնությունն ունի անհատական, սեռային, խմբային, ազգային, մշակութային և գլոբալ մակարդակներ: Որոշ մտածողներ կարծում են, որ գլոբալացման դրական ազդեցություններից մեկը մարդու գլոբալ ինքնության ձևավորումն է, երբ մարդիկ ի վերջո հասկանում են, որ անկախ պեղական սահմաններից, լեզվի, կրոնի, ավանդույթների տարբերություններից՝ իրենք բոլորն էլ մարդ են՝ երկրագնդի բնակիչներ: Եվ հետևաբար՝ նրանք ավելի մարդասեր ու հանդուրժողական են դառնում, քանի որ տարբեր երկրների ու մշակույթների պարկանոդ մարդկանց մեջ կարևորում են մեկ հասկություն. **մարդ լինելը:***

Փորձե՞ք պատասխանել «Ո՞վ եմ ես» հարցին՝ դրան տալով 10 տարբեր պատասխաններ: Օրինակ՝ «Ես աշակերտ եմ», «Ես հայաստանցի եմ» և այլն: Դժվարանո՞ւմ եք, ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:

Մարդու ինքնությունը ձևավորվում է արժեքների և կողմնորոշիչների այն համակարգում, որին դավանում է տվյալ մշակույթը, որի մեջ մեծանում ձևավորվում է տվյալ անհատը: Մարդու ինքնության ձևավորման վրա մեծ ազդեցություն է ունենում սոցիալական, մշակութային ավանդույթը, որն ամեն մի նոր սերնդի ներկայացուցչի վերագրում է իր դերը՝ կանխանշելով այդ դերին բնորոշ հատկանիշներն ու վարվելակերպերը: Սակայն գլոբալացման դարաշրջանում տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնց հետևանքով սոցիալական փորձի փոխանցման մեխանիզմները խախտվում են: Եվ հետևաբար՝ ոչ թե տվյալ մշակույթի ավագները կամ ծնողներն են, օրինակ, փոխանցում արժեքների ու կողմնորոշիչների համակարգը, այլ, ասենք, հեռուստացույցը կամ Ինտերնետը: Ու չնայած առկա կյանքում տվյալ հասարակության մեջ ինչ-որ երևույթ կարող է դիտվել անընդունելի, սակայն արդեն փոփոխվող ինքնություն ունեցողի համար այն կարող է լիովին ընդունելի համարվել:

Մտաբերե՞ք օրինակներ, երբ չե՞ր ուսուցիչները կամ ծնողներն ինչ-որ բան, մեղմ ասած, չեն քաջալերել, այնինչ դրանք չե՞զ համար ընդունելի են եղել, քանի որ այդպես են վարվել հեռուստատեսային չե՞ր սիրելի հերոսները: Ի՞նչ եք կարծում, նման դեպքերում նախապատվությունը ո՞ր կողմին տալ. ավանդույթին, թե՞ օտարամուտ նորարարությանը: Ինչո՞ւ:



Թարուլ Կրպեյան

Ուլքե՞ր են շեր սիրած հերոսները: Նրանցից քանի՞սն է հայ: Այդ հերոսները մեր ազգային էպոսի՞ց են, հեքիաթների՞ց, թե՞ արտասահմանյան մուլտիֆիլմերից ու կինոնկարներից: Իսկ կարևո՞ր է արդյոք, որ շեզ համար չափանիշ ծառայող հերոսները լինեն հայ:

Պարզվում է, որ այո՛, կարևոր է: Ինչպիսին քո ունեցած խորհրդանիշներն են, քո հերոսներն ու չափանիշներն են, այնպիսին էլ քո ինքնությունն է: Ավանդույթը, ստեղծվելով դարերի ընթացքում, իր մեջ խտացնում է հասարակության և անհատական կյանքում հանդիպող տարբեր իրավիճակներին պատասխաններ տալու կարողությունը, ամուր բարոյական հենքը, իսկ գլոբալացման հետևանքով մեզ վրա թափվող տեղեկատվական հեղեղը հնարավորություն չի

տալիս մարդուն մտորել ու ամբողջացնել իր աշխարհայացքը, ունենալ քիչ թե շատ կայուն պատասխաններ կյանքի տարբեր իրավիճակների համար: *Մարդը դառնում է անկայուն և կարող է հեշտությամբ ենթարկվել փարբեր արտաքին ազդեցությունների:*

Նման ազդեցություններից է գովազդը, որի նպատակը մեկն է. անել այնպես, որ գովազդվող ապրանքը որքան հնարավոր է շատ սպառվի: Այդ նպատակին հասնելու համար գովազդային արդյունաբերության մեջ օգտագործվում են տարատեսակ տեխնոլոգիաներ. սկսած տրամաբանական բացատրություններից, նկարագրություններից, վերջացրած մարդու հոգեկանի վրա տարատեսակ ազդեցություններ գործելուց: Գովազդում մարդուն կարող են ներշնչել, որ երջանիկ լինելու համար իրեն խիստ անհրաժեշտ է, ասենք, տվյալ գուլպան, գրիչը և այլն՝ դրդելով մարդուն հաճախ կատարելու այնպիսի գնումներ, որոնց կարիքն ինքն առանց գովազդի պարզապես չէր ունենա: Այս ամենի արդյունքում ծնվում է մի երևույթ, որը կոչվում է *գերսպառողականություն*, երբ մարդը գնում է ոչ թե այն և այնքան, որքան իրեն անհրաժեշտ է, այլ ավելին: *Չկարողանալով ինքնահաստատվել որպես անձ, գրկել կամ ձեռավորել իր համակողմանի ինքնությունը՝ գերսպառող անձը ինքնահաստատվում է ունենալով և ոչ թե լինելով:* Նրան ամեն անգամ անհրաժեշտ է մի նոր նյութական ձեռքբերում, որպեսզի դրանով նա ինքն իր աչքում սոցիալական արժեք ձեռք բերի: Հասկանալի է, որ ունենալու նման հոգեբանական կախվածությունից շահում է վաճառող կողմը: Մարդկանց մեծ մասը, ձեռք բերելով այս կամ այն բարիքը, մտածում է, որ ինքն էր այդպես ուզում, այնինչ պարզապես առանց գիտակցելու կատարում է գովազդում իրեն ներշնչված հրահանգը:

Գլոբալացումն ազդում է նաև տարբեր տարիքների ու սեռերի մարդկանց սոցիալական դերերի վրա: Որոշ մտածողներ այդ ազդեցությունը համարում են դրական երևույթ, մյուսները՝ բացասական: Ավանդական հասարակություննե-

րում տարիքը համարվում է մարդու իմաստնությունը մեծացնող գործոն և ղեկավարելու, առաջնորդելու հատկանիշը, որպես կանոն, վերագրվում է տարիքն առած մարդկանց: Արևմտյան հասարակություններում, իսկ գլոբալացման արդյունքում՝ նաև նրանց օրինակին հետևող այլ երկրներում հասարակության գլխավոր տարիքային խումբը համարվում է երիտասարդությունը, և տարեցները նույնպես ձգտում են ցույց տալ, որ իրենք երիտասարդ են: Դա արտահայտվում է նրանց հագուստի, շարժումների, դիմելաձևերի մեջ:

Ի՞նչ էք կարծում, տարիքի հանդեպ ո՞ր մտրեցումն է ընդունելի: Ինչո՞ւ: Մեր հասարակության մեջ նկատելի էք տարեցների անլրեսում: Ինչի՞ց է դա գալիս...



Գլոբալացման շնորհիվ փոխվում են նաև հասարակության մեջ սեռերի կատարած դերերը: Եթե ավանդաբար ընտանիքը համարվում էր կնոջ գործունեության հիմնական ոլորտը, արդի հասարակությունում կանայք իրենց դերակատարությունն են ունենում նաև արդյունաբերության, քաղաքականության, մշակույթի և այլ ոլորտներում: Տնտեսական փոփոխությունների և ֆիզիկական աշխատանքի աստիճանաբար երկրորդ պլան մղվելու արդյունքում կանայք ավելի ու ավելի շատ են աշխատում դրսում՝ նպաստելով ընտանիքի նյութական բարեկեցության ապահովմանը: Թվում է, թե դա դրական փոփոխություն է, սակայն խնդիր կա կանանց ու տղամարդկանց նոր դերերին համապատասխան նրանց մտագործելակերպերի մշակման, նրանց նոր ինքնությունների որոնման:

Մեկ այլ խնդիր էլ կա. եթե ընտանիքում աշխատում են և՛ հայրը, և՛ մայրը, ապա ո՞վ է հասցնում զբաղվել երեխաների դաստիարակությամբ, հոգևոր աճով: Պարզվում է, որ ավանդական հասարակություններն ունեին այս և նման հարցերի պատասխանները, իսկ մեր արդի հասարակությունում նման հարցերը դեռ սպասում են իրենց պատասխաններին:

Արևմտյան որոշ երկրներում արդեն վաղուց ընդունված է հայրության նոր ընկալումը, ըստ որի, բացի բնական ձևով կերակրելուց (ինչը դեռևս մայրերի մենաշնորհն է), մնացած բոլոր դեպքերում հայրը մորը հավասար հոգ է տանում երեխայի հանդեպ: Դա ոչ քնահանույք է, ոչ կամայականություն, այլ հասարակության մեջ սոցիալական դերերի վերաբաշխում՝ ըստ անհրաժեշտության և ի սպաս նպատակի՝ երեխայի:

Գլոբալացման բերած մյուս հնարավորություններից մեկն էլ ազգաբնակչության գլոբալ տեղաշարժերն են. մարդկանց միգրացիան մի երկրից մյուսը: Ընդ որում՝ տարբերում են մշտական (երբ մարդը տեղափոխվում է այլ երկիր մշտական բնակության) և աշխատանքային (երբ ժամանակավոր գնում աշխատում է

այլ երկրում ու վերադառնում տուն) միգրացիա: Առաջին հայացքից կարծես թե լավ երևույթ է, քանի որ նպաստում է մարդկանց տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատությանը: Սակայն իրականում, որպես կանոն, զարգացած երկրներն ընդունում են հիմնականում բարձր որակավորում ունեցողներին ու ստացվում է, որ գլոբալացման գործընթացում զարգացող երկրները նաև մասնագետներով ու որակյալ, ստեղծագործ աշխատուժով են ապահովում զարգացած երկրներին: Այսինքն՝ դարձյալ աղքատանում են, քանի որ մարդկային ռեսուրսն ամենամեծ հարստությունն է...

Մտածե՛ք, թե Հայաստանից արտագաղթողների ո՞ր փոկոսն ունի մասնագիտական կրթություն: Պատկերացրե՛ք, թե ինչքան ժամանակ և այլ ռեսուրսներ են պահանջվել, որպեսզի Իսրայել մարդիկ դառնան մասնագետ (լավ մասնագետ դառնալու համար միջին հաշվով 15-18 տարվա ուսուցում է պետք՝ ներառյալ հանրակրթական կամ, օրինակ՝ երաժշտական դպրոցը): Ի՞նչ էք կարծում, ամեն մի որակյալ, ստեղծագործ մասնագետի հեռանալով ինչպիսի՞ քանակական և որակական կորուստներ է ունենում մեր հասարակությունը: Թե՞ այլ կարծիքի եք...

Բացի այդ, իրենց երկրից դուրս աշխատանք փնտրողներին կարող է դարանակալել մեր ժամանակներում ահագնացող մեկ այլ բացասական գլոբալ երևույթ՝ մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը), որի մասին կարող եք կարդալ լրացուցիչ ընթերցանության նյութում:

Հարցեր մտորելու համար

1. Ինչպիսի՞ ազդեցություն կարող է թողնել գլոբալացումն անձնավորության վրա:
2. Պատկերացրե՛ք, որ տիեզերքում կա միայն Հայաստանն ու մեր հասարակությունը: Ինչպիսի՞ն կլինեինք մենք: Լա՞վ կլինեք, թե՞ վատ:
3. Արդյոք գլոբալացումը, վտանգելով գլոբալացվող փոքր երկրներում ապրող մարդկանց ինքնությունը, նաև չի՞ նպաստում, որ վերջիններս ավելի ուշադիր գտնվեն: Ի՞նչ էք կարծում, գլոբալացման ծնած հակազդեցությունը չի՞ նպաստում սեփական ինքնության որոնումներին:
4. Գլոբալացման ինչպիսի՞ բացասական հետևանքներ կնշեք:
5. Ի՞նչ էք կարծում, որո՞նք են գլոբալացման քննարկված հետևանքներից դրական:
6. Վերլուծե՛ք կանանց ու տղամարդկանց ավանդական դերերը հայկական հասարակության մեջ ու գլոբալացման բերած դրական ու բացասական փոփոխություններն այս ոլորտում:

Առաջադրանք

Մտորե՛ք, թե որ երկրում կցանկանայիք ապրել և աշխատել: Գրե՛ք մի փոքր շարադրանք «Երկիրը, որում կցանկանայի ապրել» թեմայով:

ԼՐԱՑՈՒՅԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻԿԻՆԳՐ) ՈՐՊԵՍ ԱՐԳԻ ԳԼՈՔԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Գլոբալացվող արդի հասարակությունում համընդհանուր են դառնում ոչ միայն մարդկության առաջընթացի արդյունքները, այլև մարդկային հանրության առջև ծառայած խնդիրները: Գլոբալացումն իր հետ բերում է նաև կազմակերպված հանցավորության աճ, քանի որ հանցավոր խմբերը երկրների միջև տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ կապերի սերտացումը օգտագործում են իրենց նպատակներին հասնելու համար: Դրան նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Ի թիվս այլ հիմնախնդիրների՝ գլոբալացման դարաշրջանում ահագնացող խնդիր է դառնում մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը), որը անդրազգային կազմակերպված հանցավորություն է: Անդրազգային է կոչվում այն պատճառով, որ այդ հանցավորությունը կազմակերպվում և իրականացվում է մեկից ավելի պետություններում, և դրա հետևանքները չեն մնում միայն որևէ կոնկրետ երկրի սահմաններում, այլ դուրս են գալիս անդրազգային մակարդակ:

Մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) համարվում է 21-րդ դարի ստրկություն՝ հաճախ անվանվելով «սպիտակ ստրկություն»: Այն արդիական խնդիր է նաև Հայաստանի համար, քանի որ, որպես կանոն, մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհեր են դառնում մեր այն հայրենակիցները, ովքեր ցանկանում են խուսափել ցածր կենսապայմաններից ամեն գնով, երբեմն անշրջահայացորեն, այդ նպատակով համաձայնում են լքել մեր հայրենիքը՝ անզուշորեն հավատալով եկամուտներն արագ բարձրացնելու իրենց



Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված հնդիկ տղամարդիկ



տրված հաճախ սին խոստումներին: Արդյունքում նրանցից շատերը հայտնվում են ծանր կացության մեջ. շահագործվում են անխղճորեն ֆիզիկապես և բարոյապես՝ ստիպված են լինում կատարել իրենց ուժերից վեր ծանր աշխատանք, դրա դիմաց չվճարվելով, արժանապատվության նսենացմամբ, ենթարկվելով ծեծի ու սպառնալիքների:



*Որոշ երկրներում մարդկանց
շահագործման (թրաֆիքինգի) դեմ
պայքարում են՝ օգտագործելով
անգամ տրանսպորտային
միջոցները*

Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ գործուն պայքար մղելու նպատակով 2000 թ. Պալերմոյում հռչակվեցին ՄԱԿ-ի Գերագույն հանձնաժողովի «Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան» և «Ցամաքով, օդով կամ ծովով մարդկանց ապօրինի փոխադրումների դեմ արձանագրությունը», որոնց լրացում հանդիսացող «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման (թրաֆիքինգի) կանխարգելման, արգելման և պատժի մասին» արձանագրության մեջ տրվեց մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) երևույթի սահմանումը:

Արձանագրության երրորդ հոդվածում ասվում է.

ա) «մարդկանց շահագործում (թրաֆիքինգ)» հասկացությունը նշանակում է՝ շահագործման նպատակով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պահում կամ ընդունում սպառնալիքի կամ ուժի գործադրմամբ կամ հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառմամբ, առևանգմամբ, խարդախությամբ, խաբեությամբ, պաշտոնական դիրքի կամ խոցելի վիճակի չարաշահմամբ անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով, գումարների կամ այլ շահույթի տրամադրմամբ կամ ձեռք բերմամբ: «Շահագործում» հասկացությունն առնվազն ներառում է մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքները կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը համարժեք գործելակերպը, տաժանակիր աշխատանքները կամ օրգանների հեռացումը.

բ) մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհի համաձայնությունը սույն հոդվածի «ա» ենթակետով սահմանված շահագործման այս կամ այն ձևին չունի որևէ նշանակություն, եթե կիրառվել է «ա» ենթակետով սահմանված եղանակներից որևէ մեկը.

գ) շահագործման նպատակով երեխաներին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ընդունելը համարվում է «մարդկանց շահագործում» նույնիսկ այն դեպքում, երբ դա չի ներառում սույն հոդվածի «ա» կետով սահմանված եղանակներից որևէ մեկը.

դ) «երեխա» համարվում է տասնութ տարին չլրացած ցանկացած անձ,

ե) «զոհ» համարվում է սույն հոդվածում սահմանված մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթակա ցանկացած ֆիզիկական անձ:

Մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) իրականացնողների գործողությունները	Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) իրականացման եղանակները	Մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) իրականացնելու նպատակները
<p>Թրաֆիքինգի դեպքում ստորև նշված գործողությունները կատարվում են շահագործման նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> ◆ հավաքագրելը ◆ տեղափոխելը ◆ փոխանցելը ◆ պահելը ◆ ընդունելը ◆ թաքցնելը ◆ ստանալը 	<ul style="list-style-type: none"> ◆ սպառնալիքի գործադրում ◆ ուժի կիրառում ◆ հարկադրանքի այլ միջոցների կիրառում (օրինակ՝ փաստաթղթերի կեղծում կամ առգրավում) ◆ առևանգում ◆ խարդախություն ◆ խաբեություն ◆ պաշտոնական դիրքի չարաշահում ◆ զոհի վիճակի խոցելիության շահարկում ◆ գումարների տրամադրում ◆ կաշառում 	<ul style="list-style-type: none"> ◆ մարմնավաճառության նպատակներով այլ անձանց շահագործում ◆ սեռական շահագործման այլ ձևեր ◆ հարկադիր աշխատանքներ կամ ծառայություններ ◆ անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի համաձայնության ձեռքբերում ◆ ստրկություն կամ ստրկությանը հավասարագոր վիճակ ◆ տաժանակիր աշխատանքներ ◆ օրգանների կորզում

Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարում է ողջ մարդասեր հասարակությունը: Հայաստանի Հանրապետությունում նույնպես իրականացվում են մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) կանխարգելելու և դրանից տուժածներին պաշտպանելու և աջակցելու ծրագրեր: Այդուհանդերձ, յուրաքանչյուր քաղաքացի պետք է իրազեկված և զգոն լինի մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) խնդիրներում, որպեսզի իր անզույժ վարքով չդառնա զոհ:

Առաջադրանք

1. Ինչ իտք, կարդացել եք Ղազարոս Աղայանի «Անահիտ» հեքիաթը: Մտաբերելով կամ վերընթերցելով այն՝ փորձեք հասկանալ, արդյոք նկարագրված իրադարձություններում կային մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) երևույթի բնորոշ կողմեր: Այս վերը պատկերված աղյուսակից դուրս գրեք մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) այն գործողությունները, եղանակներն ու նպատակները, որոնք առկա էին հեքիաթում կատարվող իրադարձություններում: Հիշեք նաև, թե ինչը հնարավորություն տվեց փրկվելու հեքիաթի հերոսներին:

2. Չրուցեք ծնողների հետ մարդկանց շահագործում (թրաֆիքինգ) երևույթի մասին:

ԳԱՍ 28. ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ



Ընթերցե՛ք տեքստը

Ես Ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սույ,
 Եվ Դուք կըքաղցեք ճոխ սեղանի մոտ,
 Կընկնեք մուրալու հափրած որկորով՝
 Հըրեղեն խոսքի, վեհ խոսքի կարոտ:
 Լրբենի ծաղրով արհամարհեցիք
 Ոգու վառ զեղմունք - միտք ու երազանք,
 Նյութի տաճարում արքած պարեցիք՝
 Մոռացած անմահ անհունի տենչանք:
 Դուք, որ հեզնեցիք ուժը սրեղծագործ՝
 Ձեր նյութի հանդեպ կգա ոգու սույ.
 Եվ մուրացիկի պես փշրանքի համար
 Ծարավ ու նոթի կանցնեք ծովե ծով...

Ավետիք Իսահակյան

Գլոբալացվող հասարակությունում կյանքի արևմտյան ձևերը տարածվում են, համաշխարհայնացվում: Եվ ի հայտ են գալիս որոշ խնդիրներ, որոնք իրենց բնույթով գլոբալացումից չեն բխում. դրանք արևմտյան հասարակություններում առաջացել են նախքան բուն գլոբալացման երևույթները: Բայց քանի որ մեր հասարակություն այդ երևույթները մուտք են գործում գլոբալացման ընթացքում, ուրեմն դրանք ևս կքննվեն արդի հասարակական գործընթացների համատեքստում:

Նման երևույթներից է, այսպես կոչված, զանգվածային հասարակությունը, որն էլ կրում է զանգվածային մշակույթը: *Չանգվածային համարվում է այն հասարակությունը, որը բաղկացած է մարդկային «անդեն զանգվածից»:* Առանձին



Հակոբ Հակոբյան. «Կայարանում»

մարդիկ չունեն սեփական դեմք, չունեն իրենց ներքին աշխատանքի արդյունքում մշակված սրեղծված ներաշխարհ, այդ մարդիկ սպառողներ են, զուր սպառողներ: Նրանք սպասում են, որ մեկն ինչ-որ լավ միտք ասի ու իրենք սովորեն այդ միտքը որոշ տեղերում այն վերարտադրելու համար ճիշտ այնպես, ինչպես սպասում են, որ մեկը զգեստ կարի, որ հագնեն, կամ հեծանիվ ար-

տաղրի, որ վարեն: Նրանք չունեն սեփական մտքեր, նրանց «մտքերը» փոխառված են այս ու այն տեղից, քանի որ նրանք պարզապես սպառողներ են, նույնիսկ մտքերի սպառողներ, նրանք ո՛չ մտածում են, ո՛չ ստեղծում...

*Սրեղծագործականությունից և անհատականությունից զուրկ նման սպառողական հասարակություններն անվանում են **զանգվածային**, քանի որ այնպեղ տեսնում են միայն զանգված, քանակ, բայց ամենևին ոչ որակ:*

20-րդ դարի իսպանացի իմաստասեր **Օրտեգա-ի-Գասետը**, խոսելով զանգվածային հասարակության մասին, նշում է, որ նրանում հերոսները՝ ինքնուրույն արարք կատարելու ունակ մարդիկ, անհետանում են, մնում են միջակությունները: Այդ միջակություններին նա անվանում է «զանգվածի կամ ամբոխի մարդ»: Նման մարդիկ իրենց մեջ ոչ մի հատուկ շնորհ չեն նկատում (կամ չեն կարող նկատել), նրանք ամեն ինչ զգում և ընկալում են այնպես, ինչպես իրենց շրջապատող մյուս «ամբոխի մարդիկ»: Դրանից այդ մարդիկ երբեք չեն տխրում, ընդհակառակը, նրանք երջանիկ են լինել այնպիսին, «ինչպես բոլորն են», չտարբերվել, ինքնուրույն բարոյական ընտրություններ չկատարել: Չանգվածները «քաղբենի և գռեհիկ հոգիներ են», որոնք իրենց քաղբենիությունն ու գռեհկությունը տարածում են իրենց հետ՝ ստիպելով ողջ թուլակամ հասարակությանը հետևելու իրենց:



Խոսե Օրտեգա-ի-Գասետ

♦ *Ըստ չեզ, «զանգվածային» մարդը զգո՞ւմ է մեծն Իսահակյանի նշած «ոգու սուլը»: Ի՞նչ էր կարծում, ինչո՞ւ:*

♦ *Նկատել՞ էք՝ երբ ինչ-որ հեռուստաընկերության ներկայացուցիչների հարցնում են, թե ինչու են վերջինները տարածում միջակ, ինչո՞ւ չէ, զանգվածային մշակույթ, վերջինները պատասխանում են, որ իրենք տալիս են այն, ինչի պահանջարկը կա հասարակությունում:*

Եվ ստացվում է արատավոր շրջան. հեռուստաընկերություններն արդարանում են՝ իբր հասարակությունն է այդպիսին, այդ միջակ մակարդակի մշակույթն ա՛ է ուզում սպառման համար: Իսկ մյուս կողմից էլ հասարակության լայն խավերը, որոնք, ցավոք, իրենց ազատ ժամանակը տնօրինելու իրավունքը տվել են նման հեռուստաընկերություններին, դառնում են միջակ զանգվածային մշակույթի կրողներ, քանի որ չկա այլ առաջարկ, ու նրանք «ստիպված» սպառում են այդ մատուցվողը: Արդյունքում հեռուստատեսությունը ձևավորում է այն հասարակության ճաշակը, որին էլ պետք է մատուցի իր առաջարկած միջակ մշակույթը: Ո՞րն է ելքը: Կա երկու ուղի. կա՛ն մեր հասարակությունը պետք է ինքնակազմակերպվի և ստեղծի տարբեր մակարդակների և տարբեր մշակույթներ կրող ՉԼՄ-ներ, որպեսզի, բացի զանգվածայինից, բավարարություն գտնեն նաև այլ որակի պահանջմունքներ: Կամ առանձին մարդիկ, գիտակցելով զանգվածային մշակույթ կրող հեռուստատեսությունների բերած վնասը, պետք է հրաժարվեն դրան-

ցից՝ հանդես բերելով իրենց ազատ ընտրություն կատարելու հնարավորությունը և լցնելով իրենց ազատ ժամանակն ավելի արժեքավոր զբաղմունքներով:

Հաշվարկե՛ք, թե օրվա ընթացքում քանի ժամ եք հատկացնում հեռու-տարացույց դիտելուն: Մտորե՛ք նաև, թե ինչ են տալիս չեզ չե՛ր դիտած հաղորդումները: Արդյո՞ք դուք չէիք կարող ավելի հետաքրքիր և լեցուն անցկացնել այդ ժամերը: Արդյո՞ք այդ ընթացքում դուք չէիք կարող զբաղվել չե՛ր սիրելի զբաղմունքով, կատարել այն ամենը, ինչի համար, ավաղ, ժամանակ չե՛ք գտնում: Մտածե՛ք չե՛ր հեռուտարացույցից կամ Ինտերնետից օգտվելու սովորույթների մասին քննադատաբար՝ արժևորելով դրանց վրա ծախսվող ժամանակը:



**Ե. Թադևոսյան
Հանճարը և ամբոխը**

Չանգվածային մշակույթին բնորոշ է ճաշակների, հայացքների մնանեցումը, ստանդարտացումը՝ միօրինականացումը, հոգևոր համահարթեցումը և ոչ թե սրեղծագործ, այլ սպառողական մտրեցումն աշխարհի հանդեպ: Ծաշակների ու հայացքների ստանդարտացման մասին խոսում ենք այն դեպքում, երբ մարդիկ, փոխանակ սեփական ճաշակի կամ հայացքների վրա աշխատելու, պատրաստ են անքննադատ կերպով յուրացնելու, պարզապես վերցնելու իրենց թելադրվող հայացքներն ու ճաշակները:

«Հոգևոր համահարթեցում» ասելով նկատի է առնվում ճաշակների և հայացքների միօրինակացման՝ ստանդարտացման արդյունքում ծնված այն գործընթացը, երբ մարդը դադարում է հոգևոր աշխատանք կատարել (ցավոք, հաճախ չի էլ սկսում դա անել, չի էլ կասկածում, որ կաներքին որոնումների, հոգևոր աշխատանքի ոլորտ): Պատկերավոր ասած՝ վերանում են հոգևոր «խորխորատներն ու գագաթները», մնում է միայն «հարթությունը», որտեղ գոյատևելը հեշտ է. չէ՞ որ եթե չկան բարձունքներ կամ անդունդներ, ապա գահավիժելու վտանգ էլ չի լինի... Բայց, ցավոք, չի լինի նաև բարձրության, թռիչքի զգացումը: Ինչ խոսք, հարթավայրերում էլ կան ուշադրության արժանի երևույթներ, սակայն հոգևոր կյանքը խորությունից և թռիչքից զրկելով՝ մարդը վեր է ածվում «փոքր մարդու», հոգեպես փոքրանում, կուչ է գալիս, թեպետ ֆիզիկապես կարող է հսկա լինել կամ էլ հասարակության կյանքում ազդեցիկ մարդ:

Մեր ազգային ինքնության խորհրդանիշներից մեկը Մասիսն է: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է այն խորհրդանշում «որպես անհաս փառքի ճամփա...»:

Չանգվածային մշակույթին արդի մտածողները հակադրում են էլիտար մշակույթը: *Էլիտար (ֆրանսերեն elite – լավագույն, ընտրյալ բառից) մշակույթին բնորոշ է սրեղծագործականությունը, փորձարարության ոգին, կյանքն ու աշխարհն իմաստավորելու ջանքերի առկայությունը:* Օրինակ՝ մեր մեծերը՝ Սար-

յանը, Քոչարը, Մինասը, ստեղծում էին էլիտար մշակույթ: Այդ մշակույթը յուրացնելը, այն հասկանալ արժևորելը ենթադրում է հոգևոր ճիգ, ներքին աշխատանք, որը նման մշակույթը սպառողին նույնպես վեր է բարձրացնում: *Էլիտար մշակույթը ծնվում է ստեղծագործողների ինքնանվիրումով, հոգևոր որոնումների, բացահայտումների, իրականության նորանոր կողմերի վերհանումով: Էլիտար մշակույթի յուրացումը չի կարող լինել սուսկ սպառում, այն համաստեղծագործություն է:*



Հնարավոր չէ Փարաջանովի ֆիլմերը, Կալենցի կրավները հասկանալ առանց համաստեղծագործելու, մտածել-խորհել-սովորելու...

Սակայն մեր արդի զանգվածային մշակույթում «էլիտա» բառը մեկ այլ նրբերանգով էլ է հանդես գալիս: Ներկայումս «էլիտա» ասելով հասկանում են այս կամ այն հանրությունում ընտրյալ մարդկանց, օրինակ՝ խոսում են քաղաքական էլիտայի, տնտեսական էլիտայի, հեռուստատեսային էլիտայի մասին և այլն: *Ավանդական հասարակություններում, որպես կանոն, ընտրախավը՝ էլիտան, կրում էր նաև տվյալ հասարակության էլիտար՝ բարձր, ինչու չէ, ազնվածին մշակույթը:* Բայց արդի հասարակություններում, ցավոք, այստեղ նույնպես առկա է խզում, քանի որ տվյալ հասարակության քաղաքական, տնտեսական կամ այլ բնույթի «ընտրախավը» կարող է չունենալ տվյալ հասարակության հոգևոր հիմքերը կազմող ընտրյալ մշակույթը, լինել ոչ ստեղծագործ, զանգվածային մշակույթի կրող: Նման հասարակություններում էլիտար մշակույթը կարող են կրել առանձին անհատներ, մշակութային գործիչներ, որոնց արածը գնահատելու և դրա արդյունքում հոգևոր վերելք ապրելու համար, ցավոք, տվյալ հասարակությունը հաճախ հասունացած չի լինում:

Մտորենք «Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում...» սևակյան հանրահայր փողի շուրջ: Եթե մենք քիչ ենք, արդյո՞ք կարող ենք մեզ թույլ տալ զանգվածային մշակույթին ենթարկվելու «շռայլությունը», արդյո՞ք դրանով չենք սպառի մեր ոգեղենացման ներքին պոտենցիալը: Ի՞նչ եք կարծում, նման փոխակերպումն իր մեջ պարունակո՞ւմ է վրանգներ: Ինչո՞ւ:

Նախ ժողովրդական մշակույթը այս կամ այն ժողովրդի՝ էթնոսի մշակույթն է, որն առաջացել է տվյալ ժողովրդի շեփոխման ու զարգացման երկարարև պատմության ընթացքում: Ժողովրդական մշակույթը անցել է տվյալ ժողովրդի կողմից ընդունելություն գտնելու դարավոր քննություն. այն ամենը, ինչ օտար ու անընդունելի է եղել տվյալ ժողովրդի հոգեկերտվածքում, դուրս է մղվել ժողովրդական մշակույթից: *Ժողովրդական մշակույթում պահպանվել բյուրեղացել է իրոք արժեքավորը, իրոք մարդկայինն ու ոգեղենը:* Եվ պատահական չէ, որ ժողովրդական մշակույթն առ այսօր մնում է ստեղծագործողների ներշնչանքի աղբյուր:

Կոնիդրասն ասում էր. «Ժողովուրդն է անենամեծ սրեղծագործողը, գնացե՛ք ու սովորե՛ք նրանից»: Ինչպե՞ս կրացարրե՛ք այդ միտքը:

Այնուհետև արդի զանգվածային մշակույթի մասին չենք կարող ասել, որ այն ստեղծում է ժողովուրդը: Ինչո՞ւ: Քանի որ այդ մշակույթի շատ հարացույցներ և օրինակներ ստեղծվում են մեզանից թե աշխարհագրորեն հեռու, թե հոգեկերտվածքով այլ մշակութային միջավայրերում, ապա բերվում ու մատուցվում են մեզ՝ որպես մեր միջավայրի ծնունդ: Իսկ ժողովուրդը հանդես է գալիս անքննադատ սպառողի դերում՝ դրա հետևանքով վերածվելով անդեմ «զանգվածի»:

Ի՞նչ եք կարծում, ինչի՞՞ մասին է խոսում այն, որ ոմանք զարմանալիորեն արագ ընդունեցին և սկսեցին նշել Սբ. Վալենտինի օրը, մոռանալով Սուրբ Սարգսի տոնի մասին...



**Հ. Այվազովսկի.
Երդում Վարդան Զորավար**

Ժողովրդավարությունը ենթադրում է, որ ժողովուրդն է վարում հասարակությունը, որ ժողովուրդն է ինքն իր իշխանավորը: Բայց իրոք ինքնիշխան լինելու համար պետք է, որ ժողովրդի՝ հասարակության մաս կազմող անհատները սովորեն մտորել, հանդես բերել ստեղծագործ և քննադատական մտածողություն և ընտրել պահպանել բարձրարժեքն ու անուշադրության մատնել աղաղակող միջակությունը: Գուցե իրոք ճշմարտություն կա այն մտքում, որ հասարակությունն արժանի է իրեն մատուցված մշակույթին: Եթե դուք աշխատեք ձեզ վրա ու այլևս չբավարարվեք ձեզ մատուցվող զանգվածային մշակույթով, *գուցե գրկեք ընդորյալ մշակույթի այն մեծ ու խորը շերտերը, որոնցով, բարեբախտաբար, հայ հասարակությունը հարուստ է, բայց որոնք գոյություն ունեն միայն նրանց համար, ովքեր տեսնում են այն:*

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է զանգվածային հասարակությունը: Ինչպիսի՞ն է այդ հասարակության ատոմը՝ զանգվածի կամ ամբոխի մարդը:
2. Ի՞նչ է զանգվածային մշակույթը: Ի՞նչ եք կարծում, այն պարտադրվո՞ւմ է, թե՞ պահանջվում:
3. Ի՞նչ է նշանակում «էլիտար մշակույթ» արտահայտությունը: Արդի հայ հասարակությունն ո՞ւնի արդյոք էլիտա: Ինչպիսի՞ն է այն:
4. Ի՞նչ է ժողովրդական մշակույթը, կարելի՞ է այն արդյոք համարել զանգվածային:
5. Մեկնաբանե՛ք Հ. Սահյանի հետևյալ տողերը.
*«Երգիս տունը տասրիս տան պես
Հայկական է ու հին,*

*Ու կապված է սիրտը շան պես
Նրա ամեն քարին...»:*

6. Փորձե՞ք մեկնաբանել դասի բնաբանը:
7. Ի՞նչ եք կարծում, ինչպիսի՞ն է մշակութային իրադրությունն այսօր Հայաստանում:

Առաջադրանք

Ջրուցելով մեծերի հետ, կարդալով բանահյուսությանը նվիրված գրքեր, հանրագիտարաններ, այլ աղբյուրներ՝ սովորե՞ք որևէ ավանդական հայկական խաղ: Այդ խաղի մասին փոքրիկ ակնարկ գրե՞ք, որն այնուհետև կգերեղեք դասարանական ցուցավահանակում:

ԴԱՍ 29. ԻՆՉ Է ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Համադասարանական աշխատանք

Տանը ձեր պատրաստած ակնարկները փակցրե՞ք դասարանի պատերին: Ապա շրջելով դասարանում՝ ծանոթացե՞ք պատերին փակցված մյուս ակնարկներին, որ պատրաստել են ձեր համադասարանցիները: Այնուհետև քննարկե՞ք ստորև առաջարկվող հարցերը:

Հարցեր քննարկման համար

1. Կայի՞ն խաղեր, որոնց մասին դուք չգիտեիք և իմացաք ձեր դասընկերների կատարած աշխատանքի շնորհիվ:
2. Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է տալ ձեզ յուրաքանչյուրիդ կատարած առանձին դրոնումների արդյունքների ի մի բերելը:
3. Վստահո՞ւմ եք միմյանց բերած տեղեկատվությանը: Ինչո՞ւ: Ի՞նչ պետք է անել վստահությունը մեծացնելու համար:
4. Պե՞տք է արդյոք ունենալ այդքան շատ նյութ հին հայկական խաղերի մասին:



Ընթերցե՛ք տեքստը

Ձեր քննարկումների արդյունքում երևի թե հանգեցիք տեղեկատվության խնդրին, քանի որ ձեզանից ամեն մեկը (եթե կատարել էր առաջադրանքը) իր մասնակցությունն էր բերել հասարակության կյանքի ներկայումս ամենաազդե-

ցիկ կողմերից մեկին՝ տեղեկատվությանը: Դուք հավաքել էիք տեղեկություններ, որոնցով հարստացնում էիք միմյանց իրար հետ քննարկելիս...

Տեղեկատվական լինելը երբեմն այնքան է կարևորվում արդի հասարակության համար, որ այն հաճախ անվանում են **տեղեկատվական հասարակություն**, այսինքն՝ մի հասարակություն, որի կենսագործունեությունը մեծամասամբ կախված է **տեղեկությանից՝ ինֆորմացիայից**: Տեղեկատվական հասարակությունը ծնունդ է առնում ՁԼՄ-ների՝ զանգվածային լրատվամիջոցների, այդ թվում՝ ռադիոյի, հեռուստատեսության, համակարգիչների, Ինտերնետի և բջջային հեռախոսակապի զարգացմանը զուգընթաց: *Տեղեկույթը՝ ինֆորմացիան, ժամանակակից աշխարհում կարևոր արժեք է, թեպետ այն եղել է մարդկության պատմության վաղ ժամանակներից*: Այն առաջացել է լեզվի հետ միաժամանակ, ապա զարգացել է գրի, տպագրության գյուտերի, ռադիոյի, հեռախոսի, հեռուստատեսության հայտնագործությունների շնորհիվ: Իր ներկա զարգացմանն է հասել, ինչպես արդեն նշվեց, համակարգիչների, բջջային հեռախոսների և Ինտերնետի ստեղծումից հետո: Ներկայումս տեղեկույթը ներթափանցել է մարդու կենսագործունեության բոլոր ոլորտները. կենցաղ, արտադրություն, քաղաքականություն, սպասարկում, կրթություն, գիտություն և այլն:

Անդրադառնալով մարդկային հասարակության զարգացմանը՝ կարելի է նշել, որ անցյալում հասարակության կյանքում կարևոր դեր էին խաղում *նյութը* և *էներգիան*:

Նյութի տիրապետության դարաշրջանում կարևոր էր նյութին տիրանալը կամ այն հպատակեցնելը: Մի պետությունը պետք է զավթեր մյուս պետությունը, որպեսզի տիրանար այդ պետության նյութական հարստություններին, այդ թվում՝ մարդուն՝ որպես ֆիզիկական աշխատուժի: Այնուհետև նոր դարաշրջանում բնագիտական մեծ հայտնագործություններին զուգընթաց սկսում է ձևավորվել էներգիայի հասարակությունը: Այսպիսի հասարակությունում որպես հարստության աղբյուր դիտարկվում է էներգիան, ու կարևորվում է էներգիայի աղբյուրներին տիրապետելը: Դարձյալ լինում են նվաճողական պատերազմներ, սակայն դրանց գլխավոր նպատակը էներգակիրներին տիրանալն է:



Թեպետև ոչ նյութի, ոչ էլ էներգիայի տիրապետությունը չի անցել, բայց հասարակական հարաբերությունների ոլորտում գնալով էլ ավելի կարևոր է դառնում երրորդ գործոնը՝ ինֆորմացիան, տեղեկատվությունը: Արդի աշխարհում օրըստօրե ավելի հասկանալի է դառնում, որ եթե ունես ինֆորմացիա, ուրեմն կարող ես տիրել: Եվ հիմա պայքարը նյութական նվաճումներին զուգահեռ անցել է նաև ինֆորմացիոն՝ տեղեկատվական նվաճումների ոլորտ:

Այժմ մարդիկ նվաճվում են ոչ միայն պատերազմների ու ֆիզիկապես՝ գերեվարվելու արդյունքում, այլև հոգեպես՝ տեսանեյիորեն մնալով ազատ և անկախ: Պարզապես սկսելով մտածել այնպես, ինչպես հարկավոր է տեղեկատվությանը տիրապետողներին:

Ելնելով այդ հանգամանքից՝ որոշ մտածողներ տեղեկատվական հասարակությունը համարում են հակամարդկային, քանի որ այդ հասարակությունում առանձին մարդը դառնում է միջոց, խաղալիք տեղեկատվությանը տիրապետող գերհսկա հասարակական կառույցների ձեռքում: Սակայն կա մեկ այլ մոտեցում, ըստ որի ամեն ինչ այնքան էլ վատ չէ: Ըստ այս տեսակետի, ընդհակառակը, տեղեկատվական հասարակությունում ամեն մի մարդ կարող է հնարավորություն ստանալ իր խոսքը լսելի դարձնել հնարավորինս շատ մարդկանց: Մարդը կարող է անկախանալ, քանի որ հնարավորություն ունի, օրինակ, Ինտերնետում բացել իր էջը, որում տեղադրված ինֆորմացիան ազատ կլինի ամեն մի գրաքննությունից¹:

Խորհեք՝ արդյո՞ք շար են այն մարդիկ, ովքեր կարող են արժեքավոր, ուսանելի և չվնասող նյութեր տեղադրել Ինտերնետում:

Հասարակության զարգացման մասին մեկ այլ տեսակետի համաձայն՝ մարդկությունն անցել է երեք փուլ. գյուղատնտեսական, արդյունաբերական և ինֆորմացիոն: Փուլերի անվանումներից պարզ է, որ գյուղատնտեսական փուլում հասարակության հիմնական եկամտի աղբյուրը եղել է հողը՝ գյուղատնտեսության միջոցով: Մարդիկ ապրել են հողագործության և անասնապահության բերած օգուտների շնորհիվ: Այդ փուլը տևել է քարի դարից մինչև նոր դարաշրջան: Չարգացած գյուղատնտեսությունը համարվել է սովյալ պետության բարգավաճման երաշխիք: 16-17-րդ դարերում ծնունդ է առել նոր՝ արդյունաբերական փուլը:

Գիտե՞ք արդյոք, թե ինչ է արդյունաբերական հեղաշրջումը: Եթե ոչ, տեղեկացե՛ք այդ մասին պատմության շեռնարկներից, հանրագիտարաններից:

Արդյունաբերական փուլում հասարակական բարիքների մեծ մասն արտադրվել է արդյունաբերության ոլորտում՝ մանուֆակտուրաներում, գործարաններում և այլն: Կոնկրետ պետության բարգավաճման երաշխիքն այս փուլում համարվում է զարգացած արդյունաբերությունը: Զննարկվող տեսակետի համաձայն՝ նախորդ դարավերջին վրա է հասնում ինֆորմացիոն հասարակության դարաշրջանը, երբ բարիքների արտադրության մեջ աստիճանաբար ավելի ու ավելի մեծ բաժին է ունենում ինֆորմացիոն արտադրությունը: Այժմ պետությունների տնտե-

¹ Գրաքննությունը (ցենզորան) մարդկանց գրածները վերստուգելու գործընթաց է, որի ժամանակ հեղինակին կարող են ստիպել գրածից հանել հատվածներ, կարող են իմաստափոխել այլ հատվածներ և այլն: Գրաքննության ժամանակ որոշ գրվածքներ կարող են լրիվ մերժվել, արգելվել:



սակյան բարգավաճման համար կարևորվում է նաև տեղեկատվության աղբյուրներին տիրելու, տեղեկույթ ունենալու պահանջը:

Տեղեկույթի վրա հիմնված տեղեկատվական հասարակությունը զարգացման նոր հորիզոններ է բացում մարդու առջև, քանի որ, ի տարբերություն նյութական, էներգետիկ պաշարների, ինֆորմացիան անսպառ է, և մարդն այն վերամշակելու և օգտագործելու անսահման հնարավորություններ ունի: Ներկայումս հնարավոր է թվայնացնել մարդկության ստեղծած դարավոր հոգևոր ժառանգությունը և տեղադրել այն էլեկտրոնային, այսպես կոչված, վիրտուալ գրադարաններում:

Էլեկտրոնային մշակույթը շատ ճկուն է, քանի որ ավելի արագ կարող է փոխվել, քան ձեռագիր կամ տպագիր մշակույթները:

Համեմարե՛ք, թե որքան ժամանակ էր պետք անցյալում մեկ գիրք արտագրելու, այնուհետև տպագրելու, իսկ ներկայումս Ինտերնետում տեղադրելու համար:

Սակյան ժամանակի խնայողության և ճկունության կողքին կան նաև որոշ բացասական կողմեր, քանի որ Ինտերնետում կարող են տեղադրվել ոչ միայն հուսալի, արժանահավատ, այլև հաճախ կասկածելի, չստուգված տեղեկություններ, վերլուծություններ և այլն: Դրանք կարող են մարդուն **սպապեղեկատվություն՝ դեզինֆորմացիա** հաղորդել: Նման պարագայում բարդանում է Ինտերնետից օգտվողների խնդիրը, քանի որ վերջիններս պետք է ձեռք բերեն արժանահավատ անարժանահավատից, կարևորն անկարևորից զատելու հմտություններ: Տեղեկույթի ահռելի չափերն ու առկայությունը մեր արդի կյանքում ծնում են, այսպես կոչված, **«խճանկարային մարդուն»**՝ այն մարդուն, որի հոգևոր աշխարհն ասես տարբեր հյուսվածքներ, գույներ, խտություն ունեցող հատվածների մեխանիկական հանրագումար լինի:

Դուք շատ լավ գիտեք մանկական «խճանկար» խաղը, ծանոթ եք «կոլլաժ» հասկացությանը որպես արվեստի գործի:

Ահա, ուրեմն, «խճանկարային մարդն» ի վիճակի չի լինում ձևավորել աշխարհի հանդեպ միասնական, մտածված ապրված մոտեցում, այլ բավարարվում է ինֆորմացիայի տարատեսակ պատառիկներով, որ նրան են հասնում «դեսից ու դենից»: Նա մեխանիկորեն իրար է կպցնում այդ պատառիկները, որոնց արանքում հաճախ կարող են մեծ բացեր մնալ: *Արդյունքում նման մարդը ստանում է «խճանկար» կամ «կոլլաժ»՝ կորուրված ու հատվածային աշխարհընկալում, որը նրան դարձնում է անկայուն արտաքին ազդեցությունների հանդեպ:* Նման մարդիկ շատ շուտ կարող են հավատալ ակնհայտ ինֆորմացիոն «փուչիկներին», տագնապել, խառնաշփոթի մեջ ընկնել...

Ի՞նչ էք կարծում, ի՞նչ կապ կարող է լինել «խճանկարային մարդու» և «գանգվածային մարդու» միջև: Ըսկ ի՞նչը, ըստ շեզ, կօգնի իրավիճակի շրկմանը:



Մերգեյ Փարաջանով. Կոլլաժ

Հեղինակը օգտագործել է Ջոկոնդայի կերպարը ցույց տալու համար Վերածննդի մարդու անբողջականության և արդի «խճանկարային մարդու» մասնավորապես հակասությունը

Տեղեկատվական հասարակությունում մեծանում է մարդկանց հաղորդակցվելու հնարավորությունը: Բայց այս գործընթացը նույնպես երկակի է: Մի կողմից երկրագնդի տարբեր ծայրերում ապրող մարդիկ կարող են շփվել միմյանց հետ Ինտերնետի և բջջային հեռախոսի միջոցով, մյուս կողմից համակարգչի առաջ շատ ժամանակ անցկացնող մարդիկ սակավ են հանդես գալիս կենդանի, անմիջական շփումներում: Գնալով ավելի ու ավելի է պակասում անմիջական մարդկային հաղորդակցությունը, որին բնորոշ է հուզական ավելի մեծ ուժ, և որը հնարավորություն է տալիս զարգացնել սոցիալական հաղորդակցման հմտություններ: Այդուհանդերձ, այս գործընթացներում կա մի դրական կողմ ևս: Դա այն է, որ ֆիզիկական շարժման սահմանափակություններ ունեցող մարդիկ կարող են առանց տանից դուրս գալու շփվել ողջ մարդկության հետ: Սա հնարավորություն է տալիս հատուկ կարիքներ ունեցող մարդկանց իրենց ավելի լիարժեք զգալու, ինքնաիրականանալու:

♦ *Դուք, ինչ խոսք, հիշում եք, թե ովքեր են համարվում հատուկ կարիքներով մարդիկ:*

♦ *Ի՞նչ էք կարծում, ի՞նչ դրական ու բացասական կողմեր ունեն ինտերնետային սոցիալական ցանցերը: Դրանք կարո՞ղ են վնասել մարդուն, թե՞ ոչ:*

Տեղեկատվական հասարակության վտանգներից է նորօրյա հանցագործությունների ի հայտ գալը: Նման հանցագործություններից մեկը, օրինակ՝ «հաքերությունն» է (անգլերեն hacker – կտրող բառից): «Հաքերները» առանց թույլտվության կարող են մտնել ուրիշներին պատկանող համակարգչային համակարգ և ստանալ ինֆորմացիա կամ նենգավիդիսել այն՝ աղավաղել: Նման հանցագործություններից է բանկային հաշիվների կեղծումն Ինտերնետի միջոցով, մեծ գումարների շորթումը, ապահովագրական ընկերություններին խաբելն ու դրամ կորզելը և այլն: Արդի հասարակությունում խնդիր է դառնում տեղեկատվական անվտանգության ապահովումը և մարդկանց մասնավոր կյանքին վերաբերվող տեղեկության պաշտպանությունը:

Արևմուտքում հանրահայտ մարդկանց կյանքն անրանելի են դարձնում, այսպես կոչված, «պապարացիները»՝ կեղծ լրագրողները, որոնք դարսևա-

կալում են այդ մարդկանց ամենուր՝ փորձելով լուսա- կամ փեսանկարահա- նել նրանց ու սրացված փեղեկոյթը թանկ վանառելով եկամուտ սրանալ:

Այնուամենայնիվ, իր ողջ մտահոգիչ կողմերով հանդերձ, ինֆորմացիոն հասարակությունը ներկա կյանքի իրականությունն է, որը մեր առջև պահանջ է դնում զարգացնել կրթական համակարգն ու հետ չմնալ տեղեկոյթի ստացման, պահպանման ու օգտագործման արդի մակարդակին տիրապետելուց:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է տեղեկատվական հասարակությունը, ինչպիսի՞ օ առանձնահատկու- թյուններ այն ունի:
2. Ի՞նչ էք կարծում, ի՞նչ կարելի է հասկանալ «տեղեկատվական պատերազմ» ասելով:
3. Ի՞նչ էք կարծում, ի՞նչ դեր են խաղում ՁԼՄ-ները անհատների գիտակցու- թյունն ու հոգևոր աշխարհը ձևավորելու գործընթացում:
4. Տեղեկատվական հասարակության ի՞նչ բացասական երևույթների մասին տե- ղեկացաք դասից:
5. Ի՞նչ դրական տեղաշարժեր ու հնարավորություններ է բերում տեղեկատվա- կան հասարակությունը:
6. Ի՞նչ էք կարծում, ինչպիսի՞ն կլինի հասարակությունը 20 տարի հետո: Ի՞նչ փոփոխություններ կարող են կատարվել: Վերլուծեք դրանց դրական ու բացա- սական հետևանքները:

Առաջադրանք

1. Մեկ շաբաթվա ընթացքում հետևե՛ք փեղեկավարվության տարբեր աղբյուր- ներով տրվող ինֆորմացիային ու փորձե՛ք քննադատաբար վերլուծել, թե որքա- նով դրանցից յուրաքանչյուրը կարող է լինել արժանահավասար կամ սակավ ար- ժանահավասար:

2. Պատկերացրե՛ք, որ դուք լրագրող եք և պետք է հաղորդեք ինչ-որ կարևոր իրադարձության մասին: Մտածե՛ք, թե որ իրադարձությունն էք համարելու կարևոր և հաղորդվելուն արժանի: Այս կազմե՛ք այդ հաղորդագրությունը և պատրաստ եղե՛ք հաջորդ դասին անհրաժեշտության դեպքում այն հնչեցնելու:

ԳԱՍ 30. ԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Համադասարանական աշխատանք

Դասարանում կամավորները կտան երեք-չորս հաղորդագրություն: Ունկնդրե՞ք դրանք և քննարկե՞ք, թե այդ հաղորդագրությունների տիրապետող թեման որն էր. քաղաքականություն, տնտեսություն, արտակարգ պատահարներ, մասնավոր կյանք, մշակութային իրադարձություն, այլ: Ի՞նչ եք կարծում, մեր իրական ՁԼՄ-ները արդյո՞ք անդրադառնում են հասարակության համար ամենաարժեքավոր իրողություններին, թե՞ ոչ: Ինչո՞ւ:



Ընթերցե՛ք տեքստը

Մարդն ապրում է մի իրականության մեջ, որի բնական բաղադրիչը գնալով ավելի ու ավելի շատ է իր տեղը գիջում մշակութային բաղադրիչին: Գնալով ավելի են պակասում չմշակված հողատարածությունները, կուսական անտառները, մարդու միջամտության չենթարկված օվկիանոսային շերտերը:

Դուք, ինչ խոսք, հիշում եք, թե ինչ է «երկրորդ բնությունը»...

Մարդուն ամենուր շրջապատում է դարերի ընթացքում մարդկային հասարակության ստեղծած մշակութային աշխարհը, հագուստ, իրեր, շինություններ, ճանապարհներ և այլն, և այլն: Մարդուն պարուրող մշակույթը, ինչպես գիտեք, բաժանում են երկու բաղադրիչի. նյութական և հոգևոր մշակույթի: **Նյութական համարվում են մշակույթի այն տարրերը, որոն-**



Ապագա տեխնոքաղաքի մակեր

ցում էական դերը խաղում է նյութական կողմը, կամ որոնք ստեղծվել են նյութական պահանջումը բավարարելու համար: Վերոնշյալ տարրերը՝ հագուստ, ճանապարհ, շինություն և այլն, պատկանում են նյութական մշակույթին: Հոգևոր մշակույթի տարրերում էական դեր ունի հոգևոր նախասկիզբը կամ դրանք ստեղծված են հոգևոր պահանջումներին բավարարման համար: Հոգևոր մշակույթի տարրեր են գիտությունը, արվեստը, կրոնը, բարոյականությունը, քաղաքականությունը, փիլիսոփայությունը և այլն: Հոգևոր մշակույթը ստեղծվում է մարդկանց հոգևոր աշխատանքի արդյունքում ու նյութականանալով՝ մնում պահպանվում հաջորդ սերունդների համար: «Նյութականանալ» նշանակում է ձեռք բերել նյութական կողմ: Ինչ-որ մեկը կարող է իր մտքում առաջացած գաղա-



Հ Ավագովակի Հայ ժողովրդի
մկրտությունը

Մտածե՛ք, թե որքան կարևոր է մեր նախնիների սրբեղծած նյութական և հոգևոր ժառանգության պահպանումը, այն մշակութային միջավայրի պահպանումը, որը ծնունդ է տալիս հայկականությանը: Նկատե՛լ եք, որ կան պեպոստական կողմից պահպանվող շինություններ: Տեղյա՞լ եք, թե որոնք են հայկական մշակույթի այն գանձերը, որոնց պահպանությամբ շահագրգռված է նաև համաշխարհային հանրությունը: Այցելե՛՛ւմ եք նման վայրեր:

Այլ մշակույթներում ձևավորվող մարդիկ էլ դառնում են այդ մշակույթների կրողները: Արդի աշխարհում արդեն իրողություն են նաև բազմամշակութային միջավայրերը, որտեղ կողք կողքի գոյակցում են զանազան մշակույթներ:

Մարդ էակն իր մանկության վաղ փուլերից ձևավորվելով, աստիճանաբար **մշակութայնանում է, այսինքն՝ չեռք է բերում մշակութային այն մտազործելակերպը, որ բնորոշ է իրեն ծնող մշակույթին:**

Բայց «մարդը մշակութային էակ է» արտահայտությունն ունի մեկ այլ իմաստ ևս: Այն նշանակում է, որ *մարդը մշակույթի միջոցով ինքն իրեն ձևավորող-գարդարող էակ է:* Չարգացման սկզբնական փուլում ենթարկվելով մշակութայնացման ու հանդես գալով որպես իրեն տրվող մշակութային ձևերի ու կաղապարների պասիվ յուրացնող, այնուհետև մարդը կարող է ակտիվ դիրքորոշում ունենալ իրեն տրված ողջ մշակութային աշխարհի հանդեպ ու սկսել ինքն իր նպատակաուղղված ձևավորումը՝ մշակութային աշխարհի ընձեռած բազմաթիվ հնարավորություններից ընտրելով իր համար ամենարժեքունեղի ու ցանկալին:

Եթե վաղ մանկությունից առ այսօր դուք հիմնականում եղել եք պասիվ՝ կրավորական դերում, ու ստացել դրսից այն մշակույթը, որի կրողն եք, գուցե թե ար-

վարը նյութականացնել՝ այն վերածելով, օրինակ, ինքնաթիռի գծագրի, երաժշտության նոտայագրման, ճարտարապետական կառույցի մոդելի, գրքի...

Բազմիցս նշվել է, որ մարդը մշակութային էակ է: Ի՞նչ է սա նշանակում: *Սա նշանակում է, նախ, որ մարդը մշակույթ սրբեղծող էակ է, բայց մյուս կողմից էլ սա նշանակում է, որ մարդը մշակույթի արդյունքում սրբեղծվող էակ է:* Արդի աշխարհում, ուսումնասիրելով տարբեր մշակույթներ ու դրանց պատկանող մարդկանց, գիտնականները եկել են այն եզրակացության, որ մարդը ձևավորվում դառնում է այնպիսին, ինչպիսին նրան շրջապատող կոնկրետ մշակութային աշխարհն է: *Հայկական մշակույթ կրող մարդն աշխարհին նայում է «հայի աչքերով», «քայլում է հայերեն» և մտածում է, որ անզամ «ջրերն են հոսում հայերեն»...*


Մտածե՛ք, թե որքան կարևոր է մեր նախնիների սրբեղծած նյութական և հոգևոր ժառանգության պահպանումը, այն մշակութային միջավայրի պահպանումը, որը ծնունդ է տալիս հայկականությանը: Նկատե՛լ եք, որ կան պեպոստական կողմից պահպանվող շինություններ: Տեղյա՞լ եք, թե որոնք են հայկական մշակույթի այն գանձերը, որոնց պահպանությամբ շահագրգռված է նաև համաշխարհային հանրությունը: Այցելե՛՛ւմ եք նման վայրեր:

դեն ժամանակն է մտորելու ձեր ակտիվության մասին, ձեր մշակութային ինքնա-
ընտրության մասին: Դուք գիտեք, որ ձեզ շրջապատող մշակութային աշխարհում
առկա են բազմաթիվ արժեքներ, ու կարող եք գիտակցաբար ընտրություն կատա-
րել՝ նպաստելով ձեր, որպես մարդու, հետագա կատարելագործմանը:

*Օրինակ՝ դուք կարող եք ունկնդրել դասական երաժշտություն, սովորել-
հասկանալ արվեստի գործերի լեզուն, ընկալել դասական ու արդի գեղա-
նկարչական, ճարտարապետական և այլ գործերը: Դուք կարող եք համաշ-
խարհային գրականության զանազանից (գիրակ-խորհրդարարի օգնու-
թյամբ) ընկրել լավագույն գործերը, կարդալ դրանք ու խորհրդածել դրան-
ցում արժարժված հիմնախնդիրների շուրջ: Նման ակտիվության շնորհիվ
դուք կիրականացնեք ձեր հոգու խնամքը:*

Դավիթ Անհաղթը, ով եղել է հույն մեծ իմաստասեր
Պլատոնի հետևորդը, ոչ սակավ խորհրդածելով եզրակաց-
րել է, որ հունական **Պայդեյայի** կրթական համակարգի
հիմնաքար հանդիսացող **հոգու խնամքի** գաղափարը
կարևոր է հայ մարդու ինքնաձևավորման համար:

Ըստ այդ գաղափարի, *ինչպես մարմինն ունի ամենօր-
յա խնամքի կարիք, այնպես էլ հոգին:* Հոգու խնամքն ու
ինքնամաքումը ոչ պակաս կարևոր են, քանի որ հոգու
տկարացումը կարող է իր հերթին առաջ բերել մարմնական
հիվանդություններ: Ըստ Դավիթ Անհաղթի՝ կյանքը մար-
դուն տրված ինքնախնամքի, ինքնակատարելագործման
հնարավորությունն է, որի շնորհիվ մարդն իր մեջ կարող է
արմատավորել առաքինությունն ու բարիքը: *Հոգին խնամող մարդը հասունա-
նում է, քանի որ կատարում է հոգևոր, ներքին աշխատանք, մտորում-
արժևորում, որի արդյունքում կարողանում է ընկրել իր կյանքին իմաստ հաղոր-
դող նպատակներն ու սկզբունքները:*



Պլատոն

«Պայդեյա» հասկացությունը նշանակում է կրթություն, ուսուցում, կրթվածու-
թյուն, մշակույթ՝ հիմքում ունենալով հունարեն «պայս»՝ «երեխա» բառը: *Պայդե-
յայի կրթական համակարգում ամենակարևորը փիլիսոփայությամբ դասարիա-
րակվելու գաղափարն էր, ըստ որի՝ թեև գիտակությունը կարևոր էր, սակայն
ավելի կարևոր էր իմաստությունը. փիլիսոփայությամբ կրթված անձնավորու-
թյունը տարբերվում էր մյուսներից ոչ միայն գիտելիքների հանրագումարով,
այլև իր կենսաշեղծ, ապրելակերպով:* Պլատոնի կողմից մշակված կրթական հա-
մակարգի գաղափարը հանգեցնում է իսկական մշակույթի՝ Պայդեյայի բառի
բուն իմաստով, այսինքն՝ անձնավորության ներդաշնակ զարգացման, որի գա-
գաթնակետը **իմաստության՝ որպես ապրելու արվեստի ձեռքբերումն է:** Հետևելով
Պլատոնին՝ մեր հայրենակից Դավիթ Անհաղթը փիլիսոփայության միջոցով կր-
թում էր անկախ մտածողության ձգտող անհատներ՝ դնելով մարդու կողմից սե-
փական հոգու խնամքի անհրաժեշտության պահանջը և ընկալելով փիլիսոփա-
յությունը որպես հոգու խնամք:

Ժողովրդավարության զարգացմանը զուգընթաց արդի արևմտյան աշխարհը նույնպես արժևորեց Պալդեյայի կրթական համակարգի նշանակությունը, քանի որ վերջինս ինքնախնամքի հնարավորություն է տալիս մարդուն: *Յուրաքանչյուր ոք հասկանում է, որ ինքն է պատասխանատու իր ապրելիք կյանքի համար, քանի որ եթե կրկնորի ինքնախնամքի ու ինքնասիրականացման ուղին, կկարողանա ձևավորել հետաքրքիր և ապրելու արժանի կյանք:* Պալդեյայի ժողովրդավարական ընկալման հիմքում նաև *մարդու ներքին մշակույթի խնդիրն է:* Մշակույթը մարդուն տրվում է շրջակա միջավայրի, կարողացած գրքերի, տեսած քաղաքների և այլ արտաքին հանգամանքների շնորհիվ:



Ա. Կանովա. Երեք գրացիա

Իդեալում մարմնի կատարելությունը պետք է ներդաշնակվի հոգու կատարելության հետ

Սակայն այդ ամենից մեզ մնում է այն, ինչ մենք մեր ներաշխարհում ընդունել և յուրացրել ենք, ինչի շուրջ խորհրդածել ենք ու որոշակիացրել մեր սեփական մտրեցումը:

Պալդեյայի տրամաբանությունը հետևյալն է. **մենք իրավունք չունենք մեր հոգու զարգացումը քողնել ինքնահոսի,** այլ պետք է նպատակամղված խնամենք այն, ինչպես խնամում ենք մեր մարմինը, հոգում մեր առօրյա կարիքները: Քանի որ մարդկությունը ստեղծել է բարդ կառույց՝ ժամանակակից հասարակությունը, այսօր որևէ մեկը չի կարող գոյատևել այդ հասարակության մեջ առանց ինքն իր վրա նպատակասլաց աշխատանքի: Իսկ այդ աշխատանքի կարևորագույն տարրը կրթությունն ու ինքնակրթությունն են: Ընդ որում՝ կրթությունը պետք է ընկալել ոչ թե որպես պարտադրանք, այլ որպես մարդու հնարավորությունները մեծացնող գործոն, քանի որ մյուս բոլոր հանգամանքների նույնության պարագայում *որքան կրթված է մարդ, այնքան ավելի մեծ հնարավորություններ ունի դիմակայել արտաքին բացասական ազդակներին:*

Այս դասընթացն ինչ-որ իմաստով ներածական է, քանի որ հնարավորություն է տալիս առաջին անգամ առնչվելու փիլիսոփայության՝ որպես ապրելու արվեստի անձայրածիր աշխարհին: Դուք հետագայում, հուսով ենք, կշարունակեք հաղորդակցվել իմաստասիրական մտքի հարուստ գանձարանի հետ, քանի որ կյանքի ամեն մի նոր փուլ չեք առջև կդնի աշխարհայացքային բնույթի նորանոր խնդիրներ, որոնք լուծելու համար կարիք կլինի դիմելու մարդկության մեծագույն խորհրդատուների՝ իմաստասերների օգնությանը: Իսկ առաջժմ երևի բավարարվենք այն բանի գիտակցումով, որ մարդը պատիվ չի ընդունում իրեն փրված հանգամանքները, այլ դրանց իմաստավորման ու արժևորման միջոցով ինքն է իր կյանքին հարողում անկրկնելիություն և հմայք:

Ամփոփելով ևս մեկ անգամ նշենք, որ մշակույթը մի գոյացություն է, որը ծնվում է մարդու ստեղծագործության արդյունքում՝ միաժամանակ ծնելով մարդուն: *Մշակույթը մարդկությանը պարուրող հոգևոր և նյութական միջավայրն է, դարաշրջանի, ազգի ու անհատի ոգին, որը հնարավորություն է տալիս մարդուն հանդես գալու որպես անընդհատ սրտեղծվող և ինքնասրտեղծվող էակ՝ մշակութայնացման անվերջանալի գործընթաց:*

Հարցեր մտորելու համար

1. Արդյո՞ք ճշմարիտ է այն միտքը, որ մարդուն ամենուր շրջապատում է մշակութային աշխարհը:
2. Ի՞նչ է նյութական մշակույթը: Նյութական մշակույթի ինչպիսի՞ կարևոր արժեքներ են ստեղծվել մարդկության պատմության ընթացքում:
3. Ի՞նչ է հոգևոր մշակույթը: Հոգևոր մշակույթի տարրերից ո՞րն է ձեզ համար ամենագերադասելին:
4. Ի՞նչ է նշանակում «մարդը մշակութային էակ է» արտահայտությունը:
5. Ի՞նչ է հոգու խնամքը: Իսկ ի՞նչ է հոգու ինքնախնամքը:
6. Ո՞վ է Գավիթ Անհաղթը: Ի՞նչ գիտեք նրա մասին:
7. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ ստեղծումից ավելի քան երկու հազար տարի հետո արդի աշխարհում դարձյալ կարևորվում են Պայդեյայի կրթական համակարգի սկզբունքները:
8. Անձամբ ձեզ համար ի՞նչ է նշանակում հոգու խնամքը, ի՞նչ եք պատրաստվում անել ձեր հոգին խնամելու համար:

ԳԱՍ 31. ՀԱՐԱՓՈՓՈՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ



Ընթերցե՛ք տեքստը

Եկեք շիավարանք նրանց, ովքեր ասում են, որ միայն ազատ մարդիկ պետք է լինեն կրթված:

Եկեք հավարանք այն իմաստասերներին, որոնք ասում են, որ միայն կրթվածներն են ազատ...

Էպիկտետ

Մտորե՛ք բնաբանի շուրջ: Իրա՞վ է, որ միայն կրթվածներն են ազատ: Ինչո՞ւ:

Նախորդ դասին կարծես թե հանգեցինք այն գաղափարին, որ հոգու ինքնախնամքի կարևոր մասնիկը կրթության և ինքնակրթության ձգտումն է: Դուք հիմա, դպրոցական նստարանին նստած, զբաղվում եք ձեր կրթությամբ՝ ձևավորելով ձեր հոգևոր աշխարհը: Ձեզանից շատերը պատրաստվում են նաև շարունակել իրենց կրթությունը տարբեր ուսումնական հաստատություններում, որպեսզի ձեռք բերեն մասնագիտություն:

Նկատե՞լ եք, որ երբ փոքր երեխային հարցնում են. «Ի՞նչ ես դառնալու», ակնկալում են որևէ մասնագիտության անուն լսել, ասենք՝ օդաչու, ուսուցիչ, դարբին և այլն: «Ինչ-որ բան» դառնալը զուգորդվում է մասնագիտություն սրանալու հետ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է այդպես:



Երևի դրա պատճառը պետք է տեսնել հասարակությունում նեղ մասնագիտական կրթություն ունեցողների պահանջարկի մեծացման մեջ: Իսկ իր մասնագիտության պահանջարկ ունենալ կամ չունենալը մարդու համար, որպես կանոն, դառնում է ինքնագնահատականի հիմք:

Մարդկանց մեծ մասն ինքն իր մասին մտածում է՝ ելնելով իր մասնագիտության պահանջարկից: Սակայն արդի աշխարհում մարդու կյանքի որակի և ինքնագնահատականի կախվածությունը ստացած մասնագիտությունից ծնում են նորանոր խնդիրներ բոլոր նրանց համար, ում մասնագիտությունը հասարակական սրընթաց զարգացումների արդյունքում սկսում է ցածր վարձատրվել, դադարում է լինել պահանջված կամ պարզապես վերանում է՝ իր տեղը զիջելով նոր մասնագիտությունների:

Առաջին վերելակների դռները մարդն էր չեռքով բացում-փակում, և կալին հարուկ վերելակավարներ, որոնք անում էին այդ աշխատանքը: Սակայն շուտով ավտոմատ դռներ ունեցող վերելակների հայրնագործումից հետո վերելակավարների կարիք այլևս չկար:

Իրավիճակն ավելի է բարդանում արդի տեղեկատվական հասարակությունում, երբ, կարծես թե ունենալով պահանջվող մասնագիտությունը, մարդը կարող է աշխատանք չգտնել, քանի որ նրա ստացած կրթությունը կարող է չհամապատասխանել արդի պահանջներին, պարզապես հնացած լինել:

Հարավոփոխ աշխարհի պայմաններին հարմարվելու և իր հնարավորությունները մեծացնելու համար լավ կլինի, եթե մարդն արդեն դպրոցական մատարանից իր մեջ մշակի ողջ կյանքի ընթացքում կրթություն ստանալու կամք և տրամադրվածություն:

Իսկ ինչպե՞ս հասկանալ ողջ կյանքի ընթացքում կրթվելու գաղափարը: Այն կարելի է հասկանալ մի քանի իմաստով: Առաջին, վերն ասվածի համատեքստում դա կարելի է հասկանալ որպես մի գործընթաց, որ հնարավորություն է տալիս մարդուն ցանկացած տարիքում փոխել մասնագիտությունը, ստանալ նոր կրթություն և ձեռք բերել այլ աշխատանք: Երկրորդ, ասվածը կարելի է հասկանալ որպես արդեն ընտրած մասնագիտության շրջանակներում անընդհատ կատարելագործում ողջ կյանքի ընթացքում, երբ մարդը մասնակցում է վերապատրաստման դասընթացների, տարբեր ծրագրերի՝ իր մասնագիտական հմտությունները խորացնելու, թարմացնելու, արդիականացնելու նպատակով: Ինչ խոսք, դա մարդուն հնարավորություն կտա համընթաց քայլել հասարակական զարգացումներին ու շարունակել մնալ պահանջարկ վայելող մասնագետ:

Բայց ողջ կյանքի ընթացքում սովորելու գաղափարն ունի նաև երրորդ՝ ավելի լայն իմաստ, որը վերաբերում է մարդու ինքնակերտմանն ամբողջությամբ և ոչ միայն առանձին մասնագիտություն ձեռք բերելու առումով: Այս մոտեցման դեպքում բոլոր մարդիկ առանց բացառության շարունակաբար պետք է աշխատեն իրենք իրենց վրա, պետք է բաց միտք ունենան կենսական հանգամանքների տարատեսակ համադրություններից սովորելու և հոգեպես ավելի ու ավելի հասունանալու համար: Այս մոտեցման դեպքում կրթությունն ու ընդհանրապես հոգու աշխատանքն ինքն իր վրա դիտվում է որպես արժեքավոր, կյանքն իմաստավորող ու նպատակով լեցուն գործընթաց:

Կրթություն ստանալը դասական դարաշրջանում համարվում էր սրբազան գործունեություն, ուսուցիչը՝ ակնածանքի արժանի էակ: Դրան հակառակ՝ շուկայական հարաբերությունների խորացման պարագա-



Մադենադարան



Երևանի պետական համալսարան

լորդ» գաղափարներով ծանրաբեռնելուց՝ սովորելով միայն այն և այնքան, որքան, իրենց կարծիքով, պետք է ապագա մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար...

Առաջին հայացքից թվում է, թե ասվածում ոչ մի բացասական երանգ չկա, այդ դեպքում որտե՞ղ է թաքնված ապամարդկայնացման վտանգը: Հասարակության զարգացումը նախորդ դարում շուտով ցույց տվեց նման մտածողության կաղապարվածությունը: Երբ տարբեր երկրներում իշխանության գլուխ էին գալիս նեղ մասնագիտական կրթություն ստացած մարդիկ, որոնք կայացնում էին ողջ հասարակության ճակատագրի վրա ազդող որոշումներ՝ չմտածելով անգամ այդ որոշումների բարոյական, մարդկային հետևանքների մասին, պարզ էր դառնում, որ նման ուղին տանում է փակուղի... Նախորդ դարը լի էր նման կարճճիտ քաղաքական որոշումներով, որոնց արդյունքում բազմաթիվ մարդիկ դժբախտանում էին, քանի որ միայն գործի տեխնիկական կողմի մասին մտածող գործիչները հաշվի չէին առել մարդկային գործոնն ու իրենց ընտրած ուղիների անմարդկային լինելը:

Ի՞նչ էր կարծում, ինչպիսի՞ մասնագետներ կդառնան նրանք, ովքեր դպրոցական ընդհանուր կրթություն սրանալու փոխարեն բավարարվում են երկու-երեք առարկա պարապելով: Ընդ որում՝ ուշադրություն դարձրեք, ոչ թե ուսումնասիրելով (ուսումնասիրել որևէ առարկա հնարավոր է միայն ընդհանուրի հետ ունեցած իր կապերի մեջ), այլ սուկ «անցնելով»: Սովորելու շնորհիվ մարդը չեւափորում է ինքն իրեն: Եվ այսրեղ կարևորվում է նաև սովորել սովորելը: Գուցե համեմատաբար ուշ է 12-րդ դասարանում անդրադառնալ սովորել սովորելու խնդրին, բայց, այնուամենայնիվ, քննադատաբար դիտարկեք չեք սովորելու եղանակները. արդյո՞ք դրանք արդյունավետ են, արդյո՞ք շար ժամանակ չեք հարկացնում մեխանիկորեն սերտելուն կարդալ-մտորել-իմաստավորելու փոխարեն: Արդյո՞ք կարողանում էք դասընթացում կամ կյանքում հանդիպող խնդիրները մասնատել ավելի փոքրերի ու լուծել դրանք հերթականությամբ, մաս առ մաս:

Սովորելու գործընթացը նման է սիրո: Ինչպես ասում է ռուս իմաստասեր **Ալեքսեյ Լուսևը**, սովորող մարդն ունենում է կապվածության զգացողություն և՛ այն ամենի հանդեպ, ինչ սովորում է, և՛ այն հոգատար մարդու հանդեպ, ով սովորեցնում է: Այն սովորողը, ով պարզապես զբաղված է գիտական գիտելիքների, տվյալների ու փաստերի կուտակմամբ, առանց ունենալու վերջնական նպատակներ ու առանց սիրո, լավ աշակերտ չէ: Մերը սիրելիի գաղտնիքին հասու լինելն է: Երբ դասավանդողն ինչ-որ բան լավ է պատմում, կամ գրողն ինչ-որ բան լավ է նկարագրում, ունկնդրի կամ ընթերցողի հոգում առաջանում է լուսավոր բավարարվածության զգացում: Այն մեզ մղում է գործունեության, նորի, անհայտի որոնումների, այն ակունք է տալիս մեր մտքի պրպտումներին: Մենք ձգտում ենք հասու լինել ճշմարտությանը, հասկանալ նորանոր գաղտնիքներ, որոնց իմացումը սիրող աշակերտին բերում է երջանկության ու բավարարվածության զգացում: Եթե գիտելիքների ձեռքբերումը չի առաջացնում ստեղծագործական գաղտնիքների բացահայտման մղում, ուրեմն դրանք կենդանի գիտելիքներ չեն, ուրեմն սովորելու գործընթացը հազեցած չէր սիրով ու նվիրվածությամբ:

Գիտությունը սեր է պահանջում ուսումնասիրվող առարկայի հանդեպ, իսկ սիրելու կարողությունը, ինչպես արդեն գիտեք, ենթադրում է սովորելու անհրաժեշտություն: Եվ առաջ է գալիս հետաքրքիր շրջան. եկեք *սովորենք սիրել, որպեսզի սիրենք սովորելը*: Մերը ծնունդ է տալիս նորին, իսկ նորի արարումը հեշտ գործընթաց չէ: Պետք է պատրաստ լինել ջանքեր ներդնելուն, երբեմն անիմաստ թվացող երկարատև ու ցավագին որոնումներին, քանի որ նորի ծնունդը պահանջում է մեծ նվիրվածություն: Սովորելու գործընթացում ամեն ինչ սովորեցնողից չի կախված, ընդհակառակը, *մարդն իրեն տրված ամեն ինչից սովորում է միայն այն և այնքան, որքան ինքն է հոգի դրել այդ գործընթացում*: Դեռ **Գալիլեո Գալիլեյն** էր ասում, որ հնարավոր չէ դրսից ինչ-որ բան պարտադրել մարդուն. մարդը սովորում է այն չափով, որքանով իրենում կա տրվածը վերցնելու ձգտում: Ուրեմն հիշեք, որ *սովորող մարդն ինքնուրույն է, նա արդեն պատրաստանալու է իր սրտացած կրթության համար*: Նույնիսկ դժգոհ լինելով ինչ-որ կրթական հաստատությունից, որտեղ ուսանում է, լավ սովորողը կարող է առավելագույնը քաղել իր ուսումնառությունից: Սիրելով սովորելու դեպքում իմաստավորվում է սովորելու գործընթացի ամեն մի պահը, ինչը հնարավորություն է տալիս ձևավորել ոչ թե քարացած, մեռյալ գիտելիքներ, բանաձևեր և այլն, այլ կենդանի, նորը ծնող, ստեղծագործելու հնարավորություն տվող գիտելիքներ, աշխարհի հանդեպ ներդաշնակ համընդհանուր հայացք, որի շնորհիվ ձևավորվում է հասուն, հոգատար ու պատասխանատու անձնավորություն:



Ալեքսեյ Լուսև

Պեպր է սովորել լինելու համար, քանի որ լինել սովորող նշանակում է լինել կենդանի մարդ:

Հարցեր մտորելու համար

1. Ի՞նչ է նշանակում «ողջ կյանքի ընթացքում սովորելու անհրաժեշտություն» արտահայտությունը:
2. Համաձայն եք, որ անցյալում կրթության դերը հասարակությունում այլ էր: Եթե այո, ապա ի՞նչն է փոխվել:
3. Հայկական ավանդույթը սրբացրել է մեր ժողովրդի մեծագույն ուսուցիչներին՝ Մեսրոպ Մաշտոցին և այլոց: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ:
4. Ի՞նչ է նշանակում լինել կիրք: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կապ ունի կիրք լինելը բարության հետ:
5. Արժևորո՞ւմ եք արդյոք ողջ կյանքում ինքնակրթությամբ զբաղվելու գաղափարը: Ինչո՞ւ:
6. Համաձայն եք արդյոք, որ սովորելու գործընթացը հազեցած է սիրով: Ինչո՞ւ:

Առաջադրանք

Մտորեք ձեր առաջիկա ծրագրերի մասին: Վերլուծե՛ք կրթությունը շարունակելու ձեր հեռանկարները դասում արծարծված գաղափարների տեսանկյունից: Մրաժնե՛ք, թե որքանով եք սիրում ուսման այն բնագավառը, գործունեության այն ձևը, որ ընդրել եք ձեզ համար: Փորձե՛ք համադրել ձեր ընկրության հասարակական կարևորությունը, տնտեսական կողմը և ձեր անձնական կապվածություն-սերը: Չրուցե՛ք առաջացած հարցերի մասին մեծահասակների հետ:



**Արցախյան հերոսամարտի նվիրյալ
Լեոնիդ Ազգալդյան**



Հ. Զարդարյան
Նախաշավիդ. Խաչատուր Աբովյան

Ք Ա Ռ Ա Ր Ա Ն

Ազնոստիցիզմ (հունարեն՝ a-ոչ, gnosis-գիտելիք) – իմացաբանական մոտեցում, որը սահմանափակ է համարում աշխարհը ճանաչելու մեր հնարավորությունը:

Ազատություն – մարդու հնարավորությունը վարվելու այնպես, ինչպես ցանկանում է: Տարբերակում են երկու տիպի ազատություն՝ ազատություն ինչ-որ բանից և ազատություն հանուն ինչ-որ բանի: Ինչ-որ բանից ազատությունն ինքնին դեռ կես ազատություն է, քանի որ կապանքներից ազատագրումը կարող է ծառայեցվել նաև բացասական նպատակների՝ քառսին, անկարգությանը, անբարոյականությանը: Հանուն ինչ-որ բանի ազատությունը ենթադրում է կարևոր արժեքների առկայություն, որոնց հետամուտ լինելու համար մարդուն հարկավոր է լինել ազատ: Տարբերակում են նաև ներքին և արտաքին ազատություն: Ներքին ազատությունը կարևոր է, քանի որ միայն հոգեպես ազատ մարդիկ կարող են սիրել և ձգտել բարոյական ինքնակատարելագործման: Արդի աշխարհում մարդու քաղաքական ազատությունների կողքին կարևորվում են տնտեսական և մշակութային ազատությունները, որոնք մարդու ինքնաիրականացման անհրաժեշտ պայմանն են:

Աշխատանք – միայն մարդուն բնորոշ գործունեության ձև, սեփական ներուժի իրականացում, դժվարությունների և աշխատանքի առարկայի դիմադրության հաղթահարման գործընթաց: Մարդն իր ներունակությունների մասին չի կարող իմանալ այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չի գործադրել աշխատանքի մեջ: Սովորելը և խաղի որոշ տեսակներ իրենցում պարունակում են աշխատանքի լուրջ բաժին: Աշխատանքը կոփում է մարդու կամքը, նպատակասլացությունը և բնավորությունը: Մանկուց աշխատանքի սովոր և աշխատասեր մարդիկ կյանքում հանդիպող դժվարություններն ավելի հաջող են հաղթահարում:

Աշխարհայացք – մարդու հայացքներն աշխարհի և կյանքի իմաստի վերաբերյալ: Աշխարհայացքի տարրերն են ընդհանրացված գիտելիքները, համոզմունքները, արժեքները, իդեալները:

Աշխարհայացքի դասակարգման մի քանի չափանիշներ կան: Ընդհանրության չափանիշով աշխարհայացքը լինում է անհատական, խմբային և համամարդկային: Պատմական զարգացման չափանիշով՝ անտիկ, միջնադարյան, նոր շրջանի, ժամանակակից: Տեսական հասունության չափանիշով՝ առօրեական և տեսական: Աշխարհայացքի տեսակներ են՝ դիցաբանական, կրոնական և փիլիսոփայաան աշխարհայացքները:

Արժեքներ –

հանգամանքներ, որոնք տվյալ մարդու կամ մարդկային հանրության կողմից կարևորվում են, համարվում ցանկալի: Դրանց հանդեպ մարդիկ դրսևորում են հարգանք ու գնահատանք: Արժեքները լինում են անցողիկ և անանց, հարաբերական և բացարձակ, նյութական և հոգևոր: Լիարժեք և նպատակամղված գործունեության համար կարևոր է, որպեսզի յուրաքանչյուր առանձին մարդ, խումբ, կազմակերպություն և հանրույթ ձևավորի արժեքների մտածված-մշակված համակարգ: Բարձրագույն արժեքներ են Աստված, Հայրենիքը, մարդը, ընտանիքը, գիտելիքը, արժանապատվությունը և այլն:

Գոյաբանություն – փիլիսոփայության ճյուղ, որն ուսումնասիրում է գոյության խնդիրները: Գոյաբանությունը քննարկում է *Ի՞նչն է իրական, ի՞նչն է ընկած աշխարհի հիմքում*: Այդ հիմքը փիլիսոփայության մեջ կոչվում է կեցություն:

Դեդուկցիա (լատ.՝ deductio) – բխեցում– մտածողության մեթոդ, որի դեպքում նախադրյալների բովանդակությունից եզրակացությունում բխեցվում է նոր գիտելիք: Օրինակ, *Ոչ մի բույս չի կարող պահպանվել տասը տարի առանց ջրի* մտքից մենք կարող ենք բխեցնել, որ ոչ մի կակտուս չի կարող պահպանվել տասը տարի առանց ջրի: Դեդուկցիան ինդուկցիայի հակառակ մոտեցումն է: Այս դեպքում մենք ընդհանուրից ենք գնում դեպի եզակին և մասնավորը: Դեդուկցիա մեթոդի ձևակերպումը կապված է հին հույն փիլիսոփա Արիստոտելի հետ:

Երջանկություն – լիակատար բավարարվածության վիճակ, երբ մարդը զգում է, որ ներդաշնակության մեջ է թե՛ ինքն իր, թե՛ շրջապատող մարդկանց և թե՛ ողջ իրականության հետ:

Ըստ էության, իդեալական վիճակ, որ իրական կյանքում սակավ է հանդիպում: Ոմանք երջանկությունը կապում են արտաքին հանգամանքների բարեհաջող դասավորման հետ, իսկ այլոք մտածում են, որ երջանկությունը մարդու կարողությունն է իմաստավորելու ապրվող պահը և արժևորելու ունեցածը: Գավիթ Անհաղթն օգտագործում է «բարերջանիկ» բառը՝ երջանկությունը կապելով առաքինության հետ: Իրոք, առաքինի մարդը, ըստ նրա երջանիկ է, քանի որ չի տրտմում անցողիկ ու անկարևոր հանգամանքների պատճառով, այլ ձգտում է պահպանել ոգու կայտառությունը:

Չանգվածային մշակույթ – հասարակության մեծամասնության, այսպես կոչված՝ զանգվածների մշակույթ, որի առանձնահատկությունն է կենցաղայինի, առօրեականի գերիշխանությունը, այսրոպեական արժեքներով բավարարվելը, ավելի բարձրին ու դժվարամատչելիին հասնելու ճիգից հրաժարվելը: Ըստ որոշ տեսաբանների՝ զանգվածային մշակույթին բնորոշ է անդեմ, համահարթեցված, միջինացված ու միանմանեցված մշակույթ, որին հատուկ է գաղափարների կաղապարայնացումը, դրանց անքննադատ յուրացումն ու ներքին հոգևոր կյանքի մակերեսայնությունն ու աղքատությունը: Արդի այլ հասարակագետներ, սակայն, գտնում են, որ զանգվածային է այն մշակույթը, որտեղ արվեստի և գիտության արդյունքները հասանելի են զանգվածներին, ի հակադրություն այն հասարակությունների, որոնցում մարդկանց լայն շերտեր զրկված էին այդ արդյունքների հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

Էլիտար մշակույթ – ի հակադրություն զանգվածային մշակույթի տիրապետության, որոշ իմաստասերներ խոսում են ընտրյալների՝ էլիտայի մշակույթի մասին, գտնելով, որ ցանկացած հասարակությունում կա նեղ ընտրյալ շերտ, որը ստեղծում է բարդ ու խորքային՝ ընտրյալ մշակույթ: Սակայն *Տարբերակում են փոփոխական, քաղաքական, գիտական և բուն մշակութային էլիտաներ:*

Էմպիրիզմ –

իմացաբանական ուղղություն, որը կարևորում է փորձի դերը գիտելիքի ձեռքբերման գործընթացում՝ հակադրվե-

լով ռացիոնալիզմի ներկայացուցիչներին: Հաճախ էմպիրիզմը նույնացվում է սենսուալիզմի հետ: Սենսուալիզմը առաջնային է համարում մարդու զգայությունները: Էմպիրիզմի ներկայացուցիչներ են համարվում 17-րդ դարի փիլիսոփաներ Ֆրենսիս Բեկոնը, Թոմաս Հոբսը, Ջոն Լոկը:

Իմացաբանություն (էպիստեմոլոգիա) – փիլիսոփայության ճյուղ, որն ուսումնասիրում է գիտելիքի էությունը: Իմացաբանությունը քննարկում է *Ի՞նչ գիտենք և Ի՞նչպե՞ս գիտենք* հարցերը:

Ինդուկցիա կամ մակածություն (լատ.՝ *inductio*) – մտածողության մեթոդ, որի դեպքում մասնավոր դեպքերի, փաստերի, առանձին առարկաների ուսումնասիրության հիման վրա կատարվում է ընդհանրացում, դուրս է բերվում օրինաչափություն: Օրինակ՝ տաքանալիս ընդարձակվելու հատկանիշը վերագրելով պղնձին, ալյումինին, երկաթին, անագին, կապարին, մենք կարող ենք եզրակացնել, որ տաքանալու հատկանիշը բնորոշ է մետաղներին: Ինդուկցիայի դեպքում միտքը եզակիից, մասնավորից գնում է դեպի ընդհանուրը: Ինդուկցիայի մեթոդի հեղինակը 17-րդ դարի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնն է: Ինդուկցիան մեծ տարածում ունի գիտական ուսումնասիրությունների ժամանակ:

Ինտուիտիվիզմ – փիլիսոփայական ուղղություն, որի հիմնադիրն է 19-րդ դարի ֆրանսիացի փիլիսոփա Անրի Բերգսոնը: Ինտուիտիվիզմը կարևորում է մարդու նախորդ փորձի, փաստական գիտելիքների պաշարի, տաղանդի վրա կատարվող հանկարծակի, անմիջականեզրակացությունները: Ինտուիցիան շատ հաճախ օգտագործում են որպես ներքին զգացողություն, ներքին լույս հասկացությունների հոմանիշ:

Ինքնություն – մարդու կամ մարդկային խմբի ներքին որոշակիությունն է, հենց այդ լինելու կերպը: Ինքնությունը բնորոշ է մարդուն, անգամ եթե չի գիտակցվում նրա կողմից: Ինքնության շնորհիվ մի մարդուն տարբերում են մյուսից: Գիտակցված ինքնությունն անվանում են նույնություն կամ նույնականություն: Տարբերակում են ինքնության անհատական, փոքր խմբային, ազգային և համամարդկային՝

գլոբալ մակարդակներ: Ազգային մակարդակում ինքնությունը կապվում է տվյալ պետության, քաղաքացիության, մշակույթի, պատմության, կրոնի և այլ հանգամանքների հետ: Գլոբալացման դարաշրջանում ինքնության պահպանումը դառնում է օրախնդիր:

Հիմնախնդիր –

հուն.՝ պրոբլեմ, դեռևս չլուծված խնդիր: Ի տարբերություն կոնկրետ գիտական հիմնախնդիրների, որոնցից շատերի լուծման ճանապարհով զարգանում են գիտությունը և տեխնիկան, իմաստասիրական հիմնախնդիրների լուծումները վերջնական չեն: Հիմնախնդիրը երբեմն անվանում են իմացություն չիմացածի կամ սկզբունքորեն անիմանալի մասին: Իմաստասիրական հիմնախնդիրները հարցեր են, որոնք իրենց վերջնական լուծումները չեն գտնում, քանի որ վերջավորի տեսանկյունից դիտարկում են անվերջը: Օրինակ՝ կյանքի ծագման, իմաստի, հավիտենականության, սիրո, երջանկության հարցերը հիմնախնդիրներ են, քանի որ վերջնական պատասխաններ չունեն, յուրաքանչյուր մարդ և սերունդ ճիգ է գործադրում իր լուծումները գտնելու և դրանց հավատարիմ մնալու համար:

Նպատակ –

մարդու գործունեության ակնկալվող արդյունքի ձևակերպում: Նպատակը պատկերացում է, տեսլական, որը մարդը ձգտում է իրականացնել: Այս կամ այն դիտավորություն իրականացնելու ճանապարհին մարդն օգտագործում է հանգամանքներ, որոնք կոչվում են միջոցներ: Իմաստասերները պնդում են, որ նպատակը չի արդարացնում միջոցները: Այսինքն, չի կարելի լավ կամ բարոյական նպատակների հասնելու համար դիմել չար կամ անբարո միջոցների: Նպատակը մարդկային գործունեության կերպը բնութագրող հասկացություն է, քանի որ առանց նպատակի մարդու գոյությունը կլիներ տարերային և անիմաստ գործողությունների քառ: Նպատակներ ընտրելը խոսում է մարդու բնույթի մասին: Եղել է ժամանակ, որ մարդու նմանությամբ մտածել են, որ բնությունն ու առանձին բնական երևույթներ նույնպես նպատակ ունեն: Երբեմն իմաստասերները խոսում են պատմության նպատակի մասին: Բնականաբար, պատմությունն ինք-

նին նպատակներ չունի, սակայն մարդիկ պատմական անցքերը վերլուծելիս պետք է կարողանան դրանցից համապատասխան եզրակացություններ անել:

Ռացիոնալիզմ –

իմացաբանական ուղղություն, որը կարևորում է բանականության դերը ճանաչողության գործում: Ռացիոնալիստները համարում են, որ մեր զգայությունները խաբուսիկ են, հետևաբար՝ գիտելիքի ձեռքբերման հարցում առաջնայինը բանականությունն է: Ռացիոնալիզմի ներկայացուցիչներ են համարվում 17-րդ դարի փիլիսոփաներ Ռեն Դեկարտը, Բենեդիկտ Սպինոզան, Գոտֆրիդ Լեյբնիցը և ուրիշներ:

Տեղեկատվական հասարակություն – մարդկային հասարակության զարգացման այն մակարդակը, երբ տեղեկույթը՝ ինֆորմացիան դառնում է նորի ստեղծման կարևորագույն գործոն, առաջ անցնելով այլ տնտեսական և մշակութային գործոններից: Տարբերակում են նյութի, էներգիայի և տեղեկատվության վրա հիմնված հասարակություններ: Տեղեկատվական հասարակությունում տեղեկույթը դառնում է մարդկանց հարաբերությունները կարգավորող ամենակարևոր հանգամանքներից մեկը՝ ծնունդ տալով, այսպես կոչված, տեղեկատվական պատերազմներին: Այս հասարակությունում առաջանում է վիրտուալ իրականություն, որն իր հետ բերում է պատասխանատվության նոր տեսակ ու, այսպես կոչված, կիբեր-բարոյականություն:

Ուսում –

գիտելիքների, հմտություն-կարողությունների, արժեքների նպատակադրված ձեռքբերման գործընթաց է, որում ուսումնառողի դերը շատ կարևոր է: Ուսման միջոցով մարդը գիտելիքներից բացի ձեռք է բերում այլ մարդկանց հետ միասին ապրելու և համագործակցելու կարողություններ, քաղաքացիական մասնակցության անհրաժեշտ որակներ, համամարդկային, ազգային-պետական, ժողովրդավարության հիմնարար արժեքներ և մոտեցումներ: Ուսումնառությունը, սովորելն ուսումնառողի աշխատանքն է, որը ենթադրում է կամային ճիգ, նպատակալացություն և ապագայի որոշակի տեսլական: Ուսումն առավել արդյունավետ է, երբ սովորողը ոչ թե պասիվ սպասողի դերում է, թե իրեն ինչ պետք է մատուցվի,

այլ հանդես է գալիս որպես ակտիվ որոնող և հիմնախնդիրներ առաջ քաշող: Ուսում ստանալու, կրթվելու իրավունքն ամրագրված է մարդու իրավունքների հռչակագրում և համաձայնագրերում որպես կարևորագույն իրավունքներից մեկը, քանի որ ներկա գիտելիքահեն հասարակությունում ուսումն առանձին մարդու հնարավորությունները մեծացնող անհրաժեշտ գործոն է:

Միրելի՛ աշակերտներ



Ահա և հասաք ձեր կյանքի և ուսումնառության հերթական հանգրվանին: Հուսով ենք՝ հաջողությամբ յուրացրեցիք «Հասարակագիտություն» առարկայի դասընթացը: Այն ուսումնասիրելու ընթացքում, ենթադրում ենք, ձեռք բերեցիք մի շարք կարևոր գիտելիքներ ու հմտություններ: Այդ գիտելիքները կարևոր են արդի աշխարհում տեղեկացված լինելու և կողմնորոշվել կարողանալու համար: Հմտությունները կարևոր են ինքնուրույն մտածողություն հանդես բերելու, նպատակներին հասնելու, ստեղծագործական կարողությունների զարգացման, հաղորդակցվելու և այլ մարդկանց հետ համագործակցելու տեսանկյունից:

Ինչ խոսք, մեր դասընթացի տված գիտելիքներն ու կարողությունները շատ կարևոր են, բայց ոչ պակաս, իսկ գուցե և առավել կարևոր են արժեքները: Հուսով ենք, որ մարդկայնության, արժանապատվության, հարգանքի ու փոխըմբռնման մի շարք կարևոր արժեքներ դարձել են ձերը: Արժեքներին հետևելը, ինչ-

պես արդեն գիտեք, ենթադրում է քաջություն, կամք, սեփական արժեքներին հարազատ մնալու կայունություն: Հեշտ է ասել, որ այս կամ այն արժեքն արդեն իմն է, ես այն կրում եմ, բայց դժվար է օրըստօրե, տարբեր իրադրություններում հավատարիմ մնալ այդ արժեքին: Հուսով ենք, որ ձեր սովորածը չի մնա դասարանի պատերի ներսում, որ ձեր ամենօրյա կյանքում, մարդկանց հետ առօրյա և գործնական շփումներում դուք կկիրառեք այն ամենակարևորը, որ այս դասընթացը բերել է իր հետ: Զսանմեկերորդ դարի մարդը պետք է ունենա բախումների դրական հաղթահարման, համագործակցելու կարողություններ, որոնց շնորհիվ թե՛ առանձին մարդու, թե՛ ողջ հասարակության կյանքն ավելի ներդաշնակ ու լուսավոր պահերով լի կլինի:

Կյանքում կլինեն առիթներ, երբ փորձության կենթարկվեն ձեր թե՛ աշխարհայացքը, թե՛ արժեքները: Մաղթում ենք հաստատակամություն և դժվարությունները հաղթահարելու կամք:

Բարի երթ...

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 3

ԹԵՄԱ 1. ԻՆՉ Է ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅՈՒՆԸ 4

ԳԱՍ 1. ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ:
 ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
 ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ 4

ԳԱՍ 2. ԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ
 ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ 8

ԹԵՄԱ 2. ԳՈՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ: ԻՍԱՑԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ԳԱՍ 3. ԻՆՉՆ Է ԻՐԱԿԱՆ 12

ԳԱՍ 4-5. ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՇԽԱՐՀԸ 16

ԳԱՍ 6. ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 22

ԹԵՄԱ 3. ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ 27

ԳԱՍ 7. ԻՆԴՈՒԿՑԻԱ 27

ԳԱՍ 8. ԳԵԴՈՒԿՑԻԱ 30

ԳԱՍ 9-10. ՔՆՆԱԳԱՏԱԿԱՆ ԵՎ ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
 ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ 32

ԳԱՍ 11-12. ԳԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 38

ԳԱՍ 13-14. ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՊԱՐԶՈՒՄ 40

ԹԵՄԱ 4. ԵՍ ՄԱՐԳ ԵՄ 43

ԳԱՍ 15. ՄԱՐԳՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ 43

ԳԱՍ 16. ՄԱՐԳ ԷԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ 49

ԳԱՍ 17-18. ՄԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
 ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱ 53

ԳԱՍ 19. ՄԱՐԳԸ ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԷԱԿ 63

ԳԱՍ 20. ԽԱՂԸ, ՈՒՍՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ
 ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ 69

ԳԱՍ 21-22. ՄԱՐԳԿԱՅԻՆ ԿԵՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ.
 ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐՁԱՆԿՈՒԹՅՈՒՆ 76

ԳԱՍ 23-24. ՄԱՐԳԿԱՅԻՆ ԿԵՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ.
 ՀԱՎԱՏ ԵՎ ՍԵՐ 83

ԳԱՍ 25. ՄԱՐԳԸ ԿՅԱՆՔԻ ԻՍԱՍՏԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ 93

ԹԵՄԱ 5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՐԴԻ ԳԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ.....	99
ԳԱՍ 26. ԳԼՈՔԱԼԱՑՈՒՄԸ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄԸ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ. ԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ.....	99
ԳԱՍ 27. ԳԼՈՔԱԼԱՑՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՐԱ.....	104
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ.....	109
ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ (ԹՐԱՖԻՔԻՆԳԸ) ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ԳԼՈՔԱԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ.....	109
ԳԱՍ 28. ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ	112
ԳԱՍ 29. ԻՆՉ Է ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ	117
ԳԱՍ 30. ԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ	123
ԳԱՍ 31. ՀԱՐԱՓՈՓՈԽ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.....	128
ԲԱՌԱՐԱՆ	134

ՄԻԼՎԱ ՍԱՐԳՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՍԵՐՈՒ ՀՈՎՍԵՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

12-րդ դասարան

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՎԱԳ ԳՊՐՈՑԻ
ԲՈԼՈՐ ՀՈՍՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Խմբագիր՝ Արտակ Սուրենի Ոսկանյան

Սրբագրիչ՝ Անահիտ Պապյան
Չափակի ձևավորումը՝ Նվարդ Հայրապետյանի
Շափակի ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի

Հեղինակները շնորհակալություն են հայտնում
«Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրինությանը՝ հանձնի
Վրեժ Մարկոսյանի և Լյուդվիգ Հարոյանի,
դասագրքում գունավոր ներդիր զետեղելու համար

Պատվեր՝ 1085: Տպագրանակ՝ 22000:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: 9 + 0,5 տպ. մամուլ:
Տառատեսակը՝ DallakTimeNew:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում